



Բ Ա Գ Ի Ն

Ե. ՏԻԼԻ 1966 ՆՊԵՐՇԵՐ

digitised by A.R.A.K.©

ԹԻԻ 11

پاكين

مجلة شهرية ادبية وفنية علمية
مدير المسؤول
السيد اريين كارنيك قزانهجيان

PAKINE
REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE
Propriétaire
Dr. A. KAZANDJIAN

Բ Ա Գ Ի Ն

ԱՄՍԱԳԻՐ

ԳՐԱՆԱԿՆՈՒԹՅԱՆ
ԵՒ ԱՐԻՒՅՑԻ

ՎԱՐՑ ԽՐԱԳԻՐ
Կ. ՍԱՍՈՒՆԻ

ԽՐԱԳԻՐՆԵՐ
ԵՉ. ՊՕՑԱՅԵԱՆ, Պ. ՍՆԱԳԵԱՆ

ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ
ԱՆԴԱՄՆԵՐ

Յ. ԳԵՂԱՐՅ

Յ. ՈՍԿՈՒՆԻ

Բ. ՓԱՓԱՅԵԱՆ

Վ. ՇԵՍՎԱՆ

ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՀՍՍԵ

G. SASSOUNI

Rue Sélim Boustany, Beyrouth - Liban

Հեռագրային թիվ 296898

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

ԵԴ. ՊՕՑԱՅԵԱՆ

Յ. ԿԱՐԱՊԵՆՑ

Ա. ՍԵՆՍԵ

Կ. ՍԱՍՈՒՆԻ

Լ. ՄԿՐՏՉԵԱՆ

Ն. ԶԱՐԻՆՈՒՏԵԱՆ

ԵԴ. ՏԱՄՆԱՊԵՏԵԱՆ

.....

«ԲԱԳԻՆ»Ի ԶՐՈՅՑՆԵՐԸ

ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԼՈՒՐԵՐ

17

Բագրու

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԳԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

Ս. ՅԱՐԻ, ԹԻՒ 113

ՆՈՅԱՐԱՐ 1960

ՊԵՐՏԻՐ

ԵՂՈՒԱՐԴ ՊՅԱՃԵԱՆ



Հոկտեմբեր 13-ին, իր աչքերը յախտնապէս փակեց Եղուարդ Պոյանեան

ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

Որ երգեց սէրը, վիշտը, հայրենիքը, մարդը, մահը ու կտակեց բանաստեղծական բոլորովին ինքնատիպ վաստակ մը.

ԳՐԱԳԷՏԸ

Որ իր գրչին լուսեղէն արօրով հոգը պեղեց եւ հայ գրականութեան մէջ կանգնեց պայծառ յուշարձան մը նշանին հողին աստուածութեան.

ՏԱՐԱԳԻՐ ՀԱՅԸ

Որ տեւական տագնապի մը վերածեց իր բովանդակ կեանքը եւ վերաւոր սրտով կազմեց տարագիրներում տագնապահար «Տումար»ը:


ԻՆՔՆԱՆԻՊ ԳԷՄՔԸ

Որ խորաքափանց իր մտքին պայծառ լոյսով լուսագրեց հայ գրականութեան պայծառանում դէմքերը եւ կռքող կանգնեց անոնց փառքին:

Երգեց, գրեց, ժանդակեց՝ Ուրիշումով, մոլեռանդութեամբ, քարմութեամբ եւ իր տարիքին ու տաղանդին լիութեան մէջ կը գտնուէր տակաւին, երբ ինկաւ քեւաբեկ:

«Բագին» դառն կսկիծով կ'ողբայ իր խմբագրին կորուստը:

Մեր Ձ. տարուան Ապրիլի թիւը ամբողջութեամբ պիտի նուիրենք մեր տարաբախտ ընկերացի կեանքին ու գործին:



ՅԱԿՈՒԲ ԿԱՐԱՊԵՆՑ

ՄԻ ՄԱՐԴ ԵՒ ԵՐԿՈՒ ՇԻՐԻՄ

Բեխաւորը ուշադրութեամբ զննեց հրովաքտակը, թերթեց, ստուգեց, հոտտեց, բան չհասկացաւ, սակայն անշափ տպաւորուեց: Վաճէին թուաց, թէ դիմացինը հեղուկացաւ: Այդպիսի թըշւատութիւն չէր տեսել կեանքում: Բեխաւորը դարձել էր մարդուկ: Նրա աչքի առջեւ տարուբերում էին «Արածնել Ինչ Որ Յանկանում է» բառերը: Կայծաղի արագութեամբ հասաւ կախարանին, գլխին դրեց դիմուարական գլխարկը, դուռին ամբարջեց եւ կրունկները միմիանց զարկելով՝ զգաստ կանգնեց Վաճէի առջեւ:

- Ձեր տրամադրութեան տակ եմ:
- Ուրեմն, գնանք, - ասաց Վաճէն:
- Ո՞ւր էք ցանկանում գնալ:
- Կենտրոնական բանտ:
- Ճի՞շդ լսեցի: Դուք կենտրոնական բանտ է՞ք ուզում գնալ:
- Այո: Կենտրոնական բանտ:

Կաշուէ դռները բացուեցին: Նրանք իջան փողոց: Բեխաւորը մի քայլ Վաճէից յետ մնալով շարունակ շողորմութեամբ էր նրան՝ պատահածը իւրապատուկ կատակի վերագրելով: Վաճէին հետաքրքրում էր Երեւանը, որը այդ պաճին արեւի ու ծաղիկի քաղաքի էր վերածուել: Միջոցը բուրում էր կեանքով: Ամէն քար ու աղիւսի վրայ նա տեսնում էր խնամքի դրոշմ: Գեղեցիկ էին Երեւանի քնակիւնները՝ թուխ ու բարեկազմ: Յետոյ նրան թուաց, թէ այս

քաղաքը իր ուրոյն զարկերակն ունի, միանգամայն տարբեր աշխարհի բոլոր քաղաքներից: Այնքան նիւթեղէն չէր Երեւանը, որքան ոգեղէն մի կութիւն՝ պոկուած դարերից ու միտմամանակ ներկայ հին դարերում: Նրան թուաց նաեւ, թէ հազորդակցում է ոչ միայն անցեալի այլ նաեւ ապագայի հետ: Ու ակամայից Հայաստանի վրայ զգաց Չարենցի շունչը, նոյնիսկ շօշափեց բանաստեղծի երգը, որ Հազարահնչիւն արձագանգում էր հեռու ու մօտիկ սրտերում:

Ես իմ անուշ Հայաստանի արեւահամ բառն եմ սիրում, Մեր հին սագի սղրաճուագ լացակումամ լարն եմ սիրում, Արմամման ծաղիկների ու վարդերի բույրը վառման, Ու ճայիրեան աղջիկների հեղաճկումն պարն եմ սիրում:

Բեխաւորը Վաճէին առաջնորդեց դէպի անպատուհան սեւ մի ինքնուշարժ: Շուռ եկաւ, մի պահ ըմբոշիւնեց մօտակայ պուրակում խաղացող մանուկների ժպիտը, ապա նստաւ ինքնաշարժ: Ամէն ինչ սեւ էր: Մեքենան շարժուեց, պտոյտներ գործեց եւ մօտ տաս րոպէ յետոյ կանգ առաւ:

Վաճէն իրեն գտաւ մի ոչ շատ ընդարձակ բակում, որի շուրջ պարսպանման գորշ պատեր էին բարձրանում՝ ահռելի խոտոշներով: Մի քանի պահակ-

ներ մտութենքը կտիւ հսկում էին մուտքի առջեւ: Այստեղ խոնաւ էր, նոյնիսկ ցուրտ: Կարծես գարունը եկել էւ բանտի պատերի տակ թռչնել էր: Բանտը շատ հեռու չպիտի լինէր քաղաքի կենտրոնից ու սակայն վաճէին Վրաց, թէ ինքը անսահմանօրէն կտրուած է Մրեւանից, որ այլևս չպիտի տեսնէր հայ մանուկների ժպիտը: Բեխաւորը առաջ ընկաւ ու պաշտօնական քայլերով առաջնորդեց վաճէին: Հեռաւոր խուլ տեղօցներ ու խելագար հոնդիւններ էին լսուում: Մի պահ կանգ առաւ եւ ականջալուր դիտեց շորս կողմը, ըստ երեւոյթին գերեզմանաքար կամ հողաթումբ տեսնելու ակնկալութեամբ: Պաղ քամի էր փչում հիւսիսից: Վեր նայեց նողկալի պատերին: Ինչո՞ւ են մարդիկ թանգարանների ու դպրոցների փոխարէն բանաւոր կառուցում, անցաւ նրա մտքով: Տեսնես քանի քանի անձեղ բանաստեղծներ, յեղափոխականներ ու մտքի մշակներ մարել են անհետ այս անլոյս նկուղներում:

Աստիճաններով բարձրացան մի մութ նախազաւիթ, որտեղից եւ երկու այլ բանաստեղծների առաջնորդութեամբ մտան նոյնքան մութ մի սենեակ: Նախ ոչինչ չկարողացաւ տեսնել վաճէին: Մի քանի վայրկեան յետոյ երբ իրերը իրենց դրոյթը ստացան, առաջին բանը որ նա նկատեց այդ պատերից խիստ ու խուլազարկու հայեացքներով իրեն նայող անտաղանդ նկարուած դիմանկարներ էին ինչ որ մարդկանց, որոնց աչքերում ինքնաստուածացման ինքնասպառ կերք կար: Նա նկատեց նաեւ, թէ ինչպէս բեխաւորը վիզը առաջ ցցած ինչ որ բաներ էր շնչում հաստափոր ու հիւանդ աչքերով մէկին: Նրա ականջին հասաւ միայն «փեշառ» բառը, որը ըստ երեւոյթին խորապէս տպաւորեց բանաստեղծին:

- Պարոն վաճանեան, ինչո՞վ կարող եմ ձեզ օգտակար լինել, - ասաց բանաստեղծը՝ սրճադոյն թաշկինակով աչքերի շրեքը մաքրելով:

- Ուղում եմ իմանալ, թէ Ձարենցը

ե՞րբ է զփխճանուել եւ ո՞ւր թաղուել:

- Համեցէք, - գլուխը խոնարհելով աթոռ առաջարկեց բանաստեղծը:

- Ես արտօնութիւն ունեմ Ձարենցի մասին մանրակրկիտ ուսումնասիրութիւններ կատարելու:

- Ձարենցը ասացիք, - այնպիսի չեղտով խօսեց բանաստեղծը, որ կարծես առաջին անգամ էր լսում նման մի անուն:

- Այո՛, Եղիշէ Ձարենցը:

- Դուք պրոֆեսոր էք, - հարցաքննեց բանաստեղծը:

- Ո՛չ:

- Շատ էք նման պրոֆեսորի: Ամերիկայից էք:

- Այո՛: Բայց...

- Էլ Մրեւանում տեղ չկա՞ր, որ որոշեցիք բանտ այցելել:

- Ես այցելութեան չեմ եկել, այլ...

- Այո՛, այո՛, ասացիք այդ Եղիշէ Ձարենցը... Ի՞նչ յանցանքով էր բանտարկուել:

- Յանցանք չունէր:

- Ինչպե՞ս էր:

- Բանաստեղծ էր:

- Բանաստեղծ, - դէժքին մտալլ իմաստութիւն տալով ասաց բանաստեղծը, - բայց ինչո՞ւ էր բանտարկուել:

- Ձդիտեմ, - գլուսկ վրդովմունքով վրայ բերեց վաճէին:

- Հետաքրքիր բան: Ես նման անուն չեմ յիշում:

- Միթէ՞ դուք չէք լսել պոէտի անունը: Զ Ա Բ Ե Ն Յ...

Բանաստեղծը իր թորչմած այտերը մի պահ արեւի մէջ առաւ, դէս ու դէն քայլեց, ապա իր մտաւոր ուժերը լարելով բացականչեց.

- Ա՛հ, ի հարկէ՛, պոէ՛տը, պոէ՛տը... Ձարենցի մասին է խօսքը, էլ ինչո՞ւ հենց առաջուց չասացիք...

- Ուղում եմ իմանալ, թէ ո՞ւր է թաղուած Ձարենցը:

- Ես չգիտէի, որ նա մահացել է:

- Այս բանտում է սպան... մահացել: Ո՞ւր է գերեզմանը:

- Գերեզմանը...
 - Այո, Չարենցի գերեզմանը,- զայրային կրկնեց Վահէն, - Ամերիկայից եկել եմ բանաստեղծի գերեզմանը տեսնելու:
 - Այսքան ճանապարհ մի գերեզմանի՞ համար...
 - Խնդրում եմ ասէ՛ք, ո՞ւր է թաղւած Չարենցը:
 - Վաստ՛հ էք, որ այս բանտում է մեռել:
 - Այո՛, այո՛:
 - Ինչի՞ց դիտէք:
 - Ամէն մարդ գիտէ:
 - Ես չգիտեմ, - հանդարտ ասաց բանտապետը՝ հայեացքը նետելով բեխաւորի վրայ, որը այդ պահին շուքի պէս դուրս սայթաքեց սենեակից:
 - Ինչպէ՞ս կարող է այս բանտում մեռած լինել եւ անգերեզման մնալ, - յուզուած բացականչեց Վահէն:
 - Ես էլ էդ եմ ասում, էլի...
 - Ինչպէ՞ս կարող է մարդ մեռնել եւ մահուան թուական չունենալ:
 - Ես էլ էդ եմ ասում, էլի...
 - Ինչպէ՞ս կարող է մեր ժամանակների մեծագոյն հայ բանաստեղծը անչիբրի՛մ մնալ:
 - Ես էլ էդ եմ ասում, էլի...
 - Դուք, ոչի՛նչ էլ չէք ասում:
 - Ատուած վկայ, - մեղապարտի տեսք ընդունեց բանտապետը:
 - Դուք չէ՛ք ուզում ճշմարտութիւնն ասել:
 - Ատուած վկայ:
 - Ինձ համար անչափ կարեւոր է ճշմարտութիւնը:
 - Ատուած վկայ:
 - Ես ուզում եմ ճշմարտութիւնը իմանալ:
 - Դուք կասկածո՞ւմ էք իմ անկեղծութեան վրայ, Պարոն Վահանեան, - ասաց բանտապետը եւ փորը զրկած կուշ եկաւ իր դորշ գրտտիգանի յետեւ:
 Վահէն ուժասպառ զլուխը յինեց աթոռին: Ինչ որ անանցանելի պատնէջի էր հանդիպել՝ թանձր ինչպէս մահը եւ անողոր ինչպէս մահը: Յետոյ իրեն թը-

լաց, որ դուրսն ու դարունը խաբուակ էին, որ երբեք զարուն չի եղել եւ երբեք ծաղկոնբրին չեն ժպտացել մանուկները: Ու զգաց պաղ վանդակների հետզհետէ սեղմուող օդակը իր հուժեան շուրջ եւ իր հուժեանից դուրս միլիոնաւոր անմեղների կեանքի շուրջ: Տնքոցնէլը շարունակում էին: Տենդահարի պէս գլուխը այս ու այն կողմ էր դարձնում: Յանկործ այդ բոլորի մէջ մի խելագար ճիչ՝ օրհասական ու վախճանական: Սպաննեցին Հայաստանին: Սպաննեցին բառը եւ բառի հետ նարեկացուն ու Գուշակին: Սպաննեցին բանաստեղծին: Ու կրկին տեսաւ Չարենցի վերջին պահը, զգաց վերջին շունչը եւ բերաւոր թրաշուշանների խամբումը: Ետեւրը խամբեցին անհիւրընկալ մութ նկուղներում: Ետեւրը կորան հեռաւոր ցուրտ տափաստաններում եւ ոմանք վերադարձան՝ տափաստանների ցուրտը իրենց հոգում:
 - Դուք հիւանդ էք, Պարոն Վահանեան, - մղձաւանջի միջից լսուեց բանտապետի ձայնը:
 - Ո՞ւր են մատենաները, - իրեն անհարազատ ձայնով խօսեց Վահէն:
 - Ի՞նչ մատենաներ:
 - Դուք մատենաներ պահո՞ւմ էք:
 - Այո: Մենք միշտ պահում ենք մատենաներ:
 - Ինձ պէտք են մատենաները:
 - Ո՞ր թուականի:
 - Յ՛ւրից Յ՛Ց:
 - Ուզում էք ստուգե՞լ, - պայծառացաւ բանտապետի դէմքը:
 - Այո՛, ինձ պէտք են մատենաները:
 - Այս վայրկեանիս:
 Բանտապետը ձեռքը տարաւ իր խոշոր ատրճանակի կողքին դօտուց կախւած բանալիների խուրձին, ջոկեց ժանդտած մետաղի մի կտոր եւ հանդիսաւորութեամբ բացեց սեւ մի պահարան: Թաշկինակով սեւակազմ մատենաների փոշին մաքրեց, ժպտաց, ղեղնասեւ ատամները ցոյց տուեց եւ խօսեց.
 - Ահա՛ մատենաները, Ինքներդ ըստուպէք:
 Վահէն դողոջուն մասներով բա-

ցեց 1934 թուի մատենանը: Առաջին էջը սպիտակ էր: Թերթեց երկրորդ էջը: Ապիտակ էր: Բացեց երրորդ էջը: Նոյնպէս մաքուր: Թերթեց չորրորդ, հինգերորդ եւ բոլոր էջերը: Մատենը դատարկ էր: Մէկ իսկ արձանագրութիւն չկար: Յետոյ բացեց 35, ապա 36, 37 եւ 38 թուականների մատենաները: Բոլորն էլ մաքուր գրքեր էին՝ լուռ, ճերմակ ու անբիծ:

- Դուք ինչ որ կատարեցէք անում ինձ հետ, - Վահէն խելակորոյս գէն շքւլըրոնց հաստափոր դատարկ մատենաները:

- Ո՛չ, պարոն Վահանեան: Այդ է որ կայ:

- Բայց սրանք մատենաներ չեն: Արձանագրութիւններ չկան:

- Ասացի չէ՞, որ Չարենցը այս բանտում չի եղել:

- Բայց այստեղ է խոշտանդուել:

- Այդպիսի բան չի եղել:

- Ո՞ր է Չարենցի դերեզմանը:

- Այստեղ չի մեռել որ դերեզման ունենար:

- Ես ճշմարտութիւնն եմ ուզում: Հասկանո՞ւմ էք...

- Ես էլ էդ եմ տում, էլի...

- Հասկա միւսնե՞րը:

- Ո՞ր միւսները...

- Միւս բանտարկեալները...

- Այս է որ կայ, Աստուած վկայ:

Մեր արձանագրութիւնների համաձայն Եղիշէ Չարենցը ո՛չ այս բանտում է եղել եւ ո՛չ էլ այս բանտում մեռել: Դուք անպատճառ օրալուծ էք: Ձեր լսածը անպատճառ սուտ է: Բացարձակ սուտ: Կարող է պատահել, որ հոգեւ մէկը իսկի էլ չի եղել:

Վահէն նայեց այդ մարդու ղէմքին եւ համոզուեց որ նա մարդ չէ: Նա լսել էր անմարդկային մարդկանց մասին, սակայն մինչ այդ քնաւ չէր հանդիպել մէկին: Նրան թուաց, թէ օրգանիզմի փոխարէն գիմացինը իր ներսում կրում էր ինչ որ ժանգոտած մետաղների կառոյց՝ անսիրտ ու անհոգի:

Բարձրացաւ եւ այն է պատրաստը-

ւում էր դուռը բացելու, երբ հայեացքը կրկին հանդիպեց բանտապետի հայեացքին: Չքայցել էր փափուկ, մեղկ ու ուզորմելի արտայայտութիւնը: Փոխարէն նրա դէմքից կանաչ դառնութիւն էր թափուում:

- Աստուած վկայ, - Վահէն կրկին լսեց բանտապետի ձայնը, երբ արդէն դուռը փակուել էր:

Նախագաւթից մէջի ու նեխուած դիակի հոտ էր գալիս: Մի պահ կարծեց, թէ սխալմամբ ստորերկրեայ մի կոյուղի է մտել: Մամոռս պատերից ժանգագոյն հեղուկ էր ծորում: Ծնչահեղձ մի կերպ իրեն զցեց բակ, ուր պարսպների ամէն մի խոռոչից իրեն էին նայում բիւրաւոր Չարենցներ՝ դունաստ ու խելագար:

Ոտնաձայն լսեց: Յետ դարձաւ: Մեռնակ էր: Հետապնդող չկար:

Բանտի պարիսպներից դուրս Հայաստանի գարունը կրկին պարուրեց Վահէին: Չմրուխտ էին հագել դաշտերը: Երկինքը կապոյտ էր: Լոյսի մէջ ստոտաձայնի մաքրութիւն կար:

Երկար ֆայլեց: Դայլեց դաշտերով, անցաւ գետի եզերքով, մտաւ մի ճանապարհ, որը նրան տարաւ դէպի մի ծաղկաւէտ մարգագետին՝ Թաւուտներով եղերուած: Հեռում արգիւհկան նոր շինութիւնների վիթխարի կմախքներ էին բարձրանում, իսկ աւելի ձախ, քաղաքը հասել էր Նորքին ու խուժել վեր: Վահէն կանգնեց ու դժայլանքով դիտեց տեսարանը: Մարգագետնում խայտում էր կիանքը: Մի խումբ պատանիներ փայլվուռն սոճիների շուրջին տակ զընդակ էին խաղում՝ կենսալի ճիշեր արձակելով: Թաւուտներից ազնիւներէ կարկաշուն քրքիջներ էին լուում: Ամենուր վաղը էր, ծիծաղ ու երիտասարդութիւն: Աւելի հեռուում՝ վարդենիների թուփերի մօտ մի վարդերեւ պարմանուհի երգ էր սովորեցնում մանուկներին: Ամէնից թովիչը հայկական ճընչիւններն էին, որոնք բխում էին մատուցալ կրծքերից, հողից ու Թաւուտներից

եւ լազուր երկնքից : Վահէին թուաց , թէ մի ինչ որ հեթաթային աշխարհ է ընկել , ուր տիրական կշռոյթը բերկրանքն էր : Նա մոռացել էր բանտն ու բանտապետին : Մոռացել էր քառակուսի բեթերով համազգեստաւորին եւ նրա հետ այն բոլորը , որը որեւէ առնչութիւն չունէր ժողովուրդի եւ հողի հետ :

Ծատկեց առուակի վրայից եւ մտաւ մարդագետին :

Ոստայի ճիւղերը բազմապատկուեցին եւ համանուագային տարածք ստացան : Եւ յանկարծ ամէն կողմից երիտասարդութիւնը խուժեց Վահէի կողմը եւ ժպտեցին օդակից նրան :

Շնչուղ աղաներ ու աղջիկներ էին , որոնք աչքերում թախիծ չկար :

- Դուք բանաստեղծին էք ուզում , - ասաց նրանցից տարեցը՝ հազիւ տասնութ տարեկան մի վահահան :

- Այո՛ , բայց դուք ինչի՞ց իմացաք , - գործացած պատասխանեց Վահէն :

- Բոլորը վարպետին տեսնել են ցանկանում , - ասաց վահահանը :

- Ուրեմն , դուք գիտէ՞ք Չարենցին . . .

- Եղբիչէ Չարենցը . . .

- Եղբիչէ Չարենցը , - արձազանդեցին միանկրը :

- Ուրեմն , դուք գիտէ՞ք Չարենցին , - երանութեամբ կրկնեց Վահէն :

- Չարենցը մեր բանաստեղծն է , - ասաց վահահանը :

- Մեր պատգամախօսը , - շարունակեց մի ուրիշը :

- Նայիրեան երգիչը , - աւելացրեց մի աղջիկ :

- Հայաստանի լեռների փոթորկաշունչ մրրիկը , - ձայնակցեց մի այլ պատանի :

- Ուրեմն , դուք գիտէ՞ք Չարենցին , - ինքն իրեն խօսեց Վահէն :

Ու յանկարծ տասնեակաւոր երիտասարդ կրծքերից բարձրացաւ երգը , հասաւ սոճիների կատարներին եւ տարածւեց երկրի վրայ :

«Եւ սրտի փռփռութեւն ունի իմ կրծքում պոպոյատ զպայանակ ,

«Անծանօթ էր կեանքում ինձ համար
ամենայն վարանում ու տհ ,
«Մեր երկրի արի այրերից կազմեցի ես
մեծ մի բանակ ,
«Եւ մեր սու զրօշի վրայ գրեցի
«Հայրենիք կամ Մահ» :
«Գնացիմ նախ , այդ արի զինուորները ,
երկիրն Աւետեաց ,
«Տիրում էր այնտեղ բռնութիւն , եւ
նճիր , եւ կեանք անագաստ ,
«Դնացիմ նախ՝ սրբելու մեր շէմֆից
նախատիմք ու լաց ,
«Բայց երկիրն արեամբ ողողեց
տագնապառ Արքան այն գագաւն» :
.

Թէ՛՛՛ ու խանձուած բառերը երկաթէ հարուածների պէս իջնում էին Վահէի քունքերին , քանդում նրա դանկը եւ խոր ակօսներ բացում նրա հոգու դաշտում : Վառօղի կծու ծուխ զգաց ունեւէրին եւ իր շուրջ ժպտուն աչքերի փոխարէն խոժոռ , մութ սլաքներ , յար ու նման զեղնած լուսանկարներում տեսած յայտնի ու անյայտ հայուկների օրհասական արտայայտութիւններին : Նայեց մարդագետին թաւիչին եւ թաւուտներից դուրս կոշտ ու ամենէի լեռնաշխարհին , որի ամէն մի բուռ հողը յազեցած էր հին ու նոր հայերի արիւնքով : Մղկտաց սիրտը , սակայն ճիզ դարձ դրեց զօպելու իր արտասուքը :

- Վարպետը միշտ մենակ է , - լռութիւնը խզեց վահահանը :

- Ես իր շիրիմն եմ ուզում տեսնել , - ասաց Վահէն :

- Եիրբ՛՛մը . . .

- Եիրբ՛՛մը . . . - արձազանդեց պատանիների խումբը :

- Այո՛ , ես Ամերիկայից եկել եմ ուխտի Չարենցի գերեզմանին :

- Չարենցի գերեզմանին . . .

- Այո՛ , Չարենցի գերեզմանին :

Յոյզի մի ախիբ անցաւ հոգիներից :

- Մակայն ոչ ոք չգիտէ Չարենցի գերեզմանը , - ասաց վահահանը :

- Բայց դուք , ջիչ առաջ . . .

Կրկին յոյզի ալիք անցաւ մարդագետնով :

- Մենք կարծեցինք, թէ դուք Մե- նակեաց Վարդեանին էք ուզում տեսնել, - ասաց Վահագնը:

- Մենակեաց Վարդեանը, - հար- ցական չորս դին նայեց Վահգն:

- Նա այնտեղ է՝ ստուերների տակ: Միշտ այնտեղ է, մենակ իր թղթերի հետ:

- Ուրեմն, դուք չգիտե՞ք Չարենցի գերեզմանը:

- Մենք գիտենք Չարենցին:

- Այո, դուք գիտե՞ք Չարենցին:

- Վարդեանին հարցրէ՛ք: Նա եղել է Չարենցի ընկերն ու դրչակիցը: Եթէ կայ մէկը որ գիտէ, այդ Վարդեանն է:

- Իրապէ՞ս, - լուսաւորուեց Վա- հգնի գէմքը:

- Վարդեանը բանաստեղծ է: Նա գի- տէ, - ասաց Վահագնը՝ դէմքին լուսէ մի պռակ:

Վահգն թեքուեց դէպի ծաղկաւէտ բլուրները եւ չինարիների տակ կանչ առաւ: Այստեղ խաղաղութիւն էր: Մի հինաւուրց կոնցի վրայ նստել էր նահա- պետատեց մի մարդ, որը Վահգնին յի- շացրեց Գուրգէն Մահարուն: Նոյն լայն ճակատը, նոյն խորթփախանց, բարի աչքերը, նոյն վշտահար, իմաստուն կենդանիները եւ նոյն հպարտ, ժայռուտ քիթը, տիրական ու անտոբիլ ինչպէս բերդ: Ապիտակ շապիկի տակից երևում էր նրա թուխ կուրծքը: Դեռ չհաղորդը- ւած Վահգն զգաց բանաստեղծի ներկա- յութիւնը: Զգաց, որ ճանաչում է նը- բան, որ նրա հետ բաժանել է մի ամ- բողջ ժողովուրդի խնդն ու տնքոցը եւ ժամանակի սենն ու սպիտակը: Ինքը վտարանդի թափառալիցի, իսկ նա ան- կորնչլի խաբխիս, խօսքի հրարուխ եւ տատապանքի լիծ: Օրհնուած լինի հո- ւր, որ բանաստեղծ է ծնում:

Վահգն աւելի մօտեցաւ:

- Վարդեան...

Կարկամել էր: Մական գիտէր որ բանաստեղծը գիտէ: Իր վերջին ապակե- նը: Նահապետը ամենայն մարդկայնու- թեամբ դիմաւորեց նրան:

- Բարե եկար, երիտասարդ, - ա-

սաց նա, իր հսկայ ափերի մէջ առնելով նրա աչքը:

Վահգն խօսեց իր առաքելութեան մասին:

Եւ այլևս նրանք չխօսեցին:

Բանաստեղծը նրան առաջնորդեց չոր կամաններով դէպի բարձունքները, ուր քամին մուկիկ խաղեր էր խաղում: Այ- լիւս քարերի աշխարհ էին ընկել, հըս- կաների գուպարից անխնայ ոտնահար- ւած ժայռակոյտեր, որոնց արանքից երբեմն գլուխ էին ցցել յամառ ու ան- չիւրընկալ մացառաթուփեր: Թեւերը մէջքին կանթած եւ քիթը կրկինք ուղ- ղած՝ առաջ էր քայլում Բանաստեղծը: Վարը՝ բարձրների գօտուց ներս, ծը- փում էր Երեւանը՝ մերթ ընդ մերթ մա- յրլցելով վեր: Ահուլի ու սիրելի կրկիր, մտածեց Վահգն, զո հողին անգամ քա- բացած բողոք է: Բանաստեղծը գնալով մթաղնում էր: Նրա այտերը կախուել էին՝ զառամեալ առիւծի կերպարանք տալով նրան: Նա արագացրեց քայլերը, որպէսզի երիտասարդը չնկատի իր պըղ- տոր աչքերը:

Վահգն չգիտէր ժամանակը: Զգի- տէր օրը վաղրկեա՞ն էր, թէ յաւիտենա- կանութիւն: Գիտէր միայն, որ իր գրա- յարանները գերմարդկային սրութիւն էին ստացել, որ այդ գերդասնութեան մէջ նա տեսնում էր անտեսանելի, շօ- շափում անշուշափելի եւ լուսւմ անյսե- յին: Նա նոյնիսկ զգում էր քարակոյտե- րի բոյրը, դաշտերի, քաղաքների, գիւ- դերի, երկնքի ու արեւի հոտը: Նա ըզ- դում էր Հայաստանի իւրայատուկ հո- տը: Այդտեղից Հրապարակը արծաթ էր, իսկ Մատիսը՝ ջողաւոր մի առասպել: Երեւանի վրայ գորշ-կապտաւունն մշուշ էր իջել:

Քաղաքի ճայնը դնալով մարեց: Այժմ միայն քամին էր, քարերի համբ տնքոցը եւ երբեմն աներեւակայելի ա- բազութեամբ սուրացող ծիտերի թեւերի շառաչը:

Միք բանաստեղծը երիտասարդական աւելնով առաջնորդում էր:

Ո՞ր ենք գնում, ինքն իրեն հարկու-

բերորդ անվամբ Հարց տուեց Վահէն: Ինչո՞ւ չի խօսում Վարպետը եւ ինչո՞ւ նրա աչքերի թացը: Հայեացքը չէր կարողանում հեռացնել նրա կըուած ուսերից, որոնց վրայ կարծես Հայոց Պատմութեան դարերն էին նստել: Ու մի պահ Վահէին թուաց, թէ այդ մարդը, այդ բանաստեղծը մարմնացումն էր Հայաստանի հին ու նոր երազների, որ նրբանով ու նրա մէջ ապրում են Քորենացին ու Նարեկացին, որ նրա շնչով յաւէտ շնչում են Արտեմանն ու Նալբանդեանը եւ որ նրա երգով երգում են Միամանթունն ու Վարուժանը, Ահարոնեանն ու Պարոյր Սեւակը: Կարծես նա՝ ինքը Հայ Ժողովուրդն էր, Հայ անցեալն ու ներդանն եւ պատգամախօսը ապագայի:

Քամին Հարուածում էր շարունակ: Բանաստեղծի շապիկն ու լայն շալվարը առագաստի պէս ծածանւում էին: Ամենուր գծերը սուր էին, գոյրը ու անհանգիստ: Բնութիւնը զերծ էր մեղմ կորուսիւններից: Ամէն ինչ սանդղան էր մի յանկարծակի ցասումից եւ զարացել՝ մի անկրկնելի ցասումով: Եւ Հայերը եկել ու կառչել էին այս զարեւոյն:

Կանգ առան: Բանաստեղծը թաշկինակով ճակատի ու վրի ջրտինքը մաքրեց:

Հասել էին մի կէտի, որից այն կողմ դահլիճի անդունդն էր:

Այստեղ տափարակ մի գազաթ էր, ուր անակնկալօրէն անդորր էր տիրում: Կարծես բացօթեայ մեհեան լինէր: Համակ լուսիւն: Կեանքն ու աօրեան մընացել էին վարը: Այստեղ շարունակուող աղօթք էր, մի անեղծանելի դաշն երկնքի հետ: Արեւը պտտել էր ամպերի կուրծքը եւ ճառագել բարձունքի վըրայ, ինչպէս աստուածային լուսամփոփից ծորող լոյսի շող: Անէացել էր Վահէն:

- Դու Պարենցի գերեզմանն ես ուղում տեսնել, - խօսեց բանաստեղծը:
- Այո: Պարենցի գերեզմանը:
- Ինչո՞ւ, - ասաց բանաստեղծը՝ աչքերում խորանային մթութիւն:

- Ես պէտք է դիտենամ, թէ ուր է գտնւում Պարենցի շիրիմը:

- Ինչո՞ւ, - ասաց բանաստեղծը՝ աչքերում խորանային մթութիւն:

- Որպէսզի կարողանամ ապրել: Բանաստեղծը դարձաւ, Հանդիսաւոր կերպով չորս դին նայեց, ապա հարեացքը Մասիսին ուղղած խօսեց ծանր ու Հանդարտ:

- Տեսնո՞ւմ ես Արարարը, տեսնո՞ւմ ես այս լեռնաշխարհը, այս դաշտն ու ճաղաքը, այս դետերն ու այգիները, այս մացաններն ու քարերը, այս բոլորը մի մի շիրիմ, մի մի կոթող են Պարենցի Համար: Քանի՞ քանի՞ Հայ եկեղեցիներ կան աշխարհում, քանի՞ քանի՞ Հայ դպրոցներ, Համալսարաններ, Թանգարաններ ու զրազարաններ կան աշխարհում... այդ բոլորը մի մի շիրիմ, մի մի կոթող են Պարենցի Համար: Քանի՞ քանի՞ Հայ գրողներ, բանաստեղծներ, երգիչներ ու արուեստագէտներ կան աշխարհում... նրանցից իւրաքանչիւրի գործը մի մի յուշակոթող է Պարենցի Համար: Դու Պարենցի շիրիմն ես ուղում, երիտասարդ, ճիշդն ասած չդիտես... արհաւիրքի օրեր էին... լուսապայծառ շատ կեանքեր խամբեցին, շատերը կորան աքորում, շատերն էլ արմատախիլ եղան դեռ իրենց հոգու ծիւղերը շարձակած... շիրիմների հետ պղծուեցին դարաւոր սրբութիւններ եւ այդ սրբապղծութիւնների հետ մարեց նաեւ Պարենցի կեանքը... մարեց մեր ամբողջ Ժողովուրդի լոյսի ճրագը... եւ սակայն Պարենցի վերջին շնչի հետ անմահացաւ նրա խօսքը եւ բոլոր արեւի պէս տաքացրեց հոգեվարքի մթութեան մէջ սառու Հայ հոգիները... դու Պարենցի շիրիմն ես ուղում, երիտասարդ պանդուխտ... քանի՞ միլիոն Հայ կայ աշխարհում... երե՞ք, չո՞րս, հի՞նգ... իւրաքանչիւր Հայ, եւ ամէն մի Հայի հոգի մի մի կոթող է Պարենցի Համար, որովհետեւ Պարենցը ինքը Հայութիւնն է՝ Հայաստանը... եւ այդ աւելի մեծ կոթող է, քան ճարտարապետական վսեմագոյն կառույցը... եւ Պարենցի շիրիմը չգիտեմ...

Բանաստեղծը մի անգամ եւս արտասուաթոր աչքերով նայեց Արարատին եւ ապա գլխահակ Հեռացաւ:

Բարձունքում մնաց Վահէն՝ մենակ ինչպէս Աստուած: Խօսքը դարձել էր լոյս եւ իջել նրա սրտին: Ճշմարտութիւնը այնքան պարզ էր, որ զարմանում էր, թէ ինչո՞ւ մինչ այդ չէր մտածել այդ մասին: Նայեց Հետզհետէ Հեռացող բանաստեղծին եւ զգաց որ Չարենցը կենդանի է նաեւ ի՛ր մէջ, ի՛ր ատապանքների ու երազների մէջ:

Ու յանկարծ կեանքը տհու՛յն կրթով ուռճացաւ իր երակներում: Զգաց իր էութեան դաշնը այս աշխարհի եւ տիեզերքի հետ: Իոց էր Հոսում իր արեան փոխարէն: Արեւը մօտեցաւ եւ վիթխարի սկաւառակի պէս կախուց նրա գլխին: Գամբները մոլեգնեցին եւ ոպտոնացին առեւանգել նրան: Պարզ ու մեկին լսեց Հոգի կանչը, ժողովուրդի հեղք եւ Հոյսասանի թաղաքների ու գիւղերի Համբարը եւ այդ բոլորի մէջ դճուղ-զուռնա: Թմրուկի կշռոյթը զնարով ամենի տարածք տոացաւ, իսկ սրինգի գիւ ճիւղը արձագանդեց լեռներում: Վահէն ծնօթը վեր ցցեց, աչքերը փակեց եւ թեւերը ապրածեց արեւելքից արեւմուտք: Նախ մասնները ինքնաբերաբար շարժուեցին, յետոյ գլուխը օրօրեց, ապա մի Հրաշալի ոտիւն զործեց:

Ու սկսեց պարել:

Նրա ազդի պէս ձիւ մարմինը երբեմն օրօրում էր՝ հեղ ու ճկուն ինչպէս ուռննու շիւղ, աղա պրկում նոր խոյանքների համար: Մերթ դոփում էր հողը, արշաւում իր ուղեծիրի շուրջ, մերթ արձանանում՝ անշարժութեան մէջ աւելի մեծ կիրք ու ոպասում: Յետոյ ցատկում էր, դառնում, Փշշացնում ու տնքում, ապա նորից երեւում միջոցում՝ ինչպէս երկնքից իջնող աւազին մի Հրահաւ:

Ոչինչ չէր զգում Վահէն: Նրա միջից պարպուել էր անդուհանքի մաղձը եւ այժմ նրա մարմինը դատարկ անօթի պէս լեցւում էր կեանքի գինիով: Մափ տուեց յանկարծ եւ իր ստեղծած շառա-

լի ուրիշից վերաբորբոքուեց նրա ներքին շարք: Բերանը բացեց ու դիւահարի պէս ազդողակեց ու կրունկը Հոգի մէջ խրելով սկսեց մի խենթ պոռոյտ՝ փոշու անասելի ամպ բարձրացնելով: Զբացել էր տարածութիւնը: Կանգնել էր ժամանակը եւ լճացել դիտակցութիւնը: Ինքն էր ու Հայաստանը եւ լեռնային էր մենաւոր պարը:

Կտրուեց դճուղ-զուռնայի ձայնը: Վահէն ցուլի պէս տապալուեց գետին՝ սպառուած ու բրտնաթոր:

»

Ծաղկեպսակների բուրմունքը սթափեցրեց Վահէին: Ձէր յիշում թէ որքան ժամանակ էր չորած եղել ձոն Ծիցճեւրայտ Ֆենետի շիրիմի առջեւ: Երբ վեր բարձրացաւ, սաստիկ ցաւ զգաց ծունկերի վրայ: Ինզրիդի հետ շատերը արտասուում էին: Վահէի ճակատի վրայ ջրտինքի կաթիլներ կային: Գունատ էր եւ զէմքը աւելի էր երկարել:

Իլուրդից վար, Մէմորիել կամուրջից այն կողմ հանդիսաւոր լրջութեամբ նստել էր Լինթոյնի Հոյակապ յուշակոթողը՝ աչքը յառած Ուսինիթների սպիտակ համայնապատկերի վրայ:

Վահէն աչքի տակով նայում էր Ինզրիդին եւ ջանում մտաբերել, թէ որտեղ է հանդիպել աւատրօ-գերմանական այդ գեղեցկուհուն: Սակայն կար աղջկայ ձեռքը իր ձեռքում: Ծւ ալքանը բաւական էր վերահաստատելու դաշնը: Նա վստահ էր, որ մի տեղ, վայրկեաններ, թէ դարեր առաջ հանդիպել էր Ինզրիդին եւ սիրել նրան: Նրան շիրթութեան մատնոցը այդ անորոշ անձանօթի գիտակցութիւնն էր, որը խորանում էր իր մէջ, որքան աւելի խորն էր սիրում աղջկան: Իրենց միջեւ զգայական շաղկապը անմիջական էր՝ մերկ, անկեղծ ու աստուածօրէն անամօթ: Երբ խնդիրը դառնում էր կեանքի հոգե-մտաւոր ծալքին, ապա Հասնում էին իրար, Հասկանում միմեանց եւ նոյնիսկ լուռ Հաղորդակցում, սակայն այդ բոլորի մէջ, ամենամտերիմ պահին, երբ պիտի կա-

տարեալ լինել մերձեցումը, յանկարծ շղիտեա որտեղից Վահէի մօտ գլուխ էր բարձրացնում հայը եւ իր իրերամերժ գլանի տակ խորտակում ամէն ինչ: Եւ մի ակնթարթում Ինգրիդը դառնում էր օտար:

Հրատեչտ տունն նահատակ առաջնորդին:

Արլինկթընի ազգային գերեզմանոցում քանի՛ քանի՛ մարտիկներ են հանգչում, քանի՛ քանի՛ ճակատամարտերից աւել կայ քարացած այս անհամար շիրմների տակ, մտածեց Վահէն եւ պատկերացրեց աշխարհի բոլոր շիրմների տակ ննջող միլիոնաւոր զինուորների մեռելային բողբոջ:

● Որչափ տհա՜ս է մարդկութիւնը, ինքնիրեն խօսեց Վահէն:

Ինգրիդը գրկեց նրա մէջքը եւ փորձեց աչքերով մխիթարել նրան:

Անխօս քայլեցին վար, անցան կամուրջը եւ թեքուեցին դէպի գետնակերպ: Այստեղ Փըթմաքի կողը ճեղքել եւ բերել արհեստական մի լճի մէջ էին ամփոփել գետի յորձանքը: Դիմացում ճերմակ յուշակոթողի սիւների արանքից երևում էր ձեֆըրտնի սեւ, պարթեւ արձանը: Ճապոնական ծաղկատու կեռասնիների վարդագոյն մի փառասուն էր ամենուր, շնաշխարհիկ մի անվերջ շուրջպար, որի մէջից աղաղակում էին արնագոյն ազալիաները: Կեանքի կշռոյթը ա յատեղ մեղմ էր: Յարաչարժ ամերիկացիները կարծես մտել էին Մոնէի եւ Պիտարոյի պատասանների մէջ եւ անսպասելիօրէն վիպականացել:

Նստեցին մի ծեր սուենու տակ՝ վարագուրուած աշխարհից: Կարծես մի հնարամիտ սիրահարի գործ լինէր ծառ՝ թափուող ճիւղերի մի վիթխարի հովանոց, որի ներքոյ մեհեանային մեռուսացում էր տիրում: Հոգի բուրմուռքը թնամբ էր այտեղ: Ինգրիդը աղջնակի պէս շիրթուեց եւ քնազոմամբ ձեռքը տարաւ կրծքին՝ պաշտպանուելու միտումով: Երբեք այսքան մօտ չէր եղել Վահէին, մեծակ, բնութեան գրկում: Երբեք այսքան շեշտակի չէր զղացել

նրա ներկայութիւնը իր կեանքի զենթութում եւ անորոշ ցաւը, որը գնալով կարծրանում էր, դառնում գիտակցութիւն:

- Որքան անդորր է այստեղ, - ասաց Ինգրիդը գլուխը յենելով Վահէի ուսին:

- Մենք չպիտի այցելէինք գերեզմանը, - մտացրիւ խօսեց Վահէն՝ հայեացքը անորոշ մի կէտի յառած:

- Ինչո՞ւ...

- Հիմա գիտեմ որ նա մահացել է:

- Քեզ տանջո՞ւմ է այդ գիտակցութիւնը:

- Հիմա գիտեմ որ նա ոչ եւս է:

- Գիտե՞ս Վահէ, դու անչափ դեր-զգայուն ես դարձել:

- Նա ինձ այսպէս դարձրեց:

- Ո՞վ...

- Ձարենցը:

Բանաստեղծի անունը սարսուռ պատճառեց Ինգրիդին: Ուզում էր, որ Վահէն ինչ-որ հրաշքով պարպուէր Զարենցի տիրապետութիւնից եւ դառնար ամբողջովին իրը: Գլուխը թաղեց նրա լանջում եւ լուռ հեկեկաց:

- Քեզ ի՞նչ պատահեց Ինգրիդ: Դու խեղճ ես:

- Վահէ...

- Դու արտասուում ես:

- Քեզ սիրում եմ, Վահէ'...

Վահէն իր մէջ զգում էր ճանապարհների յոգնութիւնը: Ծերացել էր հոգեպէս: Նրա բերանի շուրջ խառացել էին ակօսները: Հեռաւոր մեծութիւնը իր բոլոր գիշերները շալակած արշաւել էր նորից, այս անգամ բացարձակ որբութեան սառույցէ մագիլներով:

Իր ջղուտ ձեռքերի մէջ առաւ Ինգրիդի գէմքը, կոյրի գերզգայուն շօշափումով պեղեց նրա իւրաքանչիւր դիմադիծը եւ թեքուելով համբուրեց աղջըկայ բերանը, նախ հաղորդութեան պէս թեթեւ ու եթերային, ապա հետքահատէ աւշոտ ու բոցեղէն: Համբոյր չէր կարծես, այլ կեանքին կառչելու օրհասական մի ճիգ՝ անհուն պարապը լեցնելու վերջին մի կամուրջ: Ինգրիդը չէր

չնչում: Աշքերը փակ յանձնուել էր յոր-
ձանուաներին՝ կառչելով նրա վզից: Վաճէի կրծքի նրաբուխը այրում էր իր
կուրծքը: Տզայի էութիւնից բորբոքուող
խարսկում էր նսեւ իր էութիւնը: Տեն-
դահարի պէս գլուխը օրօրեց խոտէ բար-
ձի վրայ, նւագ վերաւոր թռչունի պէս,
ապա բռնելով վաճէի ձեռքը տարաւ իր
սահնքի վրայ:

- Վաճէ՛... .
- Ինչքի՞ք... .
- Վաճէ, ես քեզ անշափ եմ սի-
րում... .
- Քեզ սիրում եմ Ինչքի՞ք... .

Ինչքի՞ք դարձաւ, երկար նայեց
Վաճէի աչքերին, ապա խօսք չգտնելով
Հպանցիկ համբուրեց նրան: Յետոյ
կրկնեց համբուրը: Նորից համբուրեց եւ
յանկարծ ինչպէս ճրագի շուրջ զարժող
թիթեռ սկսեց խննթօրէն համբուրել նը-
րա բերանը, այտերը, աչքերը, ճակատն
ու մազերը, ամէն անգամ աւելի այրե-
լով իր թեւերը եւ ամէն անգամ աւելի
բուռն կերպով կառչելով տզայի շըր-
թունքներին:

- Ես ուզում եմ, որ քո կեանքը շա-
րունակուի իմ կեանքի մէջ, - ասաց Ին-
չքի՞ք՝ հայեացքում նորարոգորջ մայ-
րութիւն:

- Ես ուզում եմ, որ այս պահը ան-
մահանայ, որ դառնայ անկրկնիչի ու
անսպառ, - ասաց Վաճէն շոյելով նրա
ցորենագոյն հերքը:

- Ես ուզում եմ, որ քո կեանքը հո-
սի իմ կեանքի մէջ, որ քո անցեալը նոր-
նանայ իմ ներկային ու ապագային: Եւ
սիրում եմ քեզ, Վաճէ՛... .

- Ինչքի՞ք, իմ լաւ աղջիկ, իմ ան-
կեղծ սէր... .

- Ես ուզում եմ, որ հոգումս ան-
ջինջ դրոշմուի քո հոգին, որ այս գե-
տեղը, այս կեռասներներն ու այս քա-
ղաքը յաւերժ վկաները լինեն մեր սիրոյ,
մեր նորափթիթ հաղորդման:

- Ինչքի՞ք, իմ սէր... .

Վաճէն նստեց, մէջքը տուաւ ծա-
ռին եւ պրկում առաւ աղջկայ գլուխը:
Երկար մամանակ այդու շիտակցին: Նը-

րանց թեւերը գալարուել էին միմեանց:
Ինչքի՞ք իր այտից ու շրթներից չէր հե-
ռացնում Վաճէի հրկիզուող ամբը: Կար-
ծես այդ ամբի մէջ ամփոփուած լինէր
սիւզեքը:

Նճի վրայ գոյնզգոյն նաւակներ էին
լողում: Երկրի բոլոր կողմերից այցե-
լունները եկել ու ճեմում էին կեռասնե-
րի զգլխի շուրջ տակ: Գարնան վա-
ռատօնը շարունակում էր դրսում: Ու
յանկարծ ճմլուեց Վաճէի սիրտը, երբ
յիշեց, որ իր ընկերը լուռ հանգչում է
բլրայանջի հողաթմբի տակ: Նա յիշեց
նաեւ բանտը եւ հագարաւոր խոռոչներից
Չարենցի հոգեւարքի հանգիւնները:
Կարծրացաւ մարմինը եւ ակամայ սեղ-
մեց Ինչքի՞քի պարանոցը:

- Ինչո՞ւ ամէն ինչ անցողական է,
ինքնիրեն խօսեց Վաճէն՝ աւելի ուժգին
սեղմելով Ինչքի՞քի մարմինը իր մարմ-
նին:

- Վաճէ՛... . - աղջկայ ձայնում ան-
դո՞ւնք կար:

- Ինչո՞ւ այս տառապանքը, ինչո՞ւ
հեռուների այս շարունակ կանչը... .

- Վաճէ, իմ սէր, իմ ես ու Հոգիս,
- բացականչեց Ինչքի՞քը՝ մատները հը-
պելով նրա բերանին:

- Ինչո՞ւ հեռուների կանչը, - ինք-
նարեարար կրկնեց Վաճէն:

- Ո՞ր հեռուների, - ասաց Ինչքի՞-
քը չօքնելով նրա առջեւ՝ ինչպէս Տիրա-
մայր:

- Հեռուների, որ դժգունում է իմ
կեանքը:

- Ուր էլ որ գնաս, Վաճէ, հեռու-
ները միշտ էլ կը հալածեն քեզ... . Ին-
չո՞ւ չես սիրում ինձ... .

- Քեզ սիրում եմ, Ինչքի՞ք:

- Ինչո՞ւ այնպէս չես սիրում, որ
մոռանաս հեռուները... . Ես միշտ պիտի
սիրեմ քեզ... .

- Ես պիտի գնամ Հայաստան... .

- Չարե՞նքը... .

- Այո, Չարենցի հոգին կանչում է
ինձ... .

- Բայց այդպիսով չպիտի դադա-
րես տառապելուց:

- Ինչո՞ւ...
 - Ես գիտեմ...
 - Ինչո՞ւ...
 - Ես գիտեմ քեզ, դու շարունակ պիտի փնտեսս, շարունակ պիտի թափառես եւ չգտնես այն, ինչ փնտառում ես...
 - Բայց դո՞նէ փորձած կը լինեմ...
 - Որպէսպիսի աւելի՞ տառապես...
 - Ձգիտեմ, չգիտեմ, Ինչորի՞դ, - ասաց Վահէն եւ մեքենաբար մի ճիւղ պոկելով սկսեց անխնայ տրորել։
 Ինչորի՞դ էր յուզքի մէջ շատագունել էր։ Գլխի մի շնորհալի շարժումով յետ տուեց Ներքը, ծնկաչոք մտեցաւ Վահէին եւ ձեռքերում առաւ նրա ձեռքերը։
 « Վահէ, - ասաց նա գրեթէ լացափումով, - եթէ ինձ սիրում ես, ապա ես պատրաստ եմ քեզ Նեո աշխարհի ծայրը գնալ։
 - Ինչորի՞դ...
 - Վահէ, թոյլ տուր քեզ սիրեմ, թոյլ տուր ամոքեմ զո վիշտը։ Թոյլ տուր քեզինց յղանալ եւ ծնել զո զաւակը...
 Վահէն քնքշութեամբ զէպի էր դիրք կը քաշեց Ինչորի՞դին, ծոցում թաղեց նրա գլուխը եւ կերկերուն ձայնով խօսեց, գրեթէ մենակ։
 - Քեզ այնքան եմ սիրում Ինչորի՞դ, որ չեմ ուզում մասնակից դարձնել իմ կեանքին։ Իմ ճանապարհը փշոտ է ու դաժան։ Լինել հայ, լինել պանդուխտ, մի ճակատագիր է, որին հայից զատ ուրիշ ոչ ոք չի կարող առկալ։ Մենք որքան էլ խորապէս սիրենք իրար, նորից անծանօթներ ենք մնալու՝ անհաղորդ այն բոլորին, որոնցից կազմուած են ներաշխարհները։ Տեսնո՞ւմ ես, Չարենցի նկատմամբ իմ մտասեւեռումը քեզ արտառոց է թւում։ Եւ դեռ Չարենցը մէկն է այն բիրաւոր ազգակիներին, որ բաժանում է քեզ ինձինց։ Մենք հայերս արտառոց ժողովուրդ ենք՝ արդիւնք արտառոց պայմանների ու Հոգեբանութեան ձիւղն ասած, մենք տակաւին հիւանդ ենք պատմութեան հարուածներէն։ Երբ մի օր ապաքինենք, եւ դա թե-

րեւս դարեր տեւի, ապա կը խամրեն նաեւ հազար ու մի Հեռուոր կանչերը եւ մենք ընդունակ կը լինենք ըմբռնելու կեանքը, այնպէս ինչպէս պիտի ըմբռնելիս ամէն մի ժամը։ Ես քեզ սիրում եմ Ինչորի՞դ եւ քեզինց զատ ուրիշ ոչ ոքու թերեւս չկարողանամ սիրել, բայց այսօր մեր ճամբաները տարբեր են, մենք անծանօթներ ենք, երկու ուրող անծանօթներ...
 Վահէն իր կրծքի վրայ դրում էր Ինչորի՞դի կրծքի փոթորիկը։ Աղջիկը երկար հեկեկաց։ Տղան քարացել էր՝ մըշուտուտ հայեացքը լճի վրայ խալտող նաւակներին յառած։ Երբ նրանց շուրթերը կրկին հանդիպեցին իրար, համբոյրի մէջ այն անգամ վիշտն էր թեւածել։
 Անցաւ ժամանակը եւ ժամանակի հետ մտեցաւ վախճանակալը։ Նրանք գիտէին այդ եւ ճիշդ գործ չէին դնում պարսպելու համար իրենց սէրը։ Այն որ ծաղկել էր, պիտի թօշնէր։ Վահէի մտ խօսում էր ճակատագրապաշտը, որը ժառանգել էր իր ժողովրդից։ Ինչորի՞դ ակամայ ընկել էր Վահէի կեանքի յորձանուտներում եւ յանձնուել նրա խնայելիքներին։ Աղջկայ մտ տիրականը այժմ անկացած վիշտն էր։
 - Դու պիտի շարունակես ժպտալ ու սիրել, - ասաց Վահէն, - կեանքը դեռ շատ խոստումներ ունի քեզ համար։
 - Առանց քեզ պիտի դժգունեն օրերս, Վահէ...
 - Մակայն կը մնայ սէրը, որը յաւերժ է։
 - Առանց սպասումի ես ինչպէ՞ս ապրեմ, Վահէ...
 - Ես քեզ միշտ պիտի սիրեմ։
 - Ուզում եմ սպասել քեզ, Վահէ...
 - Միթէ՞ մեր կեանքը սպասումների մի ամբողջ շարան չէ...
 - Ես քեզ եմ ուզում սպասել, Վահէ։
 - Սպասումի փոխարէն, Ինչորի՞դ, վերապրի՛ր սէրը, ի՛մ սէրը, այլո՛ր սէրը, որը անվախճան է։

- Բայց ես ուզում եմ ջո՛նը լինել, ջո՛ կինը:

- Ինչո՞ւ անպատճառ ամուսնութիւն: Միթէ՞ երկու հակներ չեն կարող սիրել միմեանց յանուն սիրոյ, առանց պայմանականութեան, առանց կաշկանդումների:

- Եթէ ես Հայրուհի լինէի, այդպէս չպիտի խօսէիր, Վահէ:

- Չգիտեմ, ինչբիղ, իրօք չգիտեմ: - Ես միթէ՞ յանցաւոր եմ որ Հայ չեմ ծնուել...

- Ի՞նչ Հրաշալի աղջիկ ես, ինչբիղ, եւ ես սիրում եմ քեզ: Ես սիրում եմ ջո սէրը, ջո կեանքը, ջո ամբողջ հոսթիւնը, սակայն մենք պիտի բաժանուենք, որովհետեւ իմ ուղին տարբեր է:

Ինչբիղը թողեց Վահէի ձեռքը եւ ակնթարթում կղզիացաւ:

Սրա մտքում առեւելի պար էին բրունել «Վահէ, Չարենց ու Հայաստան» անունները՝ հետզհետէ դառնալով անանջանէի պարիսպներ: Նա յիշեց իրենց առաջին հանդիպումը Գոլումբիա համալսարանի Ռուսնոլական Միջազգային Տան մէջ, աշնան մի առաւօտ: Բազմացեղ ուսանողների մէջ աչքի էր խփում նրա թուխ, ազնուական դէմքը, ինչ որ իւրայատուկ խորհրդաւորութեամբ, ուրը հենց առաջին վայրկեանից զբաւեց իր ուշադրութիւնը: Մի բնից նրա մանկունակ սակայն եւ միաժամանակ խոհուն արտայայտութիւնը: Մի բնից նրա Բոստոնեան անդերէնի շէշտը, նրա արտասովոր անունը, որ կարծես երաժշտութիւն լինէր, եւ ամենաշատը սիրեց նրա պարզ, անբնազորայիկ կեցուածքը, որի ենթաշերտում սակայն շարունակ առկայ էր անծանօթը, մի տեսակ անհասանելի:

«Վահէ Վահանեան, Հոգիների յաւիտենական ուսանող, - ասել էր նա կատակով, - իսկ դուք ինչի՞ էք հետեւում»:

«Ձե՛զ: Ձե՛ք տեսում, շարունակ ձեր շուրջն եմ դառնում»:

«Պիտի գըջաք»:

«Ինչո՞ւ»:

«Իմ նաւը խարխուլ է»:

«Ես մտաւում եմ նաւապետին»:

«Կարող է փոթորկի բռնուենք»:

«Փոյթ չէ: Ձեզ պէս նաւապետի հետ ես պատրաստ եմ ովկիանոսը ճեղքել»:

«Այդ դէպքում համեցէք առիտակամա՞: «Սակայն իմ նաւապետիս իրաւունքն է խարխուլ իմ ցանկացած նաւահանդստում»:

Ինչբիղը մի քանի անգամ վերապրեց աշնանային այդ օրը եւ կատակով փոխանակուած ամէն մի բառի մէջ նոր իմաստ ու նոր տարածք գտաւ: Ուշեց սիրոյ հրաժեշտի խօսքեր ասել Վահէին, կրկին Հաստատել իր զգացմունքների խորութիւնը, սակայն անմիջապէս ըզրաց, որ արդէն ամէն բան ասուած էր, որ այլեւս ասելիք չի մնացել: Նայեց տղային եւ զարմացաւ, թէ ինչպէս է կարողացել ճանապարհորդել այդ կատարեալ անծանօթի հետ: Մի պահ ետք նրբան թուաց, թէ մի ամբողջ կեանք է սպրել Վահէի հետ եւ որ այդ կեանքի մի բուպէն անգամ չէր փոխի որեւէ այլ կեանքի հետ: Յետոյ նա Համոզուեց որ ինքը հոգեպէս յի է Վահէից, որ թէկուզ ինչ էլ պատահելու լինի իրենց, ինքը իր ներսում կրելու է նրա զաւակը: Հեռուից, կենսասնիների կամըջակից լուում էր զինուորական նուագախմբի զուարթ մի քայլերդ՝ էլ աւելի կատարեալ դարձնելով Մաղիկների Փառասօնը:

Ինչբիղը բարձրացաւ եւ դործարար, չոր շարժումներով սկսեց յարգարել մաղերը, դէմքն ու շրջագոստը: Նա շատ դուստտ էր: Նրա մեքենական շարժումները մատնում էին նրա ներքին տուայտանքը: Նրա այտոսկրները աւելի էին շեշտուել՝ էլ աւելի Հրապուրիչ դարձնելով նրան: Ինչբիղը մի վերջին անգամ թաշկինակը տարաւ արտեւանունքների վրայ, թեթեւ չպարեց բերանը եւ մեծդի պայտուակը ուսին նետելով դարձաւ Վահէին:

- Կարո՞ղ եմ քեզ հիւրանոց տանել:

- Ո՛չ, շնորհակալ եմ: Ես ոտքով

կը դնամ, - ասաց Վահէն՝ զգալով մի վարդազոյն երազի խամբումը իր սըրտում, ուսնու տակ եւ իր անորոշ ուղիների վրայ:

- Իսկ նիւ Եո՞րք ինչպէս: Քեզ Հեռախօսեմ առաւօտեան:

- Ոչ: Ծնորհակալ եմ: Ես այստեղ պիտի մնամ:

- Գետափի՞ն:

- Ոչ: Ուալինկիթոն:

- Ուրեմն այլեւս չպիտի հանդիպենք, - ասաց Ինգրիդը՝ ձայնում աւազ ու արցունք:

- Ոչ: Այլեւս չպիտի հանդիպենք:

Ինգրիդը թեքուեց, դէն հրեց թափուող ճիւղերը, ապա յետ դարձաւ եւ գերմարդկային ճիւղ դործ դնելով խօսեց:

- Գիտե՞ս ինչ Վահէ: Ինձ թւում է, որ եթէ չլինէին Չարենցի ու Քենետի գերեզմանները, մենք երջանիկ կը լինէինք:

- Այո: Թերեւս երջանիկ կը լի-

նէինք, - ասաց Վահէն նոր միայն անդրադառնալով որ կորցնում է Ինգրիդին:

- Ի՞նչ ուազ նայս Յօիճկ ետ, - ձեռքը առաջ երկարեց Ինգրիդը այնպէս, որ կարծես քաղաքավարական հրածելա էր տալիս սպտահամբ սարահանգէսում հանդիպած մի երիտասարդի:

- Ես ի՞նչ անեմ, Ինգրի՛դ, որ երկու շիրիմների մէջ եմ մնացել, - ասաց Վահէն:

Մի սահ ետք արդէն հեռացել էր Ինգրիդը՝ ուսնու հովանոցում թողնելով իր մազերի իւրայատուկ բուրմունքը:

Հետուից, կեռասենիների կամբջակից լսում էր դինուարական նուագախմբի դուարթ մի քայլերդ՝ էլ աւելի կատարեալ դարձնելով Մադիկների Փառասօնը:

Թ. Կ.

(Շար. 2 եւ վերջ)

Յունիս, 1966

ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԵՐԳԸ

ԱՐՄԵՆ ՍԵՒԱՆ

ԱՐՄԵՆԱԿԱՆ

F.

*«Բարբոզեացի հարսանյ հուր
բարկութեան եւ եկեղ զեղեց-
կութիւն աշխարհիս մերի»
ՍՏԵՓ. ԵՊԻՍԿ. (ժԳ. զար)*

Պեգա՛ս, Պեգա՛ս. երկինքն ահա կը հասի
Մեզրը անուշ, ըստիմեմբումն իր լայսէ,
Եւ կատարները լեռներուն կը շագան,
Յօզն ագամանք է վարդերուն կուրծքին վրան.
Կ'ըլլան դաշտերն, հավիտները գուարքում,
Ռաբիս երգով կը գեղու սիրտը մարդում.
Տերեւներուն կանաչին վրայ սնդուսէ,
Անծամօք ձեռք մը լայ շողեր կը հիւսէ,
Ու հայրենի հողին գիրկը, կը տեղայ
Կապոյտէ՛ն վար, մարգարիտ ու շափիւզայ:
Պեգա՛ս, Պեգա՛ս, սաւառնաքեւ կը քաշիս,
Բաշերդ սկի կը ծածանին իմ ուսիս,
Ու կ'երկարեմ ե՛ս ալ ձեռքս աստղերուն,
Ողջոյն կ'առնեմ, ողջոյն կու տամ մարդերուն:
Կը տայածուի ահա իրիծիցէք հըգօր,
Միջոցին մէջ, սարեր, ձորերն ու ծործոր.
Ուններուդ տակ Արարասն է սրբազան,
Որ ծաղկած է գերք ճիւղաքոյր մի շուշան.
Անպաճքած բարձունքէն իր մեծաւոր

Ան կը պատմէ մեզի վիշտեր, հին ու նոր,
 Ա՛ն, վըկան է անպատմելի հայ ցաւին,
 Ամենատես իր աչքերովն արծառային,
 Առաւօտեան քաղցրութեանը մէջ, Պեգաս,
 Արարատեան դաշտն է շքեղ մէկ երագ-
 Ան, իր մշուշ ֆօդերէն արդ կ'իլէ դարս,
 Աստուածամօր նման մաքուր ու քննայշ,
 Անո՛ր նըման, բեղմնաւար ու բարի,
 Կոյս ստիճէն որուն լոյս կաթ կը ծորի-
 Անոր առայց կարծիքն վրայ կը հասին
 Ջուրերն արծաթ Հըրագդանին, Արախի՛ն,
 Հրագդանին՝ երգի նըման կարկաշուն,
 Տըրափոզ սիրտն՝ աւաններուն մեր ողջոյն:
 Ու տե՛ս, տես մեր գիւղակներն արթնցան,
 Կանցնին աշխոյժ գեղջուկները սերմնացան-
 Եզներն աշխէտ, յաղթամարմին ու պարարտ,
 Հեզ բանաւորներն՝ աղօտներուն անապատ-
 Աշխատանքի ու կեանքի երգը ցնծուն
 Կը քոքըռայ գերք փեթակին շուրջ մեզուն:
 Սրբագան պտեն է քրտինքին աւէ՛ն տեղ,
 Լո՛յս քրտինքին՝ մակատներու վրայ բիւրեղ-
 Կը թմլէ խոփը հողին սիրտը խոպան,
 Ուր, սերմի մը ծոց պիտ' մեծնայ ապագան...:

Լեռներն տես, լեռներն տես միւնագէտ,
 Մօր մը նըման ձեռք կ'երկարեն դէպի մեզ-
 Հայ լեռները, լեռներն ազատ ու հայարտ,
 Յաւերթօրէն թշնամիին դէմ անպարտ,
 Հըզօր բերդերը՝ մեր ցեղին ապաստան,
 Մարդերուն ու դարերուն դէմ անսասան,
 Որանց մըթին անձուներուն մէջ թափուն,
 Մանուկները մեծցան իրրու յաղթ կարին,
 Ու սերունդներն իրենց հագին չափեցին
 Անոնց փարթամ հասակալը արփածին,
 Այնտե՛ղ եղաւ ազատութիւնն իբր Աստուած,
 Թշնամին հո՛ն դըրաւ իր ժամտ սուրը ցած-
 Պապերը քաջ, առասպելին մեր հայոց,
 Հոն, մնացին գուպարներու մէջ անխոց-
 Օճախն անոնց միշտ վառ մնաց ու անշէշ,
 Շոպեցին շանթն իրենց կարշնեղ ափին մէջ-
 Փոքօրիկներն իրրու նուազ լըսեցին,
 Անո՛նց նըման լիտեազագ երգեցին-
 Կեանքը եղաւ արարու գիրկն անգըրաւ,
 Անոնց ձեռքէն արծիւն իր կուտը կերաւ,
 Երբ որսէն տուն դարձան գագան մը ուսին,
 Ջրվէժներուն ծափովն ուրախ պարեցին-
 Ջրմեռները, թռնիլներուն շուրջ բազմած,
 Հի՛ն, հի՛ն օրերը յիշեցին երկիւզած-

Կ. Զ. Ի. ՄԱ.
 Կ. Զ. Ի. ՄԱ.
 Կ. Զ. Ի. ՄԱ.

Ու խօսեցան հսկաներէն, դեւերէն,
 Քաջներէն ու անոնց գործէն անօրէն :
 Մանուկները ուշիմ, նստած ծունկերնուն,
 Հիացիկ ու յոգնած, մտան խորունկ քուն-
 քունքի մէջ գայլ ու աղաւթ խեղդեցիկն,
 Արթննալով՝ մերթ ժպտեցան, մերթ՝ լացին :
 Պեզա՛ս, Պեզա՛ս, լեռներն ահա պերն հագուած .
 Մշուշի մէջ է ծաղկաւտն Արագած,
 Զուարթ բարձունքն այդ, աստղերուն դրացի,
 Ուր, լուսանկամ իրրեւ պահակ կը յածի :
 Գեղարքունի ահա լեռները անվերջ,
 Որ առեր են Սեւանն իրենց գրկին մէջ .
 Յաղթահասակ ահա լեռները Սիւնեաց,
 Ուր կը շրջին լուռ, ստուերները նախնեաց .
 Դաւիթ-Պէկի փառքն ճայնն ուր կը հնչէ
 Դեռ սարերուն, հովիտներուն ընդմէջէ .
 Ու ժողովուրդ մ'իր թեւերով պինդ գրկած,
 Իր սուրբ հողին կը մընայ տէրն ու Աստուած :
 Անա՛, հեռա՛ն, ծրարած ծոցն անպերուն,
 Խուստա՛ւյն է, որ կը խօսի հետն աստղերուն .
 Եւ Արեւիքը՝ արեւի՛ն դըրացի,
 Կ'ունկնդըրէ հեծկլտաւքը Արաքսի :
 Գագաթներն ալ որ հեռուէն կը նային,
 Տարագիր հո՛ղն են հերոս, հպարտ Արցախին :
 Արեւմուտքը մըթին գիշեր մ'է միայն,
 Ազաւմուղը մը, աննառագայթ եւ գուժկան,
 Ուրտեղ, մըռայլ, ծանրը նստեր կը խոկան,
 Արարատը, վարագ, Նեմրաթն ու Սիփան,
 Սասունը՝ իր հսկաներով երբեմնի,
 Տարոսն հայոց՝ որ լուրթ ծովին կը նայի :
 Հայարդի՛ մ'իսկ, հիմա այլեւս չ'ելլեր վեր,
 Երգը շարթիմ, վեհ սարերէն անվեհեր .
 Ու Հայկազանց օրօրոցը կ'օրօրէ
 Հերոսներու տեղ՝ հըրէշ ցեղ մը դժնէ... :

Դայարագեղ կուրծքին վրայ հայրենի,
 Կը շողշողան, իրրեւ պայծա՛ն հայելի,
 Ջինջ երկինքներ աստղներով աղամանդ,
 Կապոյտ լիներ՝ հեքիաթին պէս հնաւանդ,
 Կը տարածեն մարմինն իրենց փերուզէ,
 Որոնց հզրին կեանքը անուշ երա՛գ է .
 Սեւանն ահա, կոյս ափին մէջ լեռներուն
 Բիւրեղ բաժակ մ'է, գինիովն արեւուն,
 Որով կ'ըլլան քերթագները սրարբած,
 Եւ կոյսերուն կը փոփոխի սի՛րտը յանկարծ .
 Սրինգն հովին կը հեծկլտայ երգանիկ,
 Երկինքէն վար կը թափի շող ու ծաղիկ .
 Եւ մարդերու երջանկութեան կը հսկեն

Վիշապները, լեբանց բարձր կատարէն :
 Հեռո՛ւն, հեռո՛ւն, օտարութեան մէջ տխուր,
 Լինն Ուրմիոյ, համալ ալիք ու փրփուր,
 Համալ խոռվի՛ մակատագրին դէմ անգութ,
 Եւ մարդերու խղճմըտանքին՝ ծուռ ու բութ :
 Մինա՛կ է ան, ու մեծութեան մէջ այրի,
 Այլ յո՛ւշ դարձած, Մուսասիւրին կը նայի :
 Ու Նայիրեան ահա ծովակը շքեղ,
 Արշալոյսի վարդերո՛ւն մէջ գունագեղ,
 Մինակ ու ռբբ, լճումի՛ն մէջ վեհափառ,
 Կը նայի մեզ ու կ'արտատուէ ունբարբառ .
 Կը նայի՛ ու հարագատ մը կը փնտռէ,
 Հագի մը՝ որ գինճն հասկընայ ու սիրէ .
 Ու իր վշտին կ'ըլլան անգոր արձագանգ,
 Լեռները լակ, Նեմրութ, Սիփան ու Վարագ . . . :

Պեգա՛ս, Պեգա՛ս, շունի կարօտըս կատար .
 Գետերը մեր ահա, անդուլ, անդադար,
 Հրագդանը՝ պայծառ սրտէն Սեւանի
 Որ կեանք ու լռյա աւաններուն կը տանի .
 Որտտանը՝ ռբբալից ու սրտիան,
 Կանաչ ծոցին մէջ հայրենի՛ ձորերուն,
 Քասախը՝ որ կարկաչելով կ'իջնէ վար
 Արագածէն, մշտաժըղիտ ու դալար .
 Մայր Արաբսը՝ այրիացած, սրգաւոր,
 Տրայտելով իր վշտին հետ դարաւոր,
 Ախուրեանն՝ որ կը ժպտի մերք ու կու լայ,
 Անոր ծոցի՛ն մէջ կը հանգչի գերք տըղայ :
 Ինչպէ՛ս պատմել եփրատին ցար անհուն,
 Անդունդներէն իր խօլ վագէը խրաովուն,
 Հրգոր կանչը՝ ընդդէմ խո՛ւլ, համբ երկինքին,
 Մարդերո՛ւն դէմ՝ որ շին հանչնար իր հոգին,
 Եփրատին՝ որ հրգոր, վընիտ բարբառով,
 Կը շեփտէ իր ցաւերը ծովածով .
 Հարագա՛տ մը կը փրկուրէ իր ափին,
 Մինչ կը գտնէ արդիները թուրանին .
 Ու աչք աչքի կը սեւեռն անդադար,
 Կը նային՝ ու գիրար երբեք չեն հանչնար .
 Կը բարբառին՝ ու իրենց խօսքը շուրթին,
 Կը մընայ լակ բեւեռագիր մը մըքին .
 Յուսանատի կատաղութեամբ անտեման,
 Կը թաւալի բոց վիշապի մը նըման,
 Ու իր ցար եղբոր մը պէս հասկըցող,
 Արածանիմ կայ լակ, Տիգրիսն ու Ճարսիս :
 Կ'երթա՛յ, կ'երթայ իր կողերը կոծելով,
 Նուիրական եփրատն, հրպարտ ու խըռով .
 Կ'իջնէ հայոց անդնդախոր ձորերէն,
 Դէպ՛ անապատը՝ որ կ'այրի արեւէն .

Պիտ' անդորրի համ իր սիրտը վշտակիր,
Անզնեքու ամայութեան մէջ անծիր,
Ուր' գիտե՛ք է մահատակներ կամ անթաղ,
Ժողովուրդ մը՝ անպատան ու անդազաղ,
Ակնազբիւրբը՝ զինք խրոսվող մեծ ցաւին,
Ժողովուրդ՝ մ'որ կրնայ կարգալ իր հոգին:

Արշամբիտ մէջ, ծոցը ծո՛վ կապտյտին,
Հրեղէն ոտներդ, Պեզաս իմ, կ'ընկրկի՞մ.
Դուռ, որ կեանքն ես համակ, թո՛իչք՝ հրաթեւ,
Լողա՛, յոզա՛, եթերին ծոցն անդեղեւ,
Պատմութիւնը, այս աշխարհին մէջ հայոց,
Կատարացող վե՛րք մըն է միայն, խորունկ խոց.
Թերթեւ, մէկ-մէկ, անոր էջերն անհամար,
Արիւնի՛լ է ու տառայի՛լ ինձ համար,
Բայց տառայանքը այդ, սընունդ է հիմա,
Որով կ'ըլլայ բազուկն հըզօր, կը մեծնայ
Հոգին, պատրաստ նոր պայքարի մը համար,
Որ ալ կ'անի արմատներով անհամար:
Կ'ընկրկի՛ս դուն, ի տես խազան դաշտերուն,
Ի տես մահու լռութեանը այս անհուն՝
Որ կը ճատի ծանրը, ճըման կապարի.
Դաշտերուն վրայ՝ ու վրան ամէն կատարի.
Մեր դաշտերուն՝ Արարատն մինչ Եփրատ,
Սեզ կարիւնէն՝ մինչ կիլիկիան հարագատ,
Ուր, չի՛ լսուիր հորովել մը երբանիկ,
Զի՛ տըրափեր սկներին սիրտը գողտրիկ,
Զինծաղիկը ձեռին հովիւ մը չ'իջնը
Սարերէն վար՝ ուր լսեր եմ երգ ու շէր:
Խորտակուած է ակօսներուն մէջ բարի,
Սուրբ արօրը մեր պապերուն հեզ, արի.
Նախնն է որ պարտէգները կը սննէ,
Բայն եմ դրեր ուր սողունները դժնէ:
Թո՛ի՛ր, թո՛ի՛ր, մեր վագփն մէջ հեռարձակ,
Այս աշխարհի կարծփն վրայ ծագէ ծագ.
Հայ ծխան մը գուցէ գտնենք ծխացող.
Հայ տնակ մը՝ մեր առջեւ դուռն իր քացող.
Յայտին կառչած քո՛յր մը՝ որ մեզ կը կանչէ,
Զանգակ մը՝ որ հեռուէն կը զօղամբէ.
Գուցէ՛ գտնենք լոյս մատուռ մը մոռցըլած,
Կը յամառի ուր բնակիլ դեռ Աստուած,
Ու իր անգօր մեծութեան մէջ խելագար,
Ժողովուրդն իր կը փընտըռէ անդադար:
Վանքի մը խոր, գուցէ ճակատ մը խոնարհ,
Դեռ կը ճգնի մագաղաթի մը համար.
Երկաթագիր լոյս մատեաններ կը սգէ,
Մատուռ դարձած, խունկէ, մումէ, ազօթէ.
Ոգինն'ը կամ, որ խուցերու մէջ մըթին

Դեռ կը պստեն կայծը հայոց խորհուրդին,
Գուցէ, գո՛ւցէ այս երկինքին տակ մտայլ,
Այս հողին վրայ, երբեմն կեանք ու շատայլ,
Ցանկարծ մեր դէմ հրաշք սգի մը ելնէ
Ու անտէ թէ՛ խաւարն այս, երա՛գ է...:

Պեգա՛ս, Պեգա՛ս, անբակաց մէջ տխուր,
Վարը, կործան տանարի մը շուրջ թախուր,
Լուսալըսակ հսկաներ ես կը տեսնեմ,
Դէմքով մըռայլ ու ճայտածճով երկնանեմ:
Լուսնի լոյսին տակ նստը եմ խորհուրդի,
Խնասուքեան տկն անոնցմէ կը յորդի.
Կը բարբառին աստուածային բարբառով,
Հոգիներն են ովկիաններու պէս խրոով:
Ստուերնե՛րն են մեր պապերուն հանճարեզ,
Հակտով երպարտ, աչուրներով արփազեզ:
Բազկատարած՝ ահա մեզի կը նային
Ինչպէս անյոյսն՝ որ կը սպասէ երբաշքին:
Ո՛վ ոգիներ, մահաստանին մէջ ամայ,
Դուք որ կ'ապրիք անխոցելի եւ անմահ,
Ինչպէ՛ս կռչել ձեզ՝ ու ձեր խորհուրդը խորին՝
Որ կը մեծնայ ծոցը Հայոց Աշխարհին:

- Ես այն եմ, որ անմահին գրեցի ցեղըս իմին,
Անխոցելի զըրահով պատմէշելով իր հոգին.
Դարեր անցան, մարմինն իր ստացաւ խոց ու վերքեր
Մինչ իր սրտին ազրիւրէն հասցան զեզ ու երգեր:
Արծիւի մը փետուրով, մագաղաթի վրայ պայծառ,
Կտակեցի՛ դարբերուն *Ալֆաֆետա* մը անճառ.
Իմ անունս է մեղեդի, սրինգի տոյլ եւ ամպրոպ,
Հացեկայ հէ՛ք քահանայ մը մկրտեց զես Մետրոպ:
- Ձիս եղիշէ կոչեցին, Աւարայրին ես վըկայ՝
Դիւցազուններն երգեցի, մեծութիւնը վարչամայ,
Թաթխեր եմ գրիչս արեան մէջ, հոգիիս հարն է անմար,
Ու կը սպասեմ ապագայ Աւարայրի մը համար:
- Խորենացի ես Մովսէս, դարբերուն սիրտը մըթին
Պեղեցի ու խաւարէն հանեցի ցեղըս լոյսին.
Մեծութիւններ կանչեցի բեմին վըրայ հայրենի,
Եւ ամէնուն բաշխեցի արդար բաժինը փառքի:
- Շիրակացի կոչուեցայ. զիտութեան ես ծարաւի,
Ուխտի գացի հաւատով, լոյս ոստաններն աշխարհի.
Անկշռելին կշռեցի, պեղեցի սի՛րտն աստղերուն,
Անհունին մէջ կ'որոնեմ արդ, յոյսին աստղը հայուն:
- Ես Մենրի տըզան եմ, ծուռ Դաւիթը Սասունցի,
Բռնապետներ ճնորէն, սուրիս տակէն անցուցի.
Թուր-կայծակիս պատեանին մէջը խրոով կը սպասէ
Մինչեւ Օհան հորեղբոր նո՛ր ահագանգը հնչէ:

Ստուերները անհետացան լուռ ու մունջ .
 Իջաւ մըշուշն աւերակաց վրայ անշունչ . . . :
 Աչուրներս արցունքով կը պղտորին
 Զի, անյայտէն յուսալըն է դժուարին :
 Անցնի՛նք Պեգաս, փուշ ու տատասկ քաղելով,
 Անցնի՛նք ահեղ անդունդներէն անխըռով,
 Նայի՛նք մարդոց աշուրներուն, շիլ ու նեմզ,
 Տկարութեան մեր արցունքները սրբենք,
 Պատմութեան փակ դուռը բախենք անվրդով,
 Ու գրկենք վեհ անբակները սիրով .
 Լսենք անյուր ռդերգութիւնը խորին,
 Մեր Հայաստան երգ ու արեւ աշխարհին .
 Սեւեռն՛նք, սուր մեր նախածմերն անվարան,
 Անցեալին՝ որ ժպտի նարոզ ապագան . . . :

Սուրա՛, սուրա՛, երիվարդ իմ, սուրա՛ միշտ,
 Այս երկինքին տակը, նեմզ ու ամբարիշտ .
 Ո՛ր ես անհուն հեծեծամներ կը լըսեմ,
 Մութ ճորերէն, բարձունքներէն արփանեմ .
 Փապարներու եւ փոսերու ընդմէջէն,
 Անյո՛յս մարդիկ – «Աստուա՛ծ, Աստուա՛ծ» կը կանչեն .
 Եւ Աստուածը դարձած ի՛նքն ալ խելագար,
 Խուլ եւ համբը, իր գանձոյէն վար չի՛ գար :
 Սիրտըս, սիրտըս կը տըրտիւտ տարուտով,
 Անցնի՛լ հարկ է տարտարուէն անվրդով . . .
 Հուր կաթիլները որ վիզիդ կը կաթին,
 Արցունքներս են, նման՝ հալած երկաթին :
 Կանգ մի՛ առներ, արշաւիդ մէջ, սուրա՛ դուռ,
 Գիշերին չափ յոր է հագումս տրտմութիւն .
 Աչքերս, աչքերս են սարսափէն կուրացած,
 Բայց հագումս աչքը կը նայի մեծարաց .
 Ալ ակամքներս աղաղակներ չե՛ն լըսեր,
 Բայց ունկն հոգումս տիեզերքին է բացուեր :
 Ահա՛ ահա՛, հագարներ որ կ'արտասուեն,
 Քիւրերը՝ որ ալ դառնացած են յոյսէն,
 Զե՛ն պաղատիլ ալիւս Աստուածը վըսեմ,
 Ալ գիտեն թէ, ան լոկ խաբկանք մ'է նըսեմ .
 Անոնք հիմա գերի՛ն են շերտ մը հացին
 Ու դաշտերուն վրայ գերք նախիր կ'արածին .
 Կը քրքրեն աղբանոցն՝ որ կը նեխի,
 Գուցէ գտնեն այնտեղ կեղեւ մը սեխի,
 Գուցէ ձիւ մը կրկնանքին ալ մէջէն
 Գանի մը կուտ գարի ժպտի կամ՝ ցորեն :
 Հարձակներէն կը քայն գերք ուրուական,
 Կմայտատիպ մահաւան պատկերն են գուժկան .
 Մեռելուն՝ են, ելած հրաշքով մը ոտքի,
 Ո՛րք երբալու . – այդ ծանօթ չէ՛ ոչ ոքի . . .
 Ու դեղնահար տերեւն ինչպէս աշունին,

Մէկիկ մէկիկ, դողդողալով կը թափին.
 Փռսի մը մէջ, կամ ծառի մը շուփին տակ,
 Կ'իյնան հիմա, իբրեւ անտէր մահատակ:
 Մեռած մայր մ'է, հողին վրայ կրծաքաց,
 Նօթի մանուկ մը ըստինքէն առկախած.
 Ու կը մզնի պուտ մը կաթի համար ան,
 Ձի' հասկընար անմիտ օրէնքը մահուան...:
 Ամէն քարի տակ դիակ մը կ'երկարի,
 Ագռաներում կը լսուի կանչը վայրի.
 Յուզարկաւոր կ'անցնի հովը ռզրածայն,
 Շարականն իր կը լքեն լեռ ու կածան:
 Թըռի'ր, Պեզա'ս, կապոյտին մէջ լոզալէն,
 Ամայացած ստանններէն, գիւղերէն.
 Քաղաքներէն՝ հրդեհուած ու արեակ'
 Ուր ամէն ինչ կ'ապրի իբրեւ յիշատակ:
 Մի' ընկրկիր, Ստամպուլէն մինչ Կարին,
 Կախազաններ են որ երկինք կը նային.
 Խաւարածին թուրք փաշաներն ապիրատ,
 Լա՛յս գաղափարը հաներ են կառափնատ.
 Մինչ մշուշէն արշալոյսն որ կը ծագի,
 Կ'ըլլայ անոր անմահութեան ծիրանի...:

Համատարած մահատանին այս վըրայ,
 Դեռ սիրտե'ր կան, Պեզաս, ուր կեանքը կ'եռայ.
 Հնգինե'ր կան լայս հատառով ասպազէն,
 Կեանքին օրէնքը հաներ են մահուան դէմ:
 Ահա կ'իջնէ անոնց բազուկն անընկուն,
 Իբրեւ կայծակ թշնամիին ժանտ գլխուն:
 Վաստորականն աչքերն յառած Մասիսի
 Մէկ մարդու պէս, ահեղ կեցեր է ռոքի.
 Մուսա Լեւը մինակութեան մէջ հրգօր,
 Ենովայի պէս կ'որոտայ ան այսօր,
 Մինչեւ որ իր կամքին առջեւ անկապուտ,
 Այլ կը բացուին հորիզոնները կապոյտ
 Յաղթանակն է. Մուսա Լեւն ու Նայիրին
 Կը համբուրուին, փռոքի դափնին ճակատին...:
 Ու կան ալ, որ կեանքի, մահուան գուպարին
 Մէջ, անարգ մահը յազթելով կը մեռնին...:
 Այսպէ'ս ինկան Գարա-Հիւսար, եղեսիւ.
 Հակասուն իրենց անմահութեամբ կը շողայ:
 Կը հոսի կեանքը դարերու ծոցին մէջ
 Երիվարոյ իմ, ինչպէս անհուն մէկ ջրվէժ,
 Կը հոսի ան, գայրալից ու փրփըրուն,
 Անհետելով անհուն ծոցի'ն մէջ ծովուն.
 Ժամանակն ալ, անյագ դեւի մ'է նըման'
 Որ կը լսիէ բարին ու չարը լըման:
 Մոռացութի'ն, մոռացութի'ն ամբարիշտ,
 Թող փայփայեմ ես, յաւիտեան վերքս ու վիշտ.

Համայնակուլ մոխիրներէն քու դաժան,
 Թող վերէժիմ կայծերն արդար կայծկլտան.
 Իմաստութեան սերմն'ը բլլան քոզ անոնք,
 Մեր քրտինքին ընեն հասկերը ստոք:
 Արդարութիւնն ալ նման է քոչունի՝
 Մ'որ սաւառնիլ կ'ըզայ, սակայն քեւ չունի...:
 Մինչ, կեանքն հայոց մթին գիրք մ'է մեծարաց,
 Զոր ոչ մարդիկ կը հասկընան, ոչ՝ Աստուած...:

✽

Աստուա մը, դարերու մէջ - մշուշէն,
 Թըրակիոյ արծաթածուփ սփերէն.
 Արմենական արեգշաղ ցեղը ուռի,
 Կարովաբիք, համակ երազ ու ոգի,
 Ճամբայ ինկաւ դէպ' Արեւելէն արփագեղ,
 Տեղափոխուող իբրև անտառ ու հեղեղ:
 Ճամբայ ինկաւ՝ յսրխնցացող ճիւղով.
 Նուաճումի, փառքի տենչովը գիւնով.
 Կապուտաչուի մանուկներով, կիներով,
 հարտիշագեղ աղջիկներով, հարսերով.
 Դրօշներով՝ դափնիներու տակ կըբռն,
 Տգամարդիկ՝ բագուկներով անկուն.
 Սաղաւարտներ արեւի՛ն տակ շողափայլ,
 Պայծառ դէմքեր՝ անխռով ու անայայլ,
 Նիզակները դէպի երկինք կարկառուն,
 Որոնց գլխին կը վառի սի՛րտն աստղերուն.
 Մովի նման արեւածուփ գրահներ,
 Նահապետն՝ որ կ'առաջնորդէ անվիհեր,
 Որ Աստուծոյ ամենաժեռ ուշքին տակ,
 Կ'երազէ լոկ յնջոյք, փառք ու յաղթանակ...:
 Կ'երթան անոնք ծովէ ի ծով, սարէ՝ սար,
 Իրենց կամէն գառ հրաշքի չե՛ն յուսար.
 Ու մերթ կ'երգեն լիահագագ, լիաքոփ,
 Քրմապետին շուրջը ռարախ եւ անհոգ,
 Նահապետին՝ որ ձեռքին շահը բռնած,
 Կը փառատրէ իր սողներովը Աստուած:
 Իրենց վագփն մէջ ձիւնի հիւսը ինչպէս
 Կը մեծնան ու կը տարածուին մշտապէս,
 Ու դարերու իրենց ճիգէն վերջ հպարտ,
 Գուպարներէ յետոյ հերոս ու անպարտ,
 Զէն ու զարդով, տարագներով փռիւզեան,
 Աստուածներովն անոնց հըզօր, յաղթական.
 Օր մը սեւ մեծադըզորդ գայրագին,
 Ուրարտուի սահմանին վրայ կը կանգնին...:
 Կ'ելլեն երկու բանակներն արդ, դէմ դէմի,
 Բագուկներէն մին մինչեւ որ դեղեւի,
 Ու հնոցին մէջ պայքարին ընդերկար,

Թշնամիները կ'ըլլան օր մը եղբայր-
 Եւ կը ծընի համբայրի մը մէջ հրգօր-
 Հայը՝ լռյսի իբ սերովը մեծագօր :
 Պեգա՛ս, Պեգա՛ս, ահա Տոսպի ժայռերէն
 Երեսուն դարեր ձեռքերը սեզ կ'երկարեն-
 Ահա անոնց կուրծքին վրայ վեհափառ
 Անմահացե՛ր են յաղթանակ ու գուպար :
 Ասարեստանն այնտեղ գոռոզ է ծունկի,
 Բանակն սրուն խունապահար կ'ընկրկի-
 Գերինե՛րը ահա, հարիւր հագարով,
 Գլուխ ծռած ամբոխները ծովածով-
 Հարստութիւն անբաւ՝ պըզիմն ու ոսկի,
 Աստուածներ՝ որ ալ շե՛ն իշխեր ո՛չ ոքի-
 Հայ աշխարհին վրայ, Տարուսէն մինչ Մասիս,
 Կիսաստուածներ են, Արկիշտի, Սարտարիս-
 Սուրն ու մանգազն եղբայրացած իրարու,
 Կը կռանեն նոր հայրենիքը արու,
 Քուրբայ՝ մը՝ ուր հայ հանճարը լուսափայլ,
 Անդու կ'երկնէ ու կը կեքտէ անբարբառ :

Կը քաւալի դարը դարի ետեւէ,
 Ենդն իր նիգին մէջ յաւիտեան կը տեւէ-
 Ոստանները կը բարձրանան ու կ'իյնան,
 Հարուածին տակ մարդերուն եւ բնութեան-
 Հին Աստուածներ տեղի կու տան նորերուն,
 Բայց հայ աչքը կը նայի միշտ աստղերուն,
 Վեհ արքաներ կը ծնանին անխափան,
 Աշխարհի տէ՛րն են Արտաշէս ու Տիգրան,
 Որուն երկաթ բանակներուն դէմ արի,
 Հռոմի գոռոզ դրօշակը կը խճարի-
 Եւ ուժին հետ գազափարը իբր եղբայր,
 Խաւարներուն վըրայ կ'իշխեն տիրաբար-
 Հայ հանճարի մշտածարան աղբիւրէն
 Գեղեցկութիւնը կը ծարի երգելէն :
 Եւ գուսաններ, գուսաններ, կը ծնի՞ք դուք
 Տնակներու ծոցն երջանիկ ու անշուք-
 Ձեր քաղցրութեան առջեւ ուրախ կը բացուին
 Բոլոր դռներն երկդերուն ու պալատին-
 Եր սարսըռայ երթոր սիրտը ձեր վիհին,
 Կը փրփրի բաժակներուն մէջ գինին :
 Ձեզմով, ձեզմով երագեցին, արքեցան,
 Գեղջուկները, մեծասուններն ու արքան-
 Դուք սերմնացան գեղեցկութեան ակօսին,
 Տաղասացներն ալ ձեր սիրտէն կը հոսին-
 Եւ Աստուծոյ շուքը իրեն ասպատակ,
 Վարդ եւ պալուկ կ'երգէ մըռա՛յլ արեղան :
 Ու կը ծաղկին մագաղաթներն իմաստուն,
 Մասներուն տակ արուեստագէտ մատներուն :

Թեև կ'առնէ ցեղին կեանքը հրահոսան,
Արարատին պէս աննուան, անասան:
Բայց կը դառնայ կախարդ անիւր բախտին
Կուրծքին վըրայ մեր Հայաստան աշխարհին...



Աւերակներ, աւերակները ահա-
Արեգնաշող ոստաններուն հնօրեայ,
Կորեզները ֆարտարապետ հանճարին
Որ տուեր է շունչ հայ հողին ու քարին,
Որ գիծերու մագուրեանքը վեհափառ
Բանտեր՝ յաւերժ խորին խորհարդը անհատ,
Տանքներու մէջ ծանրակիր ու մըքին
Լուծեր՝ հանգոյցն անյայժ լայսին ու մութին:
Աւերակներ, աւերակներ սրբազան
Ուր կըրթալծին մեր անցեալն ու ապագան,
Ուրտեղ անոնք արդ տուեր են ձեռք ձեռքի՝
Որ մոխրէն նոր կրակ մը բորբոքի:
Աւերակներ, դուք համակ խունկ ու արիւն,
Դուք յաղթ սիւները հայ կամփին աննրկուն,
Աննիւթ Բանին դուք միւթեզէն քանալի,
Կործանումին ու կտորցման անյեղի
Մեծ օրէնքին լոյս մարմարներ պերճափառ,
Ուր հրեզէն լեզու ունի ամէն քար:
Սուրա՛, սուրա՛, երկվարն իմ բացաշունչ,
Սօսեաց դրախտի ազըխներն են լո՛ւռ ու մունջ-
Ոչ մէկ տերեւ կը սօսափէ արդ այնտեղ,
Ազօրասաց չըկա՛ն ճարմերը շքեղ,
Սօսանուէր արքան այլեւս չի՛ շքէի,
Զի՛ քափիւր հոն գոհին արիւնը կարմիր-
Ո՛չ մէկ խարոյկ որ հիմա հոն նննների,
Զե՛ն պարեր ալ քրմուհիներ սեւաչաւի:
Արժախն իր պալատներով վեհափառ,
Վսեմ խորհուրդ մէ՛ հողին ծոցն անբարբառ-
Ո՛չ մէկ սեպուե՛ որ անոր շուրջը յածի,
Հին փառքերէն ոչ իսկ ծի՛լ մը ազարծի-
«Կը տեսնեմ լոկ ամանգութիւնն որ կա լայ»
Անյուսօրէն «նստած կռօղի մը վըրայ...»:
Արտաշատը ահա, հողին հաւասար,
Ո՞ւր մեհեաններն ու պալատները անհատ,
Գեղազանգուր ո՞ւր է արքան հայրենի,
Աշխարհակալ, ուսին փարփառ ծիրանի-
Ո՞ւր է ստուերն Աննիւրալին տարագիր,
Հալածական թիւրա Հրոտմէն դաւադիր-
Առաստն ո՞ւր՝ Նաւասարդին երջանիկ,
Միաններուն ո՞ւր՝ կապոյտ ծալսն հանդարտիկ-
Ո՞ւր վազելը եզանց, վարգելն եզերուաց,

Թմբուկին քինդն ու փռչին կանչն յեզակարծ .
 Խնգոյֆները եւ երգիչները գողթան,
 Մկուտեղներն՝ որ երէնով կը մըլխան .
 Պարուհիներն՝ որ կը պարեն բամբիւռով,
 Յաղթանակէն հպարտ, սիրտերը գինով :
 Թռի՛ր, քռի՛ր, ով Պեգասն իմ երեզէն,
 Յիշատակը քեւ կ'առնէ մեր հտեւէն .
 Վազարշապատն ահա, երբեմն հեթանոս,
 Նոր լոյսի մը ազերակը յարգահոս,
 Հին Աստուածներ փշրեց, մարմար ու ոսկի,
 Մեհեանները՝ բոց երագի եւ յօսֆի,
 Ոստանն ահա, ուր կը շրջի խելագար
 Մեծ արֆայի մը ստուերը անդադար,
 Կը շրջի ան, բոցավառ ցաւ մը ձեռքին,
 Որ լոյս կու տար երբեմն հայոց աշխարհին,
 Կը շրջի ու տրտում անցեալը կ'ազրայ,
 Մինչ պատմութիւնը վեպի մ'է խարերայ... :
 Դուինն ահա, քարուքանդ եւ ամայի .
 Աւեր փռաքին վըրայ մտած կը մայի .
 Բախտը եզաւ դաւադիր ու դրոսժան,
 Անկարեկիր՝ արաքին սուրբ դաժան .
 Եւ բնութիւնն ու մարդ տըւած ձեռք ձեռքի
 Ոչ մեծութեան խնայեցին, ոչ՝ փռաքի :
 Անի՛, Անի՛, աւերակաց քաղաքի...
 Անկեպ Աստուած՝ որ միշտ երկինք կը մայի .
 Աղֆա՛տ, հարաստ, քշուտաութեան մէջ հպարտ,
 Հգորութիւն՝ անկումին մէջ իսկ անպարտ...
 Անմահ բեկոր գեղեցկութեանը վըսմ,
 Պայֆարի մէջ դարերուն հետ դէմ առ դէմ .
 Ժամանակին Մարտին դէմ այդ դաժան՝
 Որ կը բռնէ ձեռքին մանգաղը մահուան :
 Անի՛, կեանքի երբեմն հընցը եռուն,
 Դերեզմաննոց այսօր, անծի՛ր եւ անհուն .
 Ամայութի՛ւն, ուր սի՛րտ մը չի սարսար,
 Փլատակներ՝ մոզէսներու բոյն քշուտա :
 Բարկ արեւի մը տակ, գի՛րքը լաութեան,
 Լոկ ոգրասաց հովեր կ'անցնին ու կ'երթան .
 Ու արծիւն որ կ'անցնի վերէն անդեղեւ,
 Կը ձգէ վար միայն փետուր մը քեթեւ :
 Կիսակործան գմբէթներդ են եղեր բոյն,
 Լուսնի լուսուն, ուր կը վայէ մաայլ բուն .
 Եւ օձերուն սոյլն ալ սրինգ մ'է դժպիսի՛
 Որ ծերպերէ չարագուշակ կը լսուի :
 Տանարներուդ, պալատներուդ մէջ ամայ,
 Դեռ կը ցայայ հայկեան հոննայը անմահ,
 Ան՝ որ հոգի տուաւ քարի՛ն, մարմարի՛ն,
 Որ իր հետը անմահութեան գիրկն ապրին .
 Ան՝ որ հիւսեց աստղերու շողերով

Խաչքարերըդ աղուեստագէտ մատնեռով.
 Գմբէթներուդ խորին խորհուրդը բանտեց
 Լո՛յս գիծերու հրաշագան խազի՛ն մէջ.
 Անտ՛վ է որ զազափարը մաքսնացաւ
 Քու սիւններուդ, կամարներուդ մէջ անբաւ.
 Եւ հիմա երբ նիւթն է կործան քար առ քար,
 «Կը վերածնիս Անի՛, իբրեւ գազափար»
 Ու կը տեսես. պիտի տեսե՛ս դուն յատերժ,
 Բռնաբիւնը երբոր իյնայ գահավէժ...
 Ու մականը Բագրատունի մեծ գարսին
 Նարէն փայլի՛՝ ժողովուրդի սուրբ ձեռքին:

Ամպերն ահա, ամպերն ահա կը սփռեն
 Փլատակները վեհասլանծ, համօրէն.
 Եւ մշուշին շղարշներովը անհետ
 Կը ծածկուին պարիսպ, տանար ու գմբէթ:
 Կեանքի, մահուան ո՛հ կնճիւռն է միշտ դաժան,
 Ինչ երէկի՛նն էր՝ այլերս չէ՛ վազուան.
 Ու ամէն ծիլ որ կը դիմէ վախճանին,
 Կը նետէ սերմը նոր կեանքի մ՛իւր ետին.
 Մինչ օրէնքը քանդոււմին ու կառուցման,
 Կախարդական շրջանակի մ՛է ճըման:
 Թըռի՛ր, թըռի՛ր, երկվարդ իմ, նախրէ՛ դուն,
 Ընդմէջ կապոյտ երկինքին ու ամպերուն.
 Ես կը տեսնեմ կեանքի անե՛ր ակօսէմ
 Նոր ստաններ ստէի՛ մեզի՛ կը կանչեն.
 Երեսանը մեր հնօրեայ, քար ու քանդ,
 Ահա կ'երգէ հայ արեւի՛ն տակ զըւարթ.
 Նար պալատներ կը քարճարման ու նոր գահ՝
 Ուր ժողովուրդը պիտ' բազմի իբր արքայ.
 Լո՛յս մեհեմաններ՝ հայ քրտինքով ցօղաքուրմ,
 Ուր՝ աշխատանքը կ'օրհներգէ իբրեւ քուրմ.
 «Աձու փոքր» վեհ Հայաստանը համբուն.
 Հիւսիսական ազգերէն ինք վեհագոյն,
 Մոխրներէն կը թօթուէ իր լոյս թելեր,
 Ու գերթ փիւնիկ կ'արփաթելէ դէպի վեր.
 Եւ ժողովուրդ մ'ամբօզ մէկ սիրտ, մէկ հոգի,
 Իր ապրելու կամքով կեցեր է ստէի.
 Մինչ նիչերու, կանչերու մէջ առնական,
 Գեռ կը մընայ համր, առեղծուա՛ծ Ապագան...:

ԱՐՄԷՆ ՄԵՒԱՆ

Կ. ՍԱՍՈՒՆԻ

ՍԱՐԵՐՈՒ ԱՍԼԱՆԸ

Ե.

ՈՎ ՈՐ ՔԱՋ Է, ԻՆՉ ԿԸ ՍՊԱՍԷ

Այսպէս կ'ըսէր երգը, որ զինակոչի խանդավառ շեշտերով կը հնչէր
պիւղերու պեղնափոր տուներէն ներս, քաղաքներու պիշերային հաւա-
քոյթներու մէջ սիրտերը թունդ կը հանէր ու լիտներէն արձագանդելով՝ կը
լեցնէր ձորերը ու անդունդները:

Մահ-պատերազմի օրհասը կը մօտենար ու Հրայրի կողմ կոյր Յա-
կոյի կողմէ երգի կը վերածուէր, մարտի հրաւիրելով բոլոր անոնք, որոնք
քաջ էին ազատութեան համար զոհուելու:

Ու երգը սահմաններէն կ'անցնէր անդին, կովկասը դղրդելով.

Ով որ քաջ է, ինչ կը սպասէ...

Մահը արհամարհողներու բազմութիւն մը ոտքի ելած էր համահայ-
րական այս կոչին պատասխանելու.

Ոսկեզօծ պաշլըխներով, լազի շորեր քանկագին,

Գնում էին գէպի Սասուն, օգնելու Անդրաճիկին:

Ու կու գային անոնք աննական ու խիզախ, կու գային զէնքը զրկած
եարի փոխան, կու գային թրքական բռնութեան տակ ստրկացած ժողո-
վուրդը ոտքի հանելու եւ ազատութեան զանգերը հնչեցնելու համար:

Ու ապա՝

Լուսին չկար, մութ գիշեր էր,
Մի խումբ կ'երթար արագ-արագ,
Կեանքները ազգին Յուրաժ՝
Գնում էին տանկաց Բասէն...

Երբ քաջ Յանը կուրծք կու տար թշնամիին, երբ Ասիւծ Սերոբ իր
կորիւններով Տէլի Պապայի ժայռերուն վրայ իր անմահութիւնը կ'արձա-
նադէր, ու անդին Բասէնի Դաշային մէջ, Նեւրուշի քաջակորով մարտիկնե-

րը կ'իյնային արիւնոտ զուպարներուն մէջ, մահը արհամարհելով, Սասունը հրաբուխի պէս կ'եռար ու Ֆետայիները երկաթէ կամքով՝ մահ-պատերազմի կը պատրաստուէին:

Տարօնի եւ չբնական գաւառներէն ամէն օր պաշար կը փոխադրէին Սասուն ու ժողովուրդը, որ դէնքը ուսին, Սասնոյ լեռը բարձրացած չէր, ինքնարուխ կը նուիրէր իր հացը, իւղը, մսացուն, հագուստեղէնները, դրամը, ազգային բանակը պահելու, գիտէր թէ կեանքի ու մահուան պատերազմը սկսած է բռնակալութեան դէմ, ու այս ժողովուրդը պատրաստուած էր պատուաւոր մահով խորտակելու սարկութեան շղթան:



Քեռին, խտարարոյ, մատակարար ու պահեստապահն էր պաշարի ու ուղղամթերքի: Անիկա երկաթէ կարգապահութեան ու կանոնի տակ զրած էր այդ բոլոր գործերը, դիտակցելով՝ թէ կոխներու պարագային ազատութեան բանակը, օրը օրին, որքա՛ն պէտք պիտի ունենայ այդ պաշարին: Ու բոլոր Ֆետայիները դժգոհ էին այս խիստ կարգապահութենէն, բացի պատասխանատու մարմնէն եւ զինուորական խորհուրդէն:

Ձմեռ էր ու Սասունը ապահով էր ամէն միջամտութենէ: Իսկ Ֆետայիները իրենց հանգիստի այդ պահերուն կը սրտնեղէին, որսի կ'ելլէին, իրարու հետ զգուրուտուք կ'ընէին, կը պարէին, բայց իրենց ուժը չէր սպառեր ու հնարամիտ մտածումներ կ'ունենային խաղի բերելու համար Քեռին, որ պահեստներու բոլոր փականքները իր ձեռքը կը պահէր ամբօրէն: Սակայն կոտորի Հաճիի հնարամտութիւնները կային, ու ահա Սմբատին ու Գալստի քանի մը ճկուն երիտասարդ Ֆետայիներուն միջոցը ցոյց կու տար բուխերիկներէն վար իջնել պահեստները եւ առատութեամբ չամիչ, բնկոյզ, ու պատտեղ կողոպտելու Քեռիի սրբութեամբ պահած պաշարէն: Ու երբ Ֆետայիներու խմբակները կատակներով եւ ծիծաղներով այս չոր պտուղները կը վայելէին, երբեմն Քեռիի շուքը կը տեսնէին, որ կ'երեւար աղմուկին մէջ:

- Եան որդիներ՛ր, անպայման բան մը ըրած էք, անառակութիւն մը... Ու կը կենար հարցական նայելով բոլորին:

Մուրառը ժպտուն.

- Քեռի՛, պահեստի բարիքները կը վայելեն, ուրիշ՛ մտած են ներս, չեմ գիտեր, ինծի ալ պատուական բաժին մը հանեցին: Կ'ըսեն թէ Մուշէն եկած բարեկամները բերած են:

Լուս, թթուած երեսով, Քեռին կը հեռանար ու ինք անձամբ երբեմն գիւղերները պահակ կը կենար պահեստներուն, այս քանոպայ աւազակները՝ ծուղակը ձգելու համար:



Մտահոգ էր Հրայրը եւ գիտէր, թէ այլեւս խոհեմ միջոցներով կարելի պիտի չըլլայ զարնան ընդհարումներու առաջըը առնել:

Պատասխանատու մարմինը եւ զինուորական խորհուրդը ժողովի նստած էին:

Հրայր, մտածումներով ծանրաբեռն, կը խօսէր այս ժողովին.

- Գարունը չբացուած՝ կռիւնները պիտի սկսին, այդպէս կը զգամ, ամէն օր հասնող տեղեկութիւնները այդ վտանգը կը զգացնեն մեզի:

Հիմա, երբ մեր աշխատանքները վերջնականորէն պիտի դասաւորենք, կ'առաջարկեմ բոլոր ուժերը կեդրոնացնել Սասուն, ու կոխները սահմանափակել Սասնոյ շրջանին մէջ: Մեր ուժերը եթէ մէկ ճակատի վրայ կեդրոնանան, յոյս կայ աւելի զօրաւոր դիմադրութեան:

- Պարոն Արմենակ, ամէնէն շատ զուգ կը պահանջէիք, որ Ծիռայիները շրջանները ցրուին եւ Սասունը չվտանգեն, - խօսեցաւ Անդրանիկ զարմացած:

- Ճիշդ է, այդպէս կը պնդէի, յոյս ունենալով, որ այդպիսով քանի մը տարի կը շահնէք եւ Վասպուրականն ու Կարինը կը պատրաստուին ընդհանուր ապստամբեան: Մինչդեռ, այսօր, այդ շրջանները պատրաստ չեն: Տարօնի միւս զաւառներն իսկ փոքրիկ դիմադրութիւն մը միայն կրնան ընել, ու գոյամարտէն ողջ մնացած մարտական ուժերը պիտի ուզեն ապստամանիլ Սասնոյ լեռները: Օրհասական կոխը կը սկսի մէկ երկու ամիսէն: Մենք հրդեհը պէտք է պահենք Սասնոյ մէջ ու եթէ պէտք է, նորէն այս լեռնական ժողովուրդը զոհոթութեան սեղանին դնենք...

Բոլորը իրարու երես կը նայէին շփոթած: Գիտէին որ Հրայրը որքան գուրդուրանքով կ'ուզէր պահպանել Սասնոյ ժողովուրդը, մտածելով որ լեռնաշխարհը ապաւէն մը կը մնար ապստամբական շարժումին:

- Հրայր, - ըսաւ Վահան, - ծանր առաջարկ մըն է որ կ'ընես: Այս ժողովուրդը քանի՜ գոյամարտերու մէջ ազատութեան զոհ դարձաւ: Ինչպէ՞ս կրնանք միայն այս հատուածը կրակին մէջ նետել ու ոտքի չեանել Մշոյ Դաշտը, Ախլաթի շրջանը, Վասպուրականը, որոնք եթէ նոյն իսկ չկարենան ճակատագրական հարուած մը տալ թշնամիին, գոնէ պիտի կարենան իրենց դիմադրութեամբ թրջական զօրքերու մէկ մասը զբաղեցնել ու թեթեւցնել ճշման ծանրութիւնը, որ պիտի իյնար Սասնոյ կոռուղներուն վրայ:

- Գործը համահայկական է, ամէն տեղ խանդավառութիւն ու շարժում կայ: Սոււրբեր ճարձայ կ'ելլեն զէպի Սասուն. ոմանք կը կոտորուին եւ ոմանք ալ տեղ կը հասնին, բայց ինչ որ կրնամ դատել, հիմա, խելացիութիւն պիտի ըլլայ մեր մարտիկները կեդրոնացնել Սասուն եւ կոխները սահմանափակել այս լեռներուն մէջ: Իմ հարազատ ժողովուրդն է, որ պիտի տուժէ, բայց եթէ Դաշտը, Մուշ քաղաքը, Ախլաթ ու Հարք-Ապահունիքը կոտորածի ու քայքայման ենթարկուին, մենք ապագայ մեր բոլոր յեղափոխները կը կորսնցնենք: Մեր ուժերը քիչ են մեծ ճակատամարտներու համար. գործ պիտի ունենանք թրջական տասը հազարի հասնող բանակի մը հետ, որուն պիտի միանան, անխուսափելիօրէն, բազմահազար Քիւրտեր:

Ձիւնուորական խորհուրդը Հրայրի պատճառարանութիւնները իրապաշտ կը գտնէր եւ կը զգար, թէ խմբային պզտիկ շարժումներու ժամանակը անցած է:

Այս խորհրդակցութեան մէջ որոշուեցաւ հարաւային ճակատի Հրամանատարութիւնը յանձնել Գէորգին, որուն հետ պիտի ըլլար Մուրատը: Հիւսիսային ճակատի Հրամանատարութիւնը ստանձնեց ինքը Հրայր, իսկ կեդրոնի Հրամանատար նշանակուեցաւ Անդրանիկ, խորհրդական ունենալով Քեւին, Բուլէի Մճօն, Կոտոյի Հաճին եւ Կորիւնը:

Պատերազմական ճգնաժամի օրեր էին:

Տարօնի բոլոր զաւառները թրջական զինուորական շրջայի տակ առնուած՝ ընդլատակեայ խուլ աշխատանքի նուիրուած էին:

Սասունը ազատ իշխանապետութիւն մը դարձած էր, ու Ֆետայական եւ յեղափոխական կարգ ու կանոնն էր, որ կը տիրուպետէր բոլոր շարժումներուն:

Գաղտնի բջիջները, մարտական երկաթէ կարգապահութեամբ, իրարու շղթայուած՝ թրքական զինուորական դատան խտութեան կը հակադրէին դիւրաբային իրենց տիրապետութիւնը:

Ազատութեան ու բռնակալութեան բանակները լարուած՝ ամէն վայրկեան բռնկումի կը սպասէին:

Արհեստանոցը, որ կը գործէր գիշեր ու ցերեկ, վառօդ կը պատրաստէր, զէնքեր կը նորոգէր, կապար կը թափէր: Հեւ ի հեւ այդ աշխատանքները ամէնուն մէջ պատերազմական հոգեբանութիւն մը կը ստեղծէին: Տայուորիկի փուռերը երկաթ կը հալեցնէին, դոնէ պողպատէ սուր ու դաշոյն ունենալու համար:

Երկաթին զնգոցը կը լսուէր ամէն տեղ...

Ճ

Փետրուարեան խեղդուկ ձմեռ մըն էր այդ տարին, եւ ստեղծաբար ամէն օր, Մուշէն ու Դաշուէն, կը հասնէին Սասնոյ կեդրոնը:

Մշոյ կեդրոնական Կոմիտէի շտապողական լուրը քննութեան կ'առնէին այդ օրերուն: Վահան եւ Հրայր զինուորական խորհուրդը նիւտի հրաւիրած էին:

— Ահա՛ Կորոյնէն հասած նամակը, որմէ կը պարզուի թէ թրքական զօրքերը արդէն շարժումներ կ'ընեն դէպի Կուրտիկի բարձունքները: Ձիւնը մաքրելու համար հազարաւոր հայ աշխատաւորներ հաւաքած են, բազ ու բրիչ տուած են անոնց ձեռքը, ու հարկադրած են հսկայական լիբան ճանապարհները բանալու:

— Կը թուի թէ, — ըսաւ Հրայր, — թրքական բանակը ուրիշ տարիներու սոյնորութեամբ, ամբան պիտի չսպասէ յարձակողականի սկսելու:

— Դժուար ըմբռնելի է, որ թրքական զօրքերը Սասնոյ ձիւններուն մէջ նետուին, — ըսաւ Վահան, — բայց լսենք զինուորական խորհուրդի կարծիքը այդ մասին:

— Թուրքերը կրնան այդպիսի շարժում մը ընել, — ըսաւ Անդրանիկ, — ոչ թէ ամբողջական Սասունը գրաւելու ձմբան այս օրերուն, այլ կրնան Կուրտիկ բարձրանալով մեզ ջղային վիճակի մէջ պահել եւ թոյլ չտալ, որ մեր պատրաստութիւնները լրացնենք:

— Թուրքերը վատ դիտաւորութիւն ունին, — միջամտեց Գէորգ, — մեզ լեռներու գազաթնքերէն զրկելու համար: Թրքական բանակը երկու-երեք անգամ զինուորական ուժով Սասնոյ վրայ քայլեց ու միշտ նախընտրեց Յուլիս, Օզոտոս եւ Սեպտեմբեր ամիսները, երբ կրնային ամէն տեղ շարժիլ եւ թնդանօթները հանել մեր դէմ: Փորձով անոնք գիտեն, որ մեր ժողովուրդի ապաւէնը բարձրագիր լեռներն են, եւ անոնց խորխորատները: Սասունցիները կառչած կը մնային այդ ժայռերուն ու թրքական բանակները, իրենց թնդանօթներով, գժուարութիւններու կը մատնուէին: Եկած լուրէն կասկած մը կը մտնէ սիրտս: Թրքական բանակը այս անգամ ձմեռը չվերջացած՝ մեր դէմ պիտի ճակատի: Մենք գիւղերու մէջ ապաստանած՝ աւելի դժուարութեան պիտի մատնուինք, քան թրքական զօրքերը: Խորհրդակցութիւնը շարունակուեցաւ: Կարծիքները առին Մուշի եւ

Գաշտի փորձառու մեկտայիններուն, ու եկան այն եղբակացութեան, որ նախազուրկական միջոցներ ձեռք պէտք է առնեն, յանկարծակիի չգալու համար:

Ազատութեան պահակները արթուն էին:



Գէորգի խումբը մեկնեցաւ Խիանք, քրտական շարժումները զուպելու եւ Հեղինի ու այլ դիւզերու բնակիչները տեղափոխելու ղէպի իշխանձոր Անտոքի հարաւային գագաթին տակ, որպէսզի անոնց պաշտպանութիւնը ապահովուի:

— Մուրա՛տ, եկուր միասին երթանք, — ըսաւ Գէորգ, — կ'անցնինք Տալուորիկէն, կը ծանօթանաս Ապիտակ սարի դերքին եւ հարաւային մեր դիւզերուն:

— Միրով, պատրաստ եմ անմիջապէս մեկնիլ խումբին հետ, — ըսաւ Մուրատ, որ մեծ փափաք ունէր շարժումներու եւ զործողութիւններու ընթացքին Գէորգի հետ միասին ըլլալու:

Փետրուարի վերջերուն Գէորգ եւ Մուրատ, իրենց մարտիկներով, մեկնեցան ղէպի Հեղին:

Ծննայինները բոլորն ալ լախան ունէին եւ ձիւնի վրայէն կը քալէին առանց խրելու: Տալուորիկէն անցնելէ ետք, յաջորդօրէն կը հասնէին Հեղին:

Հեղինի ժողովուրդը արդէն ոտքի ելած էր, Անտոք ապաստանելու, ձիւնալքէն առաջ: Անոնք գիտէին, թէ քրտական ցեղախումբերը պիտի խուժէին ղէպի Հեղին, ու իրենք միջոցներ չունէին զիմադրելու:

Սարհատ զէնքը զրկելէն եւ Սարերու Ասլան դառնալէն ետք, տանը-չորս տարիներէ ի վեր վերադարձած չէր Հեղին: Ու ահա, ողբերգական այս օրերուն, կրկին անգամ ոտք կը դնէր իշխան Վարդանին տունը, ուր պատանեկան այնքան սրտայոյզ ապրումներ ունեցած էր:

Բայց օրհասական այս պատերազմին, ամէն զգացում թաղուած կը պահէր կուրծքին տակ: Հոգեկան կարողութիւն չունէր աւելի հետաքրքրուելու եւ բան մը իմանալու Մուսամի գոյութեան մասին: Փոթորիկը եկած էր եւ գիւղերը ամբողջ կը սրբէր, կը տանէր ղէպի նահատակութիւն, ու ինք կը սպասէր թէ իր հին օրերու սէրն ալ, անմար կայծ մը, որ անթեղուած կը մնար իր սրտի ամէնէն խորունկ անկիւնին մէջ, այս հրդեհէն մոխիր պիտի դառնար:

— Իշխան Վարդան, — ըսաւ Գէորգ, — այս անգամուան կոխը ծանր պիտի ըլլայ ու դուք ալ ստիպուած էք մասնակցիլ այս գոյամարտին:

— Ատտուած ողորմած է, կը կոտինք, կը մեռնինք, յաջորդները մեր գործը կը շարունակեն: Տուե՛սով ու տեղով ձեզի հետ ենք, ահա պարոն Մուրատը, որ ներկայացուցիւր ինձի, հետու-հետու երկիրներէն եկած է, մեր լեռներուն վրայ իր կեանքը զոհելու, մենք ինչո՞ւ նոյն բանը պիտի չընենք: Մեր դիւղի երիտասարդներուն ալ դուք ճար մը կը գտնէք:

— Ծար մը կը գտնենք, — ըսաւ Մուրատ, — եթէ չկարենանք բոլորը զինել, թող իւրաքանչիւրը թշնամի մը տապալէ ու անոր զէնքով զինուի:

— Այդպէս ալ կ'ըլլայ, երբ բոլորս մեր տունն ու տեղը աւերակի կը վերածենք, աշխարհք կը դառնայ դժակ, մենք ալ դանակ, ո՛վ որ կրնայ թող կտրէ իր սուրով եւ ուսէ:



Յաջորդ օր, Սպիտակ լեռան բարձունքներէն սեւ ամպերու պէս կը շարժէին Հեղինցիները, ձիւներու ընտել, լեռներուն ծանօթ, կարծես թէ ուխտի կ'երթային նշանաւոր վանք մը: Բայց այդ վանքը Անտոքն էր, ուր պիտի համախմբուէին Հեղինի, Սեւիթի եւ Ընկուզնակի գիւղացիները, Իշխանձորի ճակատէն Հարուածելու Հարուէն եկող ցեղախումբերն ու թըրքական զօրքերը:

Անոնց կը միանար Ահարոնքի մարտական խումբը, Իշխան Գալուստի ղեկավարութեամբ:

Իշխան Գալուստ անուանի ու կտրիճ մաւտրական մըն էր, Չերմօրէն կապուած Հրայրին եւ անոր աջ բազուկը կը հանդիսանար Ռուբի շրջանին մէջ: Ծակասին սուրի խոր վէրք մը եւ ձախ ձեռքի չորս մատներուն կորուստը մարտական շքանշաններ էին անոր, ու այս անգամ Սարէրու Ասլանին հետ կը նետուէր մարտի դաշտը:

Փետայիներու խումբը տեղական եղած ժողովուրդի թիկունքը պակեց եւ կամաց-կամաց առաջացաւ Սպիտակ լեռան բարձունքներէն դէպի Տալուորիկի կիրճը: Գէրին լեռան կողերէն թեքուելով՝ ժողովուրդը ուղղուեցաւ դէպի Իշխանձոր:

Ամբողջ ճամբու ընթացքին, Գէորդ ու Մուրատ զորոյցի մէջ էին ու Մուրատի հետաքրքրութեան գոհացում տալու համար, Գէորդ կը պատմէր Տալուորիկի Հերոսական կռիւներուն մասին, որոնք տեղի ունեցած էին այդ լեռներուն ու ձորերուն մէջ:

Քանի մը փառքաններ ու ժանտարմաներ, որ կը գտնուէին այդ շըրջաններուն մէջ, որպէս անցորդ, լեղապատառ կը փախչէին դէպի Հարու: Երթելէկը այդ դատարկ միջավայրին մէջ կը դառնար վտանգաւոր:

Գէորդ ու Մուրատ հաղիւ հասած էին Կէլիկուզան, երբ անհրաժեշտ եղաւ դէպի Տարկոշ շարժում մը, ջրտական ցեղախումբ մը այդ շրջանէն հեռացնելու համար, որպէսզի անոնք յենարան շրջանին թրջական բանակին, Կրկին անգամ Գէորդ ու Մուրատ միասին էին, որոնք Շէնիկցի Փետայիներու հետ կ'ուռի մէջ կը նետուէին, արագ Հարուածի տակ առնելով Մամլբանցի ցեղախումբը, որ բազմաթիւ դիակներ ձգելով՝ այդ շրջանէն կը հեռանար դէպի Հարաւ, Տարկոշէն անդին:

Այս դէպքերու ընթացքին՝ Գէորդ եւ Մուրատ իրար կը շփեցին կռուի շարժումներու մէջ, ու երբ յաղթական վերադարձան, Մուրատ Շէնիկցիներուն բաւ:

— Գէորդը իսկապէս ձեր լեռներուն սայանն է, ի՞նչ ճկունութիւն եւ ի՞նչ անվեհեր խիզախութեանք տեսայ այդ կտրիճին մէջ:

Շէնիկցի Վարդանը, կոճղի պէս մարդ մը, որ Սասնոյ բոլոր դէպքերուն մասնակցած էր զէն ի ձեռին, պատասխանեց.

— Պարո՛ն Մուրատ, դուն Գէորդը տեսնէիր Տալուորիկի եւ Անտոքի կռիւներուն: Լեռները կը զողային անոր սաքին տակ: Սասունցիները, ամէնն ալ, կ'ուռոյ են եւ իրար գոգնելու սովորութիւն չունին, բայց Գէորդին Սարերու Ասլան անունը տուին, ու ան արժանի է այդ անուան: Գէորդն ալ քեզ շատ քովեց մեզի:

Մուրատ յանկարծակիի եկաւ Գէորդի այս գովեստին ի լուր:

— Պարո՛ն Մուրատ, մենք այս լեռներուն մէջ, ամէն օր կ'եանք եւ

մահուան կռիւ կը մղենք: Մեր քաջութիւնը մեր աչքին չ'երեւիր, բայց երբ կը տեսնենք քեզի պէս կտրիճները մեր կողքին, անձնազոհութեամբ մեզի կ'օգնեն մեր պուպարին ժամանակ, անոնց հերոսութիւնը գերազանց է եւ զովեստի արժանի:

- Քաջութիւնը այս լեռնակոտ ժողովուրդին կը վայելէ: Անոնք են ազատութեան դրօշակիրները, - խօսքը վերջացուց Մուրատ, սիրտը ուռած հպարտութեամբ, որ ազատագրական մեծ շարժումին մէջ կը մկրտուէր զէնքի շաշիւններով, Սարեբու Ասլանի կողքին:



Անդրանիկ ստուար խումբով մը նոյն օրերուն կը մտնէր Քափըք գիւղը, Բարձրաւանդակի միակ գիւղը, որ Հայերէ, Գիւրտերէ ու Քուրճերէ բնակուած էր: Գիւրտերն ու Քուրճերը քանի մը դիակ ձգելով, Միրին-Կատարէն վար կ'իջնէին Մուշ, ապաստանելով թրջական իշխանութեան ձօռ: Մուշէն դէպի Սասուն, Միրին-Կատարի ստորոտին զետեղուած գիւղ մըն էր Քափըք, փուշ մը այդ նանապարհին վրայ, որ կը մաքրուէր մէկ հարուածով:

Այս երեք նախդրուշական ձեռնարկները ցնցող տպաւորութիւն ըրին Քուրճերուն վրայ: Անոնք կարծեցին թէ Ճետայիները կուսի նախաձեռնութիւնը իրենց ձեռքը առած էին: Թրջական թաղերը վիճուկի մէջ էին: Լուրբեր շրջան կ'ընէին, թէ Ճետայիները միտք ունին լեռնէն վար իջնել, Մուշը գրաւել եւ թրջական դօրանոցները հրդեհի տալ:

Սուտ եւ իրաւ լուրբեր իրարու կը յաջորդէին: Հայերը դիտէին, թէ անհաւասար կռուի մը կը բռնուին, բայց ողբերգուած ու խանդավառ՝ անվախօրէն կը գիմաւորէին զոյամարտը: Իսկ Քուրճերը վախով լեցուած էին ու իրենց համար անորոշ էր այն ուժը, որ կուտակուած Սասնոյ բարձունքներուն, կրնար ամէն օր ռումբի պէս պայթիլ:



Այդ օրերուն, Հրայր Սասնոյ բարձունքներէն հրատարակեց իր սըրտառուչ կոչը, ուղղուած Տարօնի Կոմիտէներուն եւ մարտական խումբերուն, որպէսզի անոնք իրենց բնտիր մարտիկները զրկեն դէպի Սասուն: Ազատամարտը կեանքի եւ մահուան օրհասական կռիւ մը պիտի ըլլար, մահը արհամարհողները միայն կրնային լեռնանալ թրջական բռնակալութեան դէմ:

Ու այս կոչը նաեւ կ'արձագանգէր սահմաններէն անդին, ուր արշաւախումբեր պատրաստ էին կրակի մէջ նետուելու:

Կոչը Յակօն, Մշոյ մէկ ախոռին անկիւնը կծկուած՝ Հրայրի կոչը երգի կը վերածէր: Երգը, նոյն օրերուն, սկսաւ հնչել քաղաքէ քաղաք ու գիւղէ գիւղ.

Ով որ քաջ է, ինչ կը սպասէ,
Մահ պատերազմի օրեսա է,
.....
Անվրէպ խփռըլը թող գայ...

Երկաթէ մարդ, քարէ հողի կտրիճներ ամէն կողմէ նետուեցաւ ձիւներուն մէջ, բարձրանալու համար դէպի Սասուն:

Տարօնի ներաշխարհը հրաբուխի ցնցումներ ունէր: Ամբողջ ժողովուրդ մը լեռնէ լեռ, դաշտէ դաշտ ինքզինք ազատութեան սեղանին դոհ բերելու պատրաստակամութիւնն ունէր: Ծեր, երիտասարդ թէ պատանի, կանայք մանաւանդ, իրենց ժողովուրդութեամբ ժողովուրդին ներաշխարհը կը հրդեհէին:

Ու այդ օրերուն նոր երգ մը կը հիւսուէր, դիւզական մարդու հոգեկան ապրումները սրտառուչ պարզութեամբ զանգահարելու զաւանէ կաւառ, աւանէ աւան:

Ջուխտ եզ ունեմ, ծախտ կու տամ,
Քանի որ տամ պիտ ծախեմ,
Զիմ կիկոյիմ քիւփէնկ մ'առնեմ,
Տանեմ գրեմ Ֆետայի:

Ելի՛ր լաօ, զէնք վերուր,
Թոզունք մեր շահ, աշխատանք,
Օտարէն փայտա չկա՛յ,
Ելի՛ր, տագէ քու քիւփէնկ...

Ով Տէր Աստուած, հագիս շառնես,
Ես զիմ կիկոն տեսնէի,
Թեւիմ քիւփէնկ, դաշիմ փիշէնկ,
Այս, այն օրը տեսնէի:

Ու ժողովուրդը անզուսպ ժողովանդութեամբ տունը մոխիրի կը վերածէր, Ազատամարտին մասնակցելու համար...:

✽

Մուշ քաղաքէն ամէն մէկ խումբ իր ընտրեալները կը գրկէր լեռ: Թաղերէն ելած իւրաքանչիւր խումբ կ'ընտրէր լեռան այն կողմը, որ թաղին կոնսակն էր: Մուրթ Մարինէ թաղէն եօթը կտրիճներ տունէ-տուն անցնելով, իրենց յատկացուած զէնքերը կ'առնէին եւ կը բարձրանային Կողի թաղին վերին տուները: Թուրք զինուորներու ջոկատները ամբողջ թաղը հսկողութեան տակ առած էին ու տանիքէ տանիք կ'անցնէին, հսկելու համար ամէն շորժումի վրայ: Եւ սակայն, նեղլիկ փողոցներէն կտրիճները կ'անցնէին ու տան մը կից շինուած թոնիրէն եօթը մոսիներ կը ստանային պատանիի մը ձեռքէն, որ պահակ էր այդ զէնքերուն, ցուրտէն սրսփուն՝ կը սպասէր պարտականութիւնը կատարելու: Երբ անձնուրացները պատանիի ճակատը համբուրելով կը հեռանային թոնիրի մօտէն, նոյն տանիքին վրայ թրքական ջոկատը կու պար ստուգելու շշուէր, որ լուռած էր փողոցներու ընկմէջէն, ու այդ պահուն, դոցուած դռնէն պատանին հագիւնեքս կը սարդէր: Զինուորները կ'իջնէին խուզարկելու թոնրատունը, որ զատարկ էր: Հսկիչ զինուորները ուրիշ փողոցներ կ'անցնէին, հետապնդելու համար այն ոտնաձայները, որոնք կը հասնէին իրենց:

Պատանին եւ անեցիները իրենց շունչը բռնած՝ կը հետեւէին ոտնաձայներուն, զինուորներու խօսակցութեան, սրտատրոփ սպասելով զէպքին, որ կրնար պայթիլ անձնուրացներու եւ թուրք զինուորներու միջեւ:

Սպասումի ու անձկութեան այդ պահուն, Կողի թաղի վերին տուներէն կանացի ճիւղ մը լուսութիւնը խղից:

- Կը տանին զիս, անաստուածները ի՞նչ կ'ուզեն մեզմէ՛ :

Ու լացի ճիւղերը կը շարունակուէին :

Այդ թաղի մարդիկ, բոլորն ալ արթուն ու լուռ, անձկութեամբ կը հետեւէին ճիւղերուն ու կը զգային, թէ ծանր պատահար մը տեղի ունեցած է վերի տուններուն մէջ : Բայց անոնցմէ ոչ ոք այն պիտակցութիւնը ունէր եւ հոգեկան այն տառապանքը, որ կ'ապրէր այն պատանին, որ քառորդ ժամ առաջ մոտինները յանձնած էր անձուբացներուն :

Եւ սակայն անձուբացները քանի մը վայրկեան առաջ այն տունէն ելած՝ բռնած էին Կողի թաղի բարձունքները եւ ուղղուած դէպի Միրին-կատար : Անոնք միւսներու մէջէն կ'ընթանային, երիտասարդական կորովով, երջանիկ, կ'երթային մասնակցելու ազատամարտին, որ տեղի պիտի ունենար Սասնոյ բարձունքներուն վրայ : Անոնց փոխարէն, նոյն տան միակ պահակը, կորովի կին մը՝ Մարիամը կը քաշկուտէին պահականոցէ պահականոց ու կը նետէին բռնտ . հոն կը մնար անձամբ ու տառապանքով իր մասնակցութիւնը բերելու մահ-պատերազմի օրհասին :

Դաշտի անձուբացներէն ոմանք Առաքելոյ վանքի ճամբան բռնեցին, իսկ ուրիշներ Մ. Յովհաննու բարձունքներէն անցան դէպի Սասուն, շատ անգամ ընդհարելով թրքական պահակազուգներուն : Բայց բոլորն ալ յաջողութեամբ հասան Ֆետայիներու բանակատեղը, իրենց ետեւ ձգելով բռնութեան տակ անբացող Մշոյ Դաշտը, որ պատրաստ էր իր ամբողջ ժողովուրդով զոյամարտին մէջ նետուելու :



Թրքական ոճրամիտ իշխանութիւնը բանտերու մէջ լեցուց Դաշտի եւ այլ շրջաններու զեկամարները, ժողովուրդը գլխատելու համար : Ու բռնտը դարձաւ կեղծոնատեղի մը նուիրեալներու, որոնք զնտանէն կը մասնակցէին ազատագրական շարժումին եւ բանտէն, իրենց թելադրանքներով կը զեկամարէին գիւղական շրջանները, պայքարը աննկուն շարունակելու բռնակալութեան դէմ :

Այդ օրերուն արդէն բանտին մէջ կազմուեցաւ կեղծոնական կոմիտէ մը, որ կը գործէր իրաւասութեամբ ու զազոնապահութեամբ :

Դաշտէն ու Մուշէն լեռ բարձրացող Ֆետայիները կը գտնէին հոն, վերը, ազատամարտի այդ բարձունքներուն վրայ, իրենց այնքան երազած հերոսները, որոնք սպառազէն ազատամարտին կը սպասէին :

Վեր ելլողները կարծես թէ նոր կը մկրտուէին սրբազան ուխտին մէջ, ու ինքնին հերոսական ողի մը կը կրէին, տակաւին արեան մկրտութիւնը չտեսած :

Անոնք կը դառնաւորուէին այն խումբին մէջ, որոնց խմբապետները Դաշտէն ու Մուշէն էին :

Ու երբ պահ մը Գէորգ Չառուչ եւ Մուրատ աչքէ կ'անցնէին նոր անձնուբացները, Գէորգ յուզումով հարցուց երիտասարդ, կարելի է ըսել պատանի, բայց կորովի ու առնական մէկ մարտիկին :

- Տղա՛յ, Գալէ՛, զուե ինչո՞ւ համար եկած ես, չէ՞ որ ձեր տունը ալ մարդ չի մնար :

Գալէն գլուխը կախ :

- Ինչպէ՞ս տունը մնայի : Պողէի եւ Մոսոյի յիշատակը ոտքի տա՞կ տայի . . .

Գէորգ ակնյայտնի յուղումով զարձաւ Մուրաթին .

– Գիտե՞ս Մուրաթ, Գալէի երկու մեծ եղբայրները մեր Հին Ֆետա-
յիներէն էին, անցեալի ճակատամարտներուն անոնք ինկան պատուոյ դաշ-
տին վրայ: Անոնց օճախը վառ պահողը կը մնար այս պատանին, ու ահա
ա՛ն ալ եկած է մատող դառնալու ազատութեան սեղանին:

Մուրաթ ալլալլած մտիկ կ'ընէր Գէորգը, որ ցած ձայնով կը խօսէր
նորահաս անձնութեանը քիչ մը հեռու կեցած:

Երբ Գէորգ Չաւուշ առանց խօսքի նայեցաւ Գալէի դէմքին, որ այդ
պահուն կորովի գինուորի մը պէս գլուխը վեր, արձանային, Գէորգի խօս-
քին կը սպասէր: Գէորգ լուռ էր, խօսքը կը պահէր այդ պահուն: Գալէն
այդ լուսթիւնը աւելի քան խօսուն դտաւ, ստիպուած մրմնջեց .

– Պարո՛ն Գէորգ, մայրս ալ ուզեց որ ես զամ Բարձրաւանդակ, Պո-
ղէի եւ Մուսոյի յիշատակը վառ պահելու համար:

Երեք անձնութեան ազատութեան սեղանին զո՛հ բերող մօր մը ան-
հուն հաւատքը նահատակներու անմահութեան մասին, բոլորը յուղումի
մասնեց: Գէորգ եւ Մուրաթ անխօս հեռացան Արդաւանքի խումբէն, ու
երբ արդէն գուրան էին, առանձին փողոցին մէջ, Մուրաթ ալլալլած կը
հարցնէր Գէորգին .

– Ջոնքրու այս ի՞նչ շարան է, որ մինչեւ վերջին մարդը կրակին մէջ
կը նետուին, օճախին մուխն իսկ մարեցնելու զնով: Աերթ Աղբիւր իր եղ-
բայրներով եւ զաւակներով այս ճամբայէն անցաւ: Սուլուխի Արիւծ Մե-
րթը իր երկու կորեւներով Տէլի Պապայի ճակատամարտին մէջ ինկաւ,
եւ հիմա ալ, աչքիս առջեւ այս արի պատանին, որ վերջին շառախին է Պո-
ղէնեց տան, այս բարձունքներուն վրայ կրնայ նահատակուիլ զուպարնե-
րուն մէջ, ու սեւ քօղ մը քաշել մօրը դիտուն, որ արդէն երկու կորեւներ
զո՛հ տուած է ազատութեան սրբազան սեղանին:

– Մեր այս անտէր երկրի բոխտը այսպէս եղաւ, Մուրա՛տ, մտիք
Սասունցի ունէ մէկուն տունը ու հարցուր, թէ անցնող սասնամեակի ազա-
տամարտներու ընթացքին ի՞նչ զոհեր տուած են, ու զարմանալին այն է,
որ անոնք կը հաւատան թէ իրենց նահատակները անմահ են: Ազատութեան
գինովութիւնը ուրիշ բան է, անզուսպ հեղեղ մըն է, որ ամէն պատուար
քանդելով կ'անցնի խելայեղ թափով:

Գէորգն ու Մուրաթ նոյն հեղեղի տարբերքին մէջ էին, ազատութեան
գինովութեամբ տարուած, իրենց երիտասարդ կեանքը զոհողութեան սե-
ղանին դրած էին ու բնական կը գտնէին այդ վիճակը: Մինչ Գալէի ներկա-
յութիւնը զոհողութեան սահմանները կը գլխի կ'անցնէր . . .



Հրայրի եւ Վահանի շուրջ բոլորուած էին գինուորական խորհուրդի
անդամները:

Հոն էր Անդրանիկը, որ իբրեւ արծիւ կը սաւառնէր լեռ ու ձոր, Հոն
էր Գէորգ Չաւուշ, Մարերու Սոլանը, բոլորին սիրելին ու Ֆետայութեան
ձգտող բոլոր երիտասարդներուն իտէալ հերոսը: Հոն էին ժայռի պէս ա-
մուր Գեորգն ու Սեբաստացի Մուրաթը քաջակորով: Ու անոնք կը խօսէին
անխուսափելի ապստամբութեան կարելիութիւններու մասին: Մտահոգ էին
ու անձկութեամբ կը սպասէին այն խումբերուն, որ այդ օրերուն կո՛վկաս-
եան սահմաններէն արդէն ճամբայ ելած պիտի ըլլային:

Բացի Հրայրէն, բոլորն ալ խանդավառ էին ու ոգեւորուած: Բանակ մը ունէին արդէն իրենց ձեռքին տակ, ու այս անձնուրացներու ներկայութիւնը յոյս ու հաւատք ներշնչած էր Սասունցի ժողովուրդին, որ զէնքէն փարած՝ պատրաստ էր նետուելու արիւնալի ճակատամարտներու մէջ: Այդ օրերուն Սասուն պիտի վերադառնային Աշոտ Երկաթն ու Կայծակ Վաղարշակը, Թորգոմն իր խումբով ու Նիկոլ Դումանը, որ փոթորիկի պէս պիտի անցնէր Վանէն ու բարձրանար արծիւներու այս բոյնը: Մասիս եւ Արտաս-ւազդ խումբերը ճամբայ ելած էին արդէն Բաղրեւանդի ճամբով: Բայց աս-նոնցմէ լուր մը հասած չէր Բարձրաւանդակ:

Վտանդի եւ սպասուածներու այդ օրերուն, Հրայր անհրաժեշտ նկատեց վերջնական քննութեան մը ենթարկել ճակատամարտի Հասանականու-թիւնները եւ իրենց զիրքաւորութիւնը:

— Սիրելի՛ք, թրքական բանակը մեզ օղակած է, բայց տակաւին բարձունքները ձիւնապատ են ու մենք կրնանք տասը օր ալ դէռ շունչ քաշել: Մեզի հօտած տեղեկութիւններէն յայտնի է, որ հարաւէն, թրքական վաշտերուն հետ, բազմահազար Գիւրտեր կ'առաջնան դէպի Անտոք: Կոմիկս-սէն եւ Պարսկաստանէն մեկնող խումբերէն տակաւին լուր չունինք: Վասպուրական փոխադրուած զէնքերն ու ռազմամթերքն հոն կը մնան, մինչ-դէռ ռազմական այդ պաշարը արդէն Սասուն հասած ըլլալու էր: Կուսակ-ցութեան ընդհանուր ժողովը վերջացած է, բայց մեր պատգամաւորները՝ Թորգոմ, Աշոտ Երկաթն ու Կայծակ Վաղարշակը չվերադարձան, որպէսզի անոնցմէ իմանայինք, թէ ի՞նչ որոշումներ կայացուցած է կուսակցութեան զերթագոյն ժողովը: Ուրիշ ո՞ր վայրերուն մէջ դէպքեր պիտի պատահին եւ ինչպիսի՞ օժանդակութիւն պիտի բերեն մեր արտամարտական ձեռնարկին: Թշնամին այս անգամ նոր ռազմավարութեամբ մը կը շարժի մեր զէնք: Յարձակումը կրնայ սկսիլ այս օրերուն, երբ Անտոք, Մոմասար եւ ուրիշ նպաստաւոր դիրքեր ձիւնապատ են, ու մենք չենք կրնար օգտուիլ ազատ լեռներէն: Այս պահուս, երբ մեզ հետ կը խօսիմ, աչքի առջեւ ունիմ այս բոլոր իրողութիւնները, ու այդ պատճառաւ կ'առաջարկեմ հաստատ մնալ մեր այն որոշման վրայ, որ արտամարտութիւնը սահմանափակենք Սասնոյ շրջանին մէջ: Միւս շրջանները անտեղի կերպով կրակի մէջ չնետուին, ինչ որ բազմաթիւ շրջաններու կործանումը պիտի նշանակէ:

— Արդէն Դաւաթի եւ Մուշի մարտիկները լեռ բարձրացած են եւ տրամարանական է, որ այս տարի սահմանափակենք մեր դործողութիւնները Սասնոյ սահմաններուն մէջ, ինչպէս կը թելադրէ Հրայր, — ըսաւ Վահան, բայց աւելցուց, — լսենք մեր վիճակագրական վարիչներու կարծիքը:

Առաջին խօսողը եղաւ Անդրանիկ:

— Մեր յեղափոխական կռիւները, իմ կարծիքով, փարթիզանական բնոյթ պէտք է ունենան: Տեղ մը մեր ամբողջ ուժերը կրնանք նետել ճակատամարտի մէջ, բայց տեւական զիրքային կռիւը մեր ուժերը կը սպառէ: Պէտք չէ որ նոյն տեղը մնանք, մեր ուժերը քիչ են եւ անոնց խմբական ու հարուածային քայլերը կրնան թշնամին շփոթի մատնել: Այս դործելա-կերպը պէտք է որդեգրենք, բայց առայժմ մնանք Սասնոյ սահմաններուն մէջ:

Մուրատ եւ Քեռին Համամիտ էին այդ երկու դործելակերպն ալ որդեգրելու: Միայն մտահոգ էին այն իրողութեամբ, որ լեռնային բոլոր բարձունքները ձիւնապատ էին: Այս բարձունքները հազիւ Մայիսի վերջերուն

կը բացուէին եւ Հնարաւորութիւն կու տային մարտական լայն շարժումներու:

Սարերու Ասլանը լուռ էր: Ծրագիրներ եւ առաջարկներ չունէր: Գէպերու մէջ նետուած պահերուն, տեղի եւ գիրքի համեմատ, ուղղակի-րութիւնը պայծառօրէն կը պատկերանար անոր մտքին: Նախօրը տարինբ-րու ապստամբական շարժումները ոտքի հանած էին հայ ժողովուրդը, որ իր բազմութեամբ պարզ խումբ մը չէր, այլ ժողովրդական զանգուած մը, որ կուռնին մէջ նետուած էր:

Ճետայինները կրնային խմբական շարժումներով տեղէ տեղ փոխա-գրուիլ, մէկ ճակատամարտին խուսափել, ուրիշ տեղ մը կուրը ընդունիլ, բայց ժողովուրդը որքան ալ թեթեւաշարժ ըլլար, եւ ծանօթ միջավայ-րին, ստիպուած էր ճակատ յարդարել այս ու այն շրջաններուն մէջ:

Այս մտաուճեաները կը թաւալէին Գէորգի ուղեղին մէջ, երբ Հրայր Խոսքը անոր ուղեղով հարցուց.

- Գէորգ, քու կարծիքդ ի՞նչ է: Այս լեռներուն վրայ տեղի ունեցած բոլոր դէպքերուն եւ ինքնապաշտպանութեան կռիւներուն մասնակցած ես տասնըչորս տարիներէ ի վեր: Ամիսներէ ի վեր այս հարցերը կը քննեմ, դուն ընդհանրապէս մտիկ կ'ընես, առանց կարծիք յայտնելու: Իայց ես քեզ տեսած եմ նաեւ կռիւներու ընթացքին, ու գիտեմ թէ կուռնին մէջ նետ-ւելէ ետք՝ ո՛չ կարծիք կը հարցնես, ոչ ալ կը տատանիս, այլ կուրը կը վարես ու բարեբախտաբար՝ միշտ զուրս եկած ես յաջողութեամբ, ամէնէն ծանր պարագաներուն իսկ: Հիմա մենք խումբ մը չենք, այլ ազատագրա-կան բանակ մը: Մենք լայն գործողութիւններու ձեռնամուխ պիտի ըլլանք: Պետութիւն չենք, որ բանակին հետեւն ուրիշ բանակներ հասցնենք, ու խումբ մը չենք, որ հեռաւոր ժայռի մը ապաստանինք: Ես կ'ուզէի, որ դուն ալ խորհուրդ մը տաս, որպէսզի ձեռնայինբու վարիչները օգտուէին անցեալի փորձառութիւններէն:

- Պարոն Արմենակ, իմ գործս կուրը եղած է ու կուռնն դուրս գալը միշտ դիւրին է, եթէ քանի մը հողիով ենք: Ինչ որ մտահոգիչ է եւ այդ մասին պէտք է խորհնք, մեզի հետ ապստամբող Սասունցի ժողովուրդն է: Այսքան ուժ հոս համախմբելէ ետք, այդ ժողովուրդը իր ճակատագրին հետ միանկ չենք կրնար ձգել: Շեշտակի հարուածներ պիտի տանք թշնա-միին ու շատ յաճախ պիտի փորձենք անոր կռնակը անցնել: Մենք մեր ա-րազաշարժութեամբ կրնանք շփոթի մատնել թրքական բանակին շարքերը, քանի որ տասը հազարի հասնող զանգուած մը պիտի մտնէ այս լեռներուն եւ ձորերուն մէջ: Այս բոլոր գործողութիւններուն ընթացքին, մեր վարիչ մարմինը պիտի ըլլայ Սասնոյ իշխաններուն հետ, միշտ պահեստի ուժով մը, որպէսզի ժողովուրդը, որ ամբողջութեամբ կուռնին պիտի մասնակցի, ապահով զգայ, թէ մեր մարտական ուժերը իր հետն են ո՛ւր որ ըլլան ա-նոնք: Մշտ Պաշտին մէջ տեւական դիմադրութիւն մը դժուար է կազմա-կերպել, Պիթիսէն, Էրզրումէն, Տիգրանակերտէն եւ Խարբերդէն ճամբա-ները կ'անցնին անոր վրայէն, ու թուրք բռնակները դիւրութեամբ կրնան մոխիբի վերածնել քանի մը զիւղեր, եթէ դիմադրութիւնը հոն կեդրոնացած ըլլայ: Ի գուր չէ, որ ազատագրական շարժումները Սասնոյ բարձունքնե-րուն վրայ տեղի ունեցան: Յեղափոխական ապստամբութեան մը համար, այս լեռները փոքրիկանական խումբերուն եւ անոնց շարժումներուն հա-մար մէկ մէկ բերդեր են: Ծակառագրական կուրը այս բարձունքներուն վրայ տեղի պիտի ունենայ: Հետեւանքները ես չեմ գիտեր, բայց գիտեմ թէ

յամառ եւ անտեղիտայի կռիւն է, որ կրնայ թշնամիին թափը կոտորել: Մնացածը ժամանակը ցոյց պիտի տայ, թէ ի՞նչ պիտի վիճակուի մեզի եւ Հայ ժողովուրդին:

Պորճրդակցութիւնը վերջ գտաւ:

Աշխատանքի բաժանում կատարեցին: Գէորդ ստանձնեց Տալուորիկի եւ Անտոքի հարաւային ճակատներու հրամանատարութիւնը: Հրայր Հիւսիսային ճակատի պատասխանատուութիւնը՝ կեդրոնասեղէ ունենալով Շէնիկ գիւղը: Անդրանիկ կեդրոնի հրամանատար կը մնար, իր կողքին ունենալով Քեռին, Մուրատը, Կոտոյի Հաճին, որոնք պատասխանատու մարմնի կեդրոնէն պիտի հետեւին կռիւններուն, ուժեր բաշխէին այս եւ այն ճակատին վրայ, եւ Հասնէին օգնութեան հոն, ուր վճռական հարուածի մը անհրաժեշտութիւնը կար:

Վահան կը մնար կեդրոնը եւ կապ կը պահէր բոլոր վարիչներուն եւ իշխաններուն հետ:

Օրերը ճշմարտամային էին:



Ապրիլի առաջին օրերն էին:

Մուշ քաղաքի Հայերը կը հետեւէին թրջական բանակի շարժումներուն, որոնք Արջգլորի վերելքէն եւ Ձորի թաղի գետակի եզերքէն վեր կը բարձրանային մեծ զանգուածով: Այդ գործողութիւնը իրենց աչքին առջև տեղի կ'ունենար քանի մը օրերէ ի վեր: Թուրք բանակը Կուրտիկի բարձունքները կը բռնէր, այդտեղէն իջնելու համար վար, դէպի Շէնիկ ու Սէնալ, որոնք առաջին ճակատը կը կազմէին յեղափոխական բանակին:

Բազմաճաղար Հայ բանուորներ բռնի բերուած էին ձիւնը մաքրելու ու ճամբայ մը բանալու թուրք բանակին, որ սեւ ու սղոտոր հեղեղի մը պէս կ'երեւնար ձիւնի ճերմակութեան վրայ: Ու հիմա, Հայ դիւղերէն զբաւաւած եզներով ու գոմէշներով թնդանոթները կը բարձրացնէին լեռն ի վեր, զօրքի ետեւէն:

Մուշը ծանր մտահոգութեան մէջ էր: Ամէն գիշեր սուրհանդակներու միջոցաւ զեկուցումներ կը հասնէին Բարձրաւանդակ, զօրքի շարժումին մասին:

Շէնիկ եւ Սէմալէն արդէն պարզ աչքով կ'երեւէին Կուրտիկի բարձունքներուն գետեղուած վրանները ու սեւ զօրքին նոր դիրքերու դրաւումը:

Մշոյ Դաշտին մէջ երկրապորձական աշխատանքները սկսած էին, բայց տուներէն հեռու արտերը կը մնային առանց հերկի: Քրտական ցեղախումբերէն ոմանք, պիժակներու պարսի նման արդէն կ'երեւնային Դաշտաի արեւելեան ու արեւմտեան շրջաններուն մէջ, կողոպուտի մեծ ախորժակով:

Ձատիկի սօներէն օր մըն էր, երբ եկեղեցական արարողութեան ընթացքին, թուրք սպայ մը ներս մտաւ Սուրբ Մարինէ կեկեղեցին, որ բերնէ բերան լեցուած էր աղօթող բազմութեամբ: Սպան կանգնեցաւ տղամարդոց շարքին մէջ: Իբրարոնցումի մատնուեցան աղօթքի կանգնած տղամարդիկ վատ նախանշան մըն էր թուրք սպային ներկայութիւնը, որ առաջին անգամ կը պատահէր Մուշ քաղաքին մէջ: Բայց եկեղեցին աղօթատեղի մըն էր, ու ոչ ոք իրաւունք կը համարէր իրեն արգիլելու, որ իսլամ մը մտնէր աղօթատեղի: Պահ մը անցնելէ ետք, սպան զինովի ձեւեր ըբաւ, աւելի իրաչեցնելով շրջապատը, որ կը հեռանար անկէ, անցք մը բանա-

լով դէպի եկեղեցիին դուռը: Թուրքը ասելի կոպիտ շարժումներ ըրաւ, կարծես յատկապէս գրգռելու համար աղօթող բաղձութիւնը:

Ժողովուրդին համբերութիւնը հասած էր: Շատերը վախով կը նայէին անոր շարժումներուն: Վերջապէս չորս-հինգ հոգի մօտեցան սպային եւ որպէս դինով հանեցին զայն դուրս, եկեղեցիին դուրսը, ուր ատրճանակ մը քաշելով՝ կրակեց իր շուրջը գտնուած բաղձութեան վրայ: Մուխսի Ամեր-խանը ոտքէն վիրաւորուեցաւ: Այդ պահուն էր, որ Հայերը բռնեցին սպան, զէնքը առին ձեռքէն եւ հեռացուցին եկեղեցիին շրջապատէն ու մարդ զրկեցին ոստիկանութիւնը կանչելու:

Ժողովուրդին մեծ մասը դուրս ելած էր եկեղեցիէն եւ մեկնած դէպի տուն: Եկեղեցական արարողութիւնները կը շարունակուէին, ներսը մնացող պատարագչիչի, քահանաներու եւ օրսփայտող աշակերտներու ներկայութեամբ: Ամէն ոք կը սպասէր, որ զինուորներն ու զինուած թուրքերը պիտի ներխուժեն ներս, կոտորածը սկսելու:

Թուրք հինգ ոստիկաններ կը մօտենային Սուրբ Մարինէ եկեղեցիին ու հանապարհի վրայ կը տեսնէին սպան, որ գինովի անհաւասարակչիտ քայլերով կ'երթար դէպի թրքական թաղը: Ան երբեմն ետ կը դառնար դէպի եկեղեցի, հայհոյելով Հայերուն եւ քրիստոնէութեան: Ոստիկաններ բան մը չըսին սպային, այլ ուղղակի եկան եկեղեցիի դուրսը, ուր Մուխսի Ամեր-խանը նստած էր աթոռի մը վրայ ու մէկ ուրիշը անոր արեւոսովէքը կը կապէր:

Հայերը յուզումով ցոյց տուին վիրաւորը եւ ոստիկանութեան յանձնեցին սպային ատրճանակը: Քահանայ մը այդ պահուն մօտեցաւ ոստիկաններուն եւ տխրութեամբ ըսաւ.

- Եթէ եկեղեցիին մէջ ալ պիտի չկարենանք աղօթել, այժմէն թող կառավարութիւնը մեզի հաղորդէ իր վճիռը, ու մենք ալ եկեղեցիի դռները փակենք:

- Այդպիսի բան չկայ, - ըսաւ ոստիկանապետը, - բայց սպայ մը զինաթափ ընելը ծանր արարք մըն է: Մենք կառավարութեան կը յայտնենք եղելութիւնը, տեսնենք ինչ ընթացք կու տայ դործին:

Ու սպային զէնքը առնելով հեռացան Սուրբ Մարինէ թաղէն: Ամէն մարդ կը զգար, թէ թուրք սպայի մը ոտքային արարքը, եկեղեցիին մէջ, ներքի կը թուէր ոստիկանութեան, իսկ ոճրագործին ձեռքէն զէնք առնելը աններելի յանցանք մը հայութեան:

Հայկական թաղերը այս դէպքէն ազդուած՝ ինքնապաշտպանութեան միջոցներ ձեռք առին, այդ երևոյթը նկատելով նախանշան մը յանկարծակի կոտորածներուն:

Դաշտի մէկ քանի վայրերէն անցնող քրտական խուժանները բռնի արարքներու դիմած եւ կողոպուտի փորձեր ըրած էին, սակայն ամէն տեղ զիմաղրող ուժեր զտած էին իրենց դէմ, եւ հեռացած էին այդ շրջաններէն:

Ինչպէրու մանրամասնութիւնները կոմիտէները կը տեղեկագրէին պատասխանատու մարմինն եւ իրենց լարուած վիճակին մասին, ամէն օր, սուրհանդակ կը հասցնէին Բարձրաւանդակ:

Տարօնի աշխարհը, եռացող կաթսայի մը վերածուած էր: Ձկնքի ու սուրբի շահիւնը փոթորկաբեր ամպերու պէս կ'որոտային շրջանէ շրջան ու արեան հոտ կար մթնոլորտին մէջ:



Երեւոյթները զոյց կու տային, թէ թրքական բանակը մտադրած է յարձակողականը սկսել ձիւնհալքէն առաջ: Կուրտիկի բարձունքները հասնելու համար, այդ ստուար բանակը երկու շարաթ ճամբաներուն վրայ երբեք, տասնըհինգ ջիւղերով ճամբան կտրել անցնելու համար:

Թրքական խորամանկութիւնը եւ գինուորականներու ռազմավարութիւնը իրար կը լրացնէին: Արեւելքէն ու հիւսիսէն քրտական խուժանները շարժման մէջ դրուած էին, ռաթիկաններու եւ ժանտարմաներու ջոկատները Մշոյ Դաշար սարսափի տակ կը պահէին: Ամէն օր բազմաթիւ հայ զեկազարներ բանտ կ'առաջնորդէին: Ու ամէն մէկ ձերբակալութիւն ու բանտարկութիւն այդ գիւղական շրջանները յուզումի ու վախի կը մատնէր:

Միւս կողմէ, Սասնոյ Հարուէն, Քիւրտերը սպառնալից արշաւանքի կը սկսէին Խուրի ու Խիանքի վրայէն գէպի Տալուորիկ եւ Անտոք: Թրքական փոքրիկ զօրամասեր ու ժանտարմաներ անոնց հետ էին, վստահութիւններն չնչնու համար քրտական ցեղախումբերուն:

Սպաներն ու ռաթիկանապետները տեսապէս ցեղապետներու հետն էին ու դանոնք կը քաշլւերէին, որ յանդուգն յարձակողականներ կատարեն Տալուորիկցիներու դէմ: Եստ յամախ անոնց կ'ըսէին.

— Այս անգամ թուրք բանակը պիտի նգմէ Սասունը ու ձիւնեբուն մէջ խեղդէ Փետայիները: Միւշիւր փաշան, Դ. բանակի ընդհանուր հրամանատարը, արդէն տասնըհինգ հազարի հասնող բանակ մը բարձրացուցած է եւ բռնած Կուրտիկի բոլոր լեռնանցքները: Թնդանօթները տեղաւորած են Եէնիկի եւ Սէմալի դէմ: Քրտական միւս ցեղախումբերը Մշոյ Դաշար կըրոնկի տակ առած՝ թոյլ չեն տար, որ Հայերը գիւղէ գիւղ շարժին: Մուշ քաղաքը ամէն կողմէ շրջապատուած՝ տեղն ու սեղը պիտի կոտորուի: Փետայիները այս անգամ Տալուորիկին օգնութեան պալու հնարաւորութիւն չունին: Այս օրերուն արդէն կտրու պիտի պայթի անոնց գլխուն: Անտոքէն այս կողմ ձիւն չկայ ու մեր ճամբան բաց է: Հիմա է ատենը, որ դուք, առանց մեծ արգելքի, այդ շրջանները զրաւէք: Տիգրտնակերտէն բանակ մը ճամբայ ելած է, որ շուտով այս կողմերը պիտի հասնի: Սուլթանէն հրաման եկած է, որ կրնաք կոտորել այս կեալուրները եւ անոնց ինչքերը դրաւել: Այս առիթին պէտք է օգտուինք, որքան կարելի է շուտ:

Այս գրգռիչ թելադրանքները ցեղապետներու եւ ցեղախումբերու կողմուտի ախորժակները կը գրգռէին, ու անոնք, ուրիշ Քիւրտերու վկայութեամբ, գիտէին թէ թրքական բանակը զօրաւոր է թիւով եւ թնդանօթներով: Այս անգամ բանակն էր, որ կռուի ճանրութիւնը իր ուսերուն պիտի առնէր: Այս իրողութիւնը աւելի կը քաշլւերէր գիւղերը, որ իրենց արշաւանքը կատարէին արագ ու վճռական:

Թուրք հրամանատարութիւնը ծրագրուած դարձողութիւն մը կը կատարէր Սասնոյ Հարաւային շրջաններէն յառաջանալով: Փետայիները իրենց ամբողջ ուժերը պիտի փոխադրէին Տալուորիկ, ճակատադրական կռուի հոն մղելու համար, ինչպէս պատահած էր 1893-ին: Այդ առիթէն օգտուելով՝ թրքական բանակը մէկ հարուածով վերջ պիտի տար Եէնիկ-Սէմալ եւ Կէլիկիւղան համախմբուած մնացորդ ուժերուն:

Եւ սակայն Սարբու Ասյանը իր խումբով արդէն հասած էր Տալուորիկ ու իր շուրջը համախմբուած էին Իշխանձորի, Խիանքի եւ Տալուորիկի մարտիկները:

Երբ քրտական ցեղախումբերը Սպիտակ լեռը անցած՝ կը մօտենային

Տալուորիկին ու Անտոքի Հարաւային գիւղերուն, առաջագահները ընդհարումները թող նկատելով՝ ընդհանուր յարձակողականի կ'անցնէին դիւրին յաղթանակ մը ձեռք ձգելու յանդգնութեամբ: Ու ճակատամարտ մըն էր, որ կը սկսէր քրտական խուժաններու եւ թրքական ժանտարմներու դէմ: Կոռի այդ պահերուն Տալուորիկ կը հասնէր Մուրատ փոքրիկ խումբով մը, Գէորգ Զաւուչիի օգնելու համար:

Ու կոխը արիւնալի ու վճռական բնոյթ մը կը ստանար: Այս անգամ Ֆետայիներու մոտիկները քրտական շարքերը կը հնձէին, երբ անոնք հինգ-վեց հարիւր մեթր հեռաւորութեան մը վրայ էին: Քրտական խուժանը եւ ժանտարմները ետ կը քաշուէին մէկ ջիւղիմիթը հեռաւորութեան վրայ, մտածելով որ կ'աղասին շէշուալի հարուածներէն: Բայց այդ հեռաւորութեան վրայ անոնք նոյնքան կորուստներ տուին, որքան ճակատ-ճակատի էին չայերուն դէմ:

Քրտական բազմութիւնները ոտուար էին ու բոլոր բարձունքներէն ու ձորերէն կ'անցնէին բազմաթիւ խումբերով:

Ֆետայիներու եւ Տալուորիկցիներու դիրքերը բարձունքներու վրայ էին ու նշանառու մարտիկները շատ էին, որոնք հակած իրենց գէնքին, անվրէպ դնդակներ կը տեղային թշնամի խուժանին վրայ: Ու ձորերն ու բլուրները դիակներով կը լեցուէին: Այդ հեռաւորութեան վրայէն քրտական գէնքերը զեր մը շունչէին ու շարունակաբար ինկող դիակները յուսալքում կ'առաջացնէին անոնց մէջ:

Քիւրտերը վայնասուններով ձգեցին իրենց դիրքերը եւ կրնկակոխ՝ բռնեցին հարաւի ճամբան, կրկին անիծելով թրքական կտաւարութիւնը, որ զիրենք կրակի մէջ նետած էր, կրակ մը՝ որ այդ օր իրենց շարքերը մոխիրի վերածեց:

Այդ կոխներու ընթացքին տոհմաբար կոռուեցաւ Հեղինցի իշխան Վարդան եւ նահատակուեցաւ Տալուորիկի առաջին դիրքերուն մէջ: Գէորգ պահ մը յուզումի մատնուեցաւ վերջին նահատակին ի տես: Հին օրերու յուշը պահ մը ալեկոծեց հոգին եւ սակայն մահ-պատերազմի օրհաս էր ու ինք՝ արիւնալի ճակատամարտի մէջ: Շատեր պիտի ինչային պատուոյ դաշտին վրայ, անհատական զգացումները թաղելով իրենց մէջ:

Հեղինցի մարտիկները չըջապատեցին իրենց սինքան սիրելի Սարհատը, ու փոստացին իշխան Վարդանի նահատակութիւնը: Սպաննուածներու մասին խօսքը կ'երկարէր հեռուն ու անոնք կը յայտնէին, թէ Բրզուքն ալ սպաննուած է Տիգրանակերտի ճամբուն վրայ, երբ իշխան գիւղը ձգած՝ կ'երթար դործ մը պտնելու:

Այդ պահուն Սարհատ յուզումով կը տեսնէր իշխան Վարդանի տղանը մոխրացած, Սուսամը թափառական, ալրի ու անջատ, իսկ անոր լքուած մոմուխներ սպաննուած արիւնոտ ճանապարհներուն վրայ:

Հայու ճակատապիր...



Մուրատ իր խումբով կը վերադառնար դէպի Կէլիէկուզան, հիացմունքով լեցուած Գէորգ Զաւուչի հերոսական արարքներուն հանդէպ: Սարերու Ասլանին մէջ ան կը տեսնէր հին օրերու Գայլ Վահանի կերպարանքը, համոզուելով թէ Գէորգ, կոխներու ընթացքին, անմրցելի Ֆետային է որ կրցած է տիրապետել այս լեռներուն:

Գէորգ իր խումբով կը բռնէր Անտոքի ճամբան, Շէնիկ-Սէմալ Հասնելու Համար: Արդէն լուր հասած էր իրենց, թէ թրջական բանակը Սէմալը դրաւած էր եւ ամէն վայրկեան ճակատամարտը կընար պայթիլ:

Անձկութեան այդ օրերուն, Պատասխանատու մարմինը եւ անձնուրացներու բանակը ժամանակ կ'ուզէին շահիլ, իրենց աչքերը յառած Անտոքի եւ Մոզասարի բարձունքներուն, որոնք ձիւնի տիրապետութեան տակն էին: Բարձրագիւր դիրքերը Մայիսին կը սպասէին՝ ծաղիկներով դիմաւորելու այն լեռնական քաջիւրը, որոնց ներկայութեամբ սրբասեղի դարձած էին այդ խրոխտ գազաթիւերը:

Թրջական բանակը անապարտքի մէջ էր:

Կուրսիկ լեռան ճամբան բանալէն ետք, երբ թնդանօթներն ալ կըրցան բարձրացնել Սառուն, մտադրած էին վճռական հարուածը տալու Ֆետա-յիներու կիզրոնին:

Լեռներն ու ձորերը, այդ օրերուն, ապաստան չէին տար այս լեռնական ժողովուրդին, որ պիտի կընար ամբանալ ըստմիտ: Բարձունքներուն ու ժայռերուն վրայ, իրենց կոխած բոլոր տեղերը անառիկ բերդերու վերածելով: Անոնք, շատ յաճախ, այդ բարձունքներէն ժայռեր պիտի թաւալէին դէպի անդունդները, թրջական թնդանօթներու որոտին դէմ:

Երզնկայէն Մուշ եկած էր Միշիւր փաշան, անձամբ ղեկավարելու Հայ Ֆետայիներուն դէմ կ'ած բանակը: Զինուորական գործողութիւններու հրամանատար նշանակուած էր Քէօսէ Պինպաշին, որ ծանօթ էր Տարօնի աշխարհին մէջ ու անուանի էր իր քաջութեամբ եւ զինուորական հաւատարմութեամբ, փորձառու: Ֆետայիներուն դէմ իր կռիւներով:

Քէօսէ Պինպաշին չէրքէզ էր, կովկասեան լեռներէն թուրքիս փոխադրուած: Աւարտած էր թրջական զինուորական վարժարանը եւ թրջական բանակին մէջ, իր քաջութեամբ, բարձր աստիճաններու հասած: Ու թուրք խորամանկ կառավարութիւնը, ինչպէս Կովկասէն տեղահանուած չէրքէզները կ'օտարացործէր Հայերուն դէմ, նոյնպէս Քէօսէ Պինպաշին զըրկած էր Մուշ, յատկապէս Ֆետայիներուն դէմ դործող բանակները ղեկավարելու:

Այս կտրիճ ու շիտակ նկարագիր ունեցող զօրավարը Հաւատարմութեամբ կը կատարէր իր պարտականութիւնը, անուանի զանաւրով Չորրորդ բանակի շարքերուն մէջ:

Սահայն, Հակոբակ այս բոլորին, Հայերը կը յարդէին Քէօսէ Պինպաշին, որ երբեք կոտորածներու չէր մղեր իր հրամանին տակ եղող զինուորները: Երբ ընդհարումները վերջանային, զօրքերը կը հեռացնէր այդ շրջաններէն եւ խիստ պատիժի կ'ենթարկէր այն զինուորը, որ ժողովուրդին վնաս մը կը հասցնէր կամ կողոպուտ մը կ'ընէր:

- Ես ոստիկան եւ ժանտարմ չեմ, Սուլթանին զինուոր եմ եւ Հաւատարմութեան երդումս կը պահեմ, - կ'ըսէր այս չէրքէզ զօրավարը, որ ատելութիւն ու արհամարհանք ունէր բոլոր այն կառավարիչներուն դէմ, որոնք ապօրինի բռնութիւններով շրջանները խռովքի մէջ կը պահէին:

Քէօսէ Պինպաշին յարաբերութիւն ունէր Մուշի Հայ մտաւորականներուն հետ եւ յաճախ կը հանդիպէր անոնց Մուշ շուկային մէջ: Երբ խօսք ըլլար Ֆետայիներու դէմ տեղի ունեցած կոտորած մասին, զօրավարը առանց քաշուելու կ'ըսէր.

- Կը յարգեմ ձեր Ֆետայիները: Անոնք քաջ եւ ազնիւ մարդիկ են, որ կը կռուին իրենց ժողովուրդին ազատութեանը համար: Բայց ես Մուշ-

Թանին հաւատարիմ գինուորն եմ, երբ ինձի հրամայուի, այդ ազնիւ Ծե-
տայիները պիտի հալածեմ եւ պաշտպանեմ պետութեան շահերը...

Ահա, այս գինուորականն էր, որ ստանձնած էր դործող թրջական
բանակի հրամանատարութիւնը եւ, այդ օրերուն, իր կեդրոնատեղին հաւ-
տատած էր Սէմալ գիւղը, ուր ժամանած էին Մուշիք փաշան եւ Մշոյ կա-
ռավարիչը:

Քէօէ Պինպաշին ամէն վայրկեան պատրաստ էր յարձակողական
սկսելու, բայց Մուշիք փաշան եւ Մշոյ կառավարիչը արգելք կը հանդիսա-
նային: Անոնք դաւազիր ծրագիր մը ունէին, եւ քանի մը օր անհրաժեշտ էր
ծրագրուածը իրականացնելու:

Գիւրգերուն մէջ խորհրդաւոր սպասում մը կար:



1904-ի դարունն էր:

Ապրիլ վեցին, Մուշի պատասխանատու գործիչներէն նամակ մը կը
հասնէր Վահանին: Զինուորական խորհուրդի անդամները շրջապատած էին
Վահանը եւ ուշի ուշով կը լսէին անոր զեկուցումը:

- Մուշի մէջ հայ երեւելիներն ու կրօնապետները հսկողութեան տակ
անուում են եւ պատանդ կը համարուին: Ըստ այս նամակին, որ Տաւրա-
կը դրած է, Պիթլիսէն Մուշ բերած են Հայոց առաջնորդ Սեդիկ վարդա-
պետը եւ քաղաքական ժողովի երկու անդամները, Մուշ կանչած են վան-
քերու վանահայրը եւ գարձեայ նոյն նպատակով վար դրած են: Մշոյ ա-
ռաջնորդը Գնեւ վարդապետը եւ քաղաքական ժողովի բոլոր անդամները,
պատանդներուն հետ միասին՝ ճամբայ հանած են անորոշ ուղղութեամբ:
Ինչպէս գիտէք, շրջաններու եւ գիւղերու աչքի ինկող ղեկավարները բան-
տերը լեցուցած են: Այժմ ազգային եւ կրօնական վարիչները կալանաւոր-
ւած են, ջլատելու համար հայ ժողովուրդը:

- Տիգրանակերտի գինուորական շարժումներէն ի՞նչ լուրեր հասած
են, պարոն Վահան, - հարցուց Գէորգ Ձաւուշ, որ Տաւուորիկէ շրջանէն
նոր վերադարձած էր, հոն ձգելով Ծետայիներու ստուար խումբ մը, -
Քիւրտեր եւ սասիկաններ ծանր կորուստներով՝ այդ ճակատէն հեռացան,
բայց եթէ թրջական զօրաբանակը հասնի Սուլբ ու Ուիանք, Անտօքի հա-
րաւային ճակատը կը վտանգուի:

- Սուլբէն ու Ուիանքէն այսօր իսկ ստացայ նամակներ, ուր կը յայտ-
նին թէ այդ երկու շրջանները հասած են թրջական բազմաթիւ վաշտեր,
որոնք տեղւոյն վրայ վայրագ արարքներ կատարելէն ետք, կ'ուղղուին մէկ
թելով դէպի Տաւուորիկ, միւս թելով՝ Սուլբի ձորերէն կը բարձրանան
դէպի Անտօքի փէշերը: Քիւրտերը իրենց ուժերը համախմբած՝ բանակնե-
րուն կը հետեւին:

Վահան այս անգեկութիւնները տալէն ետք, յայտնեց թէ՝

- Սուլբի իշխան Գալուստը, Հրայրի կարգադրութեամբ, իր խում-
բով վերադարձած է Ահարոնքի լեռները, թշնամիին առաջխաղացքը դժ-
ւարացնելու, բայց Գալուստ միայն Հինգ-Վեց հոգի ունի իր տրամադրու-
թեան տակ:

- Ռերեմն, մենք ստիպուած պիտի ըլլանք կռիւլ ընդունիլ չորս ճա-
կատներու վրայ, - եզրակացուց Անդրանիկ, - թուրք զօրաբանակի մեծ
ճասը Կուրտիկէն այս կողմ անցած՝ դիւրք բռնած է Շէնիկի եւ Սէմալի գի-

մաց: Կէնճէն ուժեր Հասած են Մերկեմոզան՝ Շէնիկը շրջապատելու Համար: Թրքական բանակի մէկ թեւը կը բարձրանայ Հաւատարիկի ձորերէն՝ Մովսարի ճամբան կտրելու: Այս պայմաններուն մէջ, այսօր իսկ ես պիտի մեկնեմ Գեղաշէն, Մովսարի ճակատը ամուր պահելու: Այլապէս, Հրայրի դիրքերը երեք կրակներու մէջ կ'առնուին, եւ իմ Համոզումով, իսկական ճակատամարտը տեղի պիտի ունենայ Շէնիկի եւ Սէմալի բարձունքներուն եւ Մովսարի ստորոտին ու կողերուն վրայ, նշանակէտ ունենալով Կէլիէկուզանն ու Անտօքի ձորերը:

Գէորդ մտահոգ էր Տալուորիկի եւ Իշխանձորի վիճակով. փափաք յայտնեց կրկին վերադառնալ Հարաւային ճակատը, որուն պատասխանատու հրամանատարն էր, բայց Անգլիանիկ եւ Վահան առարկեցին.

— Գէորդ, քանի մը օրէն կրնաս մեկնիլ Հարաւային շրջանը, — ըսաւ Վահան, — բայց քու Հարուածող խումբով պէտք է վերադառնաս Հոս, կամ ամբողջապէս մօտիկ բարձունքներուն վրայ: Մեր գլխաւոր ուժերը այս երեսուն քիլոմեթրի շրջանակին մէջ պատրաստ պէտք է գտնուին ճակատագրական վայրկեանին:

Անգլիանիկ աւելցուց.

— Քու ներկայութիւնը ապահովութիւն մըն է Հրայրին ստանձնած ճակատին Համար: Կողքէն արագ եւ վճռական Հարուածով միայն կարելի է չփոթ առաջնացնել Թրքական բանակի յառաջխաղացման ընթացքին: Գիշեր թէ ցերեկ, դուն միայն կրնաս շարժիլ ձորերու եւ լեռնակոյտերու այս խառնարանին մէջ, Կովկասէն եւ Դաշտէն եկողները շուարումի կը մասնըււին: Ես Մակարի, Մուրատի եւ Սասունցի մարտիկներուն հետ՝ Մովսարէն, գտեք ալ Անտօքի վարի բարձունքներէն՝ Շատախի ասարժութիւնը կ'առնենք երկու կրակի տակ եւ իրարու օղնութեան կրնանք Հասնիլ քանի մը ժամէն: Հարաւի ճակատի Ֆետայիներն ու Տալուորիկի Իշխանները բաւական են ասին մը զսպելու գէպի Անտօք եւ Գերին բարձրացող Թրքական եւ քրտական ուժերը:

Գէորդ երկար ու բարակ խօսելու պէտք չզգաց: Իր խումբն առնելով ճամբայ հլաւ:

Անգլիանիկ անոր ետեւէն ձայնեց.

— Երեք օրէն քեզի կը սպասենք, Գէորդ, ես ալ ճամբայ պիտի ելլեմ մէկ ժամէն, թորք բանակը, ուս օրերուն, վճռական գործողութեան պիտի ձեռնարկէ...

— Երբ վստանք մը պատահի, մենք քարերու տակէն դուրս կու գանք, — ձայնեց Գէորդ, — եւ խումբը կորսուեցաւ ժողովուրդի կամաններուն մէջ:



Իշխանձորի դառիթափին վրայ նստած էին Տետայիները: Իշխան Փասպար, Հինաւուրց մարտիկ եւ նոր օրերու Տետայի, Հարաւային ճակատի լուրերը կը Հաղորդէր Սարբու Ասլանին:

— Տիրաւորներէն շարժող զօրքերը արդէն Հասած են Փասուր եւ Սաղտուն: Քիւրտերը, որոնք ծանր կորուստներով Հեռացան Սպիտակ լեռան բարձունքներէն, կրկին Համախմբուած են Սուլթի եւ Նիանքի շրջաններուն մէջ եւ վրէժ կը լուծեն անգէն ժողովուրդէն: Թրքական վաշտերը մասնակից են քրտական կողոպուտներուն եւ բռնաբարութիւններուն: Ոճրային արշաւանք մըն է, որ տեղի կ'ունենայ Սուլթի եւ Նիանքի Հայկական գիւ-

ղերուսն դէմ: Խոհեմ Քիւրտերէն ոմանք, կառավարութեան աշքին փոշի ցանկու համար, իրենց ցեղախումբերը ճամբայ հանած են դէպի Անտոք, բայց հաղիւ հասած Տարկոշի ստորոտը՝ ետ դարձած են աննպատակ հրացանաձգութեանէ մը ետք: Քիւրտ աղաները, այդ շարժումներով, իրենց պարտականութիւնը կատարած կը հաշուեն: Մինչդեռ Խիանքի Քիւրտերը ո՛չ միայն կողոպուտը կը շարունակեն, այլև քանի մը գիւղերու մէջ սպանութիւններ կատարած են, լուր տարածելով, թէ Սուլթանէն Հրաման եկած է կեալուրները կոտորելու: Այս օրերուն քանի մը անգամ փորձեցին Ընկուղանկէն ու Սեվիթէն առաջանալ դէպի Իշխանձոր, բայց մեր շեշտակի հարւածներէն ընկրկեցան: Քանի մը մոսին ունինք այս դիրքերուն վրայ, ու երբ հազար հինգ հարիւր մեթրէն անդին շարժող զիրտ եւ թուրք զինուորը գետին կը տապալէ, խուճապի կը մատնուին:

Սարերու Ասլանը այս զեկուցումներէն իրական տպաւորութիւն մը կը ստանար: Ճիշդ էր որ Խիանքի ու Խուլքի շրջանները տազնապի պիտի մատնուէին, բայց վտանգը բուն ճակատամարտի շրջանէն հեռու էր առայժմ: Գէորգ իր աչքը կը յառէր Շէնիկին ու Սէմալին, ուր կեանքի եւ մահուան պատերազմը սկսած էր:

Տալուորիկի իշխաններուն եւ զինուորներուն հետ խօսած ժամանակ, խօսք բացուեցաւ Հեղինի իշխան Վարդանի նահատակութեան մասին: Այս խօսակցութիւններէն յայտնի կ'ըլլար, թէ Տալուորիկի զինուորներուն մէջ կը մնային շորս-հինգ հոգի Հեղինէն, որոնք տեղէ ու տունէ ձեռք քաշած՝ Տալուորիկի ժայռերուն ապաւինած էին: Անոնք ստոյգ սեղեկութիւն մը չունէին Հեղինի ժողովուրդէն:

— Պարոն Գէորգ, Հեղինի մեր ժողովուրդը ինչ կզաւ չենք դիտեր: Խիանքէն եկած լուրերը շատ վատ են, կողոպուտ եւ սպանութիւնները ամէն օր տեղի կ'ունենան: Բարեբախտաբար Հեղինը ճանապարհէն դուրս կը պտնուի եւ թերեւս քիչ փնասով կարենայ իր գլուխը ազատել, ապաւինելով մեր ձորերուն եւ քարանձաւներուն:

Գէորգ կը զգար, թէ Սպիտակ լեռնէն անդին, Հեղինի եւ Սեկղիկի իր պատանեկան երազները արիւնի մէջ խեղդուած էին:

Սարերու Ասլանը, սիրտը կոտոր, կը պատրաստուէր ետ դառնալու դէպի ամէնէն վտանգաւոր ճակատը, ուր Հրայր Թևոսյիներու ընտրանիով դիրք բռնած էր:

Ամբողջ ժողովուրդ մը լեռնացած էր բռնակալութեան դէմ եւ իր անձնական երջանկութիւնը կը մոխրացնէր ազատագրութեան արիւնայի ճակատամարտներուն մէջ:

Սարերու Ասլանը արդէն արիւնալի գետերէն անցած մարտիկն էր:



Սառնոյ բարձունքներուն վրայ կայծակները Հայոց մութ երկինքը կը լուսաւորէին. իսկ Տարօնի ներքնաշխարհը, խուլ թնդիւնով, ազատութեան երգը կը հնչեցնէր գեղեցիկօր արիւններուն մէջ:

Դարձեալ փայլեց Սասնոյ գլխին,
Ազատութեան դրօշակ...

Ազատութեան ծարաւ հայ բազմութիւնները հոգեպէս պատրաստ էին օրհասական պատերազմին: Համոզումով ու անձնուրացութեամբ կը հնչեցնէին միւս երգը, այդ օրերու ամէնօրեայ աղօթքը.

Կամ կոուելյով մեռնիմք անցմիմք,
Կամ գեմեմք փրկութիւն ստանամք...

Ազատութեան եւ բռնութեան բանակները իրարու դէմ ցցուած էին:
Ապրիլ 12-ի առաւօտը բացուած էր:
Տնտայիններն ու կամաւոր մարտիկները զէն ի ձեռքն լարուած կը սպասէին թշնամիի յարձակողականին:

Ո՞վ պիտի սկսէր առաջին հարուածը, որմէ յետոյ կեանքի ու մահուան պատերազմն էր, որ պիտի շղթայազերծուէր:

Ու ահա, Շէնիկ գիւղի անդիի բացատքէն հայ կրօնականները կ'առաջանային, ճերմակ դրօշով, խաղաղութեան որպէս ազդանշան: Հրայր, դիտակը ձեռքը, արդէն կը ճանչնար մօտեցող կրօնականները, Վարդան վարդապետ՝ Սուրբ Կարապետէն ու Առաքել վարդապետ՝ Սուրբ Յովհաննու վանքէն:

Քրքական դաւի պատկերազարդ ցուցադրութիւնն էր: Բանակատեղիին մէջ հաւաքուած՝ հայ երեւելիներն ու կրօնականները պատանդ էին սուրհմնեբու սպանալիքին տակ: Ու թուրք հրամանատարութիւնը այս պատանգը ուղեց օգտագործել նաեւ որպէս դաւի միջոց, որպէսզի ապոտամը Սասունը մէկ պահ միայն, զէնքը իր ուսէն վար առնէր ու խարուէր խաղաղութեան կոչէն, որ ահա, այս հայրենասէր կրօնականները, բարձր բանած սպիտակ դրօշի մը վրայ, կը բերէին ազատութեան մարտիկներուն:

Անոնք կու գային իրենց հետ բերելով նահանգապետին, Մշոյ կառավարիչին եւ բանակի ընդհանուր հրամանատարին հաշտութեան խօսքը:

— Ձէնքերը վա՛ր դէ՛ք, անձնատուր եղէք կառավարութեան, Սուրբանը բոլորիդ ներում կը շնորհէ...:

Այս առաջարկը բերող երկու կրօնականները գիտէին, թէ խաբէութիւն մըն է, որ կը փորձէ Քրքական իշխանութիւնը, գիտէին, թէ զօրքը իրենց ետեւէն արդէն շարժած էր, որպէսզի վճռական հարուածը տայ դիրքերուն մէջ ամբացած մարտիկներուն, երբ անոնք, քանի մը վայրկեան, խօսակցութեան բռնուէին պատգամաբեր կրօնականներուն հետ:

Դաւը սակայն կը ձախողէր:

Հազիւ հասած, Վարդան վարդապետ ըսաւ Հրայրին.

— Քրքական զօրքը կրնկակոխ կ'առաջանայ, մի՛ տատանիք, — ու ապա երկու խօսքով յայտնեց պատգամը դաւադիր:

— Առանց կոուելի անձնատուութիւն կը պահանջեն, իբր թէ ներում պիտի շնորհեն մեր ժողովուրդին: Մի՛ խարուիք, մենք արդէն պատանդ ենք, մեր գլուխը պիտի ուտեն, գոնէ Բարձրաւանդակի ժողովուրդը դեմադրէ եւ փրկուի...:

Ոսքը կ'իտատ մնաց:

Ճիշդ այդ վայրկեանին, թուրք բանակի առաջապահները երեւցան, տեղատարափ զնդակի տակ առնելով գիւղը, ուր արդէն գիրքեր զբաւած էին Տնտայինները, Սլմալցիներն ու Շէնիկցիները:

Հրայր կայութեան ծանրութիւնը ըմբռնած էր: Ոսքը ուղղելով իր օգնականներուն եւ իշխաններուն, ըսաւ.

— Ժողովուրդը անմիջապէս ճամբայ հանեցէք դէպի Կէլիէկուզան:

Դառնալով մարտիկներուն.

— Դուք կառած պիտի մնաք դիրքերուն, մինչեւ որ ժողովուրդը կուելի գօտիէն դուրս գայ: Գնդակ մի՛ խնայէք:

Անձնագրահերու եւ Սասունցի մարտիկներու համազարկը ազատութեան ճիւղ կը շեփորէր Սասնոյ լեռներուն վրայ: Առաջին բախումն էր ճակատները կը խլրտէին...

Պատգամաւոր կրօնաւորները պատի մը տակ կ՛ծկուեցան, մնալով երկու կրակներու մէջ: Ժողովուրդը արդէն բաւական ճամբայ կտրած էր, երբ Հայ կոտորուածները գիւղէն դուրս ելան եւ մտրացան բլուրներուն ու ժայռերուն մէջ: Ծակատագրական կոխը կը շարունակուէր: Թուրք բանակը կը մտնէր գիւղ, որ դատարկ էր եւ հրդեհի բռնուած:

Թնդանօթները սկսած էին ոռնալ, սարսափի արձագանգներ տարածելով լեռ ու ձոր: Թնդանօթի հարուածները նշանակեալներուն շէն դըպնար, բայց այս բլուրին, կամ այն ձորին վրայ ինչպիսի՜ կամ ձիւնը օդը կը հանէր եւ կամ ժայռ մը կը տապալէր դէպի ձոր: Սակայն ապստամբ ժողովուրդը, առանց իրական հարուած ստանալու, այդ երեւոյթէն կ'ազդուէր, երեւոյթ մը, որուն հակազդելու միջոց չունէր ինչ:

Սարսափի այս ազդեցութիւնը շուտով կ'անցնէր, որովհետեւ կրկնուող հարուածները գիւղէն ջլատելու բնոյթ չունէին, ու տեսարանը կը դառնար սովորական: Թնդանօթներու որոտը ազդաստան բռնակալութեան գազանային ոռնոց մը կը մնար:

Կուրծք-կուրծքի կոխն էր, որ ազատութեան եւ բռնութեան բանակները իրարու դէմ կը լարէր:

Մտադրուած խաբէութեամբ մը յարձակողականը սկսած էր, Թուրք բանակը կը յուսար վճռական հարուածով փոշիացնել Բարձրաւանդակի ապստամբութեան կեդրոնը, իսկ ապստամբութեան մարտիկները, անվախօրէն փարած էին իրենց գէնքին եւ կը կոտէին օրհասական կորուստով:

Կոխը առաջին վայրկեանէն իսկ ճակատամարտի բնոյթ ստացաւ: Ծակատները մօտ էին իրարու, պարզ գէնքի տարածութեան չափով, երբ Թրքական բանակը դիւղէն դուրս իր յարձակողականը շարունակեց մեծ համարձակութեամբ, այն մտածումով թէ այդ վճռական հարուածով պիտի ընկնէր ազատութեան կեդրոնը եւ այդպիսով ջլատէր Սասնոյ գիմադրութիւնը, հանդիպեցաւ Ֆեոսայիներու շեշտակի հարուածներուն: Թրքական առաջապահները խուրձ առ խուրձ գետին տապալեցան ու անոնց յաջորդող ալիքները նօսրացան քաջամարտիկներու անվրէպ հարուածներուն տակ: Թրքական բանակը պահ մը ընկրկեցաւ: Ապա համախմբեց իր ուժերը յարձակողականը շարունակելու համար:



Պայթած կռուին արձագանդը արդէն հասած էր Մովսսար, ուր Անդրանիկ իր խումրով դիրք բռնած էր: Միւս կողմէ, Շէնիկի եւ Սէմալի ժողովուրդը, ազանով անցնելով լեռնանցքներէն, մէկ թեւը կ'եջնէր դէպի Կէլիկիւղան, իսկ միւս թեւը, Անտոքի ստորոտներէն, կ'ուղղուէր դէպի Հարաւ:

Անտոքի եւ Մովսսարի Ֆեոսայական խումբերը ճամբայ կ'ելլէին օգնութեան հասնելու Հրայրին:

Կէսօրին, Շէնիկի մարտիկները հեռաւոր բարձունքները հասած եւ անցած էին վտանգի գիծը:

Թրքական առաջխաղացքը մտամբ դանդաղած էր: Ժողովուրդը հեռացած էր պատերազմի ճակատէն, իսկ Ֆեոսայիները եւ գիւղացի մարտիկ-

ները կուրսը կը շարունակէին, տիրապետող բարձունքները իրենց ձեռքը պահելով:

Այս կուրսի ընթացքին թեւէն վերաւորուեցաւ Սեպուհ: Կուրսի սաք պահուն, երբ զգաց թէ վերաւորուած է, դաշոյնը հանեց՝ անձնասպան ըլլալու, որպէսզի թուրք բանակին ձեռքը դերի չիյնար: Ընդ նոյն պահուն, անոր քովէն կ'անցնէր Շէնիկցի Վարդան, հին մարտիկներէն մին, որ իշխան Գրգոյի կողքին մասնակցած էր Սասնոյ առաջին ապստամբութեան:

- Ի՞նչ կ'ընես, ա՛յ տղայ:

Ու թափով մը դաշոյնը իւրից Սեպուհի ձեռքէն: Վարդան դիտէր, որ դուրսէն եկած Ֆետայի մըն էր գիտացինը, բայց ինքնութիւնը չէր ճանչնար: Իր մտնական շարժումին՝ Սեպուհ ցաւով ու դալարութեամբ ըսաւ.

- Կ'ուզեմ իմ ձեռքովս կենքիս վերջ տալ եւ դերի չիյնալ թուրք ոճրագործներուն ձեռքը:

Վարդան, լեռնական մարտիկ, այսպիսի կռիւներու փորձէն անցած, աւելի տարիքոտ, սիրտ տուաւ Սեպուհին.

- Ի՞նչ մը չէ, կը կապենք վերքը, շուտով կ'անցնի:

Ու առանց մտիկ ընելու վերաւոր Ֆետային, որ իր հսկայ հասակով տապալած կը մնար ձիւներուն վրայ, լալկեց զայն, վերցուց անոր զէնքը ու շարունակեց ճամբան հաստատուն քայլերով:

Կարծես թէ կազնիէ հաստ կոճղ մը կը շարժէր, որուն վրայ արձանացած կը մնար Սեպուհ: Շէնիկցի Վարդան, կարճահասակ, թիկնեղ եւ մարմնակուր կազմ ունէր: Ան իր ճամբան կը շարունակէր ու երբեմն ալ վերաւորը ժայռի մը ապահով անկիւնը դնելով, իր հարուանները կ'ողջէր թշնամիին:

Երբ վտանգի գիծը անցան, Վարդան վար դրաւ վերաւորը ու Հրայրի աչքերու առջև բացուաւ անոր վերքը, պատռեց շապիկին մէկ կտորը ու վարպետ վերարտոյի մը պէս փաթթեց թեւը:

- Գէ՛, հիմա ել, ահա զէնքդ, ալ կրնաս կուրսի:

Եւ իրօք, Սեպուհ ոտքի ելաւ, զրկեց իր զէնքը եւ մարտիկներուն հետ շարունակեց կուրսը:

Առաջին գնդակի հարուածին ցնցումը անցած էր:

Սեպուհ իր խոյանքին մէջ էր: Մահէն յարութիւն առնող մարտիկին զէնքը անմահութեան շողով կը ճառագայթէր:

Թրքական յանկարծակի յարձակողականը իր նպատակին չէր հասած: Ազատամարտիկ բանակը կորովի դիմադրութեամբ մը թշնամիին մեծ կորուստներ կը պատճառէր եւ այդ իսկ արարքով՝ առաջին յաղթանակ մը պիտի արձանագրէր, եթէ ճակատագրական անակնկալը չզար կոտորելու սիրտը այս անվահեր մարտիկներուն:

Ճակատամարտներուն ճակատագրական անակնկալը, որ պտտմութեան մէջ յաճախ արձանագրուած է, արձանագրուեցաւ նաեւ Սասնոյ ապստամբութեան այս առաջին դռեմարտին:

Վտանգի գիծերը անցած՝ ապահով էին մարտիկները, թէ կրնան վաղը նորէն շարունակել ճակատամարտը, ահա այդ պահուն, երբ Հրայր գիտակը աչքերուն, կը դնէր թշնամիին շարժումները, գնդակ մը կու գար ու կը խրէր անոր կուրծքին:

Ապստամբութեան պաշտելի դեկավարը կ'իյնար անշունչ, մահապատեհազմի գրօշին տակ:

Անակնկալ մըն էր այս մեծ կորուստը, ու չճեցնող՝ էր շրջապատին չամար:

Նահատակուած էր ամէնէն բանիմաց ղեկավարը, Սասնոյ ժողովուրդին կամ ջի ներկայացուցիչը, ազատագրութեան պատասխանատու մարմնի կարկառուն ղէմքը, բայց մահը արհամարհող ազատութեան բանակը կոչած մնաց իր զէնքին, վերցուց նահատակ ընկերոջ անշնչացած մարմինը եւ փոխադրեց Կէլիէկուզան...



Քրքական առաջխաղացող վաշտերը, Շէնիկ եւ Սէմալը դբաւելէն յետոյ, շարունակեցին իրենց յարձակողականը աւելի խորը թափանցելու եւ հասնելու չամար մինչեւ Կէլիէկուզան:

Թուրք հրամանատարութիւնը էր կորուստներուն ուշադրութիւն չէր դարձներ: Նոր վաշտեր կու գային խուսցնել Քէօսէ Պինպաշին հրամանատարութեան տակ շարժող բանակը: Առաջին վճռական ճակատամարտով՝ թշնամին կ'ուղէր խորտակել ապստամբ Սասունի ուժը, մնացեալը կը դառնար սովորական հաշուեյարդար:

Ու այս կիրթով եւ վճռականութեամբ՝ Քրքական վաշտերը կը թափանցէին ձորերէն ու լեռնանցքներէն ներս, թնդանօթներու եւ զէնքերու որսորդ ասարածելով լեռնէ լեռ, ձորէ ձոր:

Արեւը ղէպի արեւմուտք հակած էր, երբ Անտօքի եւ Մովսարի լանջերէն Փետալուան բանակի ընտրանին՝ Գէորգի, Անդրանիկի եւ Մուրատի ղեկավարութեամբ՝ օգնութեան հասաւ եւ նետուեցաւ ազատամարտի դաշտին մէջ, երբ կողմէն անխնայ հարուածի տակ առնելով Քրքական բանակի առաջապահները:

Նոր փոթորիկ մըն էր, որ լեռ ու ձոր կը դղրդացնէր եւ քսանը-հինգ շրջաններ տարածութեան վրայ, Սասնոյ աշխարհը հրաբուխի կը վերածէր:

Յանկարծակիի կու գային Քրքական վաշտերը, որոնք անձանօթ լեռնանցքներու ու ձորերու մէջ ներխուժած էին ու հիմա կ'իյնային ամէն կողմէ հասնող գնդակներու տարափին տակ: Զօրքը իր գլուխը կը կորսնցնէր: Սպաները, ջլատուած ու սնկօր, նահանջի ճամբայ մը կը փնտտէին: Պատերազմի հմտութեամբ անուանի Քէօսէ Պինպաշին իսկ իր նահանջի ճամբան կը կորսնցնէր... Արդէն երկու հարիւր զինուորներ գերի ինկած էին Գէորգի ղեկավարած մարտիկներու ձեռքը ու զինաթափուած: Թուրք բանակը կը նահանջէր ղէպի Շէնիկ, շատերը ճամբան կորսնցուցած՝ կ'իյնային Փետալուան գիրքերուն մէջ եւ կը զինաթափուէին:

Ամէն կողմէ առաջացող Փետալուանը կ'ուղղուէին ղէպի Շէնիկ ու Սէմալ, արեւը մար յմտած վճռական հարուած մը տալու թուրք բանակի կեդրոնին:

Հայ ազատագրութեան պոթելումն էր, որ հրաբխային լաւայի մը պէս բռնակալութեան վրայ կը խուժէր:

Քէօսէ Պինպաշին տեսնելով որ շրջապատուած է իր շուրջ պտուռող երկու վաշտերով, հնարամտութիւնը ունեցաւ ապաստանիլ Անտօքի ստորտի ձորերուն մէջ կուտակուած ձիւներուն տակ, որոնք հեղեղներէն ընդարձակ դատարկութիւն մը կը կազմէին: Այս արթնամտութեամբ Քէօսէ Պինպաշին կարողացաւ քանի մը վաշտեր փրկել ստոյգ կորուստէ:

Անդրանիկ Մովսարի ստորտներէն կ'առաջանար ղէպի Սէմալ:

Գէորգ արդէն Շէնիկ գիւղի պատերուն տակն էր: Մուրատ, Կորիւն, Կոտոյի Հաճին եւ Մշոյ Դաշաի Ծեւտայիները կեղբոնէն կ'առաջանային:

Թրքական բանակի նահանջը խուճապային էր: Զօրքերը վրանները վերցուցած՝ կ'ուղէին քաշուէլ Կուրտիկի բարձունքները: Հայ պատանդները արդէն զրկած էին գէպի Մուշ:

Սարերու Ալան իր խումբով ամբողջ գիշերը ճամբայ կտրած էր, Անտոքի ստորոտները հասնելու համար: Անդրանիկ երկու օր է ի վեր անքուն կը հսկէր Մովսսարի անցքերուն վրայ: Ծեւտայիները յոգնած էին ու իրենց վերջին ճիգով երբ թրքական բանակը հալածեցին մինչև Շէնիկ ու Մէմալ, արդէն գիշերը կ'իջէր եւ զործողութեան շարունակութիւնը անկարելի կը դառնար:

Ծեւտայի արշաւող խումբերը պարտասած ու յոգնած էին:

Անոնք ստիպուած նահանջեցին, առաւօտեան վերսկսելու համար ճակատագրական կոիւր:

Նահանջի ճամբուն վրայ հետզհետէ խումբերը իրար կը դռնէին: Գէորգ իր մարտիկներով ամէնէն ուշը երեւցաւ Անտոքի ձորերուն մէջ ու հանգիպեցաւ Մուրատին, Կորիւնին եւ Մշոյ կուսողներուն: Բոլորն ալ շրջապատեցին Սարերու Ալանը, վերջին տեղեկութիւնները ստանալու համար:

— Գերի բռնուած զինուորներէն բան մը չկրցանք հասկնալ, Քէօսէ Պինպաչին ուրկէ՞ նահանջեց եւ ինչպէ՞ս գլուխը ազատեց, — կը հարցնէր Կոտոյի Հաճին, որ շատ լաւ ծանօթ էր թրքական զօրամասերու դասաւորութեան:

— Մինչև Շէնիկի պատերուն տակ հասանք, — ըսաւ Գէորգ, — Քէօսէ Պինպաչին աներեւոյթ եղաւ: Զօրքերը իրենց գլուխը կորսնցուցած՝ ամէն ուղղութեամբ կը փախչէին, բայց իրենց նահանջի ճամբան չէին զբոսնէր: Սպաննուածներու թիւը շեմ գիտեր: Բայց շատերը, մինչև որ իրենց բանակատեղը հասնին, այս գիշերուան ցուրտէն պիտի սռտակին:

Գէորգ աւելցուց.

— Եթէ մեր ուժերը ներկին, այս գիշեր պէտք է մեր վճռական հարուածը տայինք թուրք ընկճուած բանակին: Յետոյ ու ձիւնը մեղի արդեւք են, բայց աւելի չսփոյթ թրքական բանակը կը շլուտեն:

Ծեւտայիներն ու Սասունցի կուսողները կը նահանջէին գէպի կէլիէ-կուզանի բարձունքները: Անոնք ո՛չ միայն յոգնութենէն շարժուած էին, այլև հողեպէս խորտակուած էին բոլորն ալ: Հրայրը նահատակուած էր ու այդ մեծ կարուստը կը մտահոգէր բոլորը:

— Գէորգ, մեր բազուկները կտրած են, Հրայրը նահատակուեցաւ առաւօտեան ճակատամարտին մէջ, — ըսաւ Մուրատ, աչքերուն մէջ տըխրութիւն ու արցունք լեցուն:

Գէորգ գլուխը կախեց, լսած էր բոթը:

— Սուրհանդակներ հասան եւ դուժեցին Հրայրի մահը: Կոտի ընթացքին, վրէժի ու գոյամարտի հարուածներուն տակ՝ մահը իմ աչքին չէր երևար, իսկ այս մէկը, եւ այսքան շուտափոյթ, մէջքս կը կոտրէ: Լեռնաշխարհի այս ժողովուրդը Հրայրի իմաստութեան կը հաւատար, անոր օստմավարութեան կ'ապաւինէր, երբ կ'ելլէր թշնամիին գէժ:

Մարտիկները կը նահանջէին կտրած սրտով ու կ'անապարէին հասնիլ կեղբոն եւ խորհուրդի նստիլ վաղուայ ընելիքներու մասին: Գէորգ իր

մարտիկներով անցած էր այն ձորերէն, ուր Քէօսէ Պինպաշին թաքնուած կը մնար ձիւնակոյտերուն տակ:

Տնտայիները կորուստներ տուած չէին: Տասնեակ մը վիրաւորներ միայն ունեցան այս ու այն ճակատին վրայ, որոնք կը շարունակէին կռուիլ, իրենց վէրքը կապելէն ետք:

Նահանջի այդ պահուն, հէլիէկուզանէն հասան քանի մը պինակ տուրհանդակներ, որոնք ներկայացան Գէորգին:

— Պարոն Գէորգ, Անդրանիկը արդէն հասած է գիւղ ու պարոն Վահանը ձեզի եւ Մուրատին կը սպասէ: Մեզ ճամբայ հաննցին, որ ձեզի յայտնենք, թէ քանի մը բլուրներու վրայ պահակ պէտք է դրուի, իսկ միւս խումբապետներն ու կռուողները պէտք է անպարեն դիւղ հասնելու:

Գէորգ երկու փոքրիկ խմբակներ ձգեց հէլիէկուզանի ճամբան կարող բարձունքներուն վրայ ու իրենց քայլերը արագացուցին կեղծոն:

Հակառակ յաղթական հարուածին, բոլորն ալ կը քալէին յուղարկուող տիրութեամբ, Հրայրի սուղը իրենց սրտին:



Վահանի շուրջ հաւաքուած էին զինուորական խորհուրդի անդամները եւ զեկուցում կու տային պատասխանատու մարմնի միակ անդամին, որ ողջ կը մնար: Աշուտ երկաթ, որ ընդհանուր ժողովէն կը վերադառնար Սասուն բարձրանալու համար, Արճէչի մէջ կռուի կը բռնուէր եւ կը նահատակուէր ազատութեան ճանապարհին վրայ: Հրայրը այդ օրուան ճակատամարտին մէջ կ'իյնար, սուգի մատնելով բոլորը, երբ կեանքի ու մահուան կռիւը լեռն ու ձորը կը զղրդէր: Վահան մինակ կը մնար ու շատ լաւ պիտէր, թէ ազատամարտի ելլողներուն վերջը նահատակի փառաց պսակին հասնին էր:

Յաջորդ օրը ճակատամարտը աւելի մեծ թափով պիտի սկսէր ու իրենք, կռուէն ստալ, Հայրենի հողին պիտի յանձնէին Հրայրը, որուն այնքան մեծ հաւատքով կապուած՝ ազատութեան պայքարին ելու ժողովուրդը:

Կէս գիշերը անցած էր, երբ զինուորական խորհուրդը իր վերջնական հրահանգները կու տար ազատամարտիկներուն, որոնք պիտի պաշտպանէին այն վերջին բարձունքները, որպէս կեղծոնի պաշտպանութեան վերջին ապակէնը:

Լեռները ձիւնապատ էին ու կռիւը Անտրօքի եւ Մովսսարի բարձունքները փոխադրելու հնարաւորութիւն չկար: Արիւնոտ կռիւը անգի պիտի ունենար այս նեղ շրջանակին մէջ, ապաւէն ունենալով հէլիէկուզան եւ տնոր խոր ձորերը:

Այդ օրուան գիշերը, անհուն խորհուրդով մը իջած էր ըմբոստ լեռնաշխարհին վրայ: Անհաւասար զուպարները, թշնամիի գնդակներուն թրնդիւնները, տեղահան ելած ժողովուրդի հերոսական դիմադրութիւնը, կայծակնաւոր Հրայրի կորուստը ու ապա Ֆետայական բոլոր խումբերուն միահաղոյն ծառայումը թշնամիին դէմ, Հրաբուխի վերածած էին Սասունը, որ դրօշակ պարզած էր յանուն ազատութեան: Լեռներն ու ձորերը պղրդացին ու անոնց ազատ զուակները նետուեցան կրակին մէջ, իրենց կեանքը զոհարեցնելով ազատութեան սեղանին:

Անպուսպ այս հրաբխային ժայթքին դիմաց՝ թշնամին կ'ընկրկէր, պարտուած՝ փախուստի կը մատնուէր ու գիշերը կ'իջնէր բոլորին վրայ:

զինազուլ մը պարտադրելով ճակատամարտի ելած երկու անհատ թշնամիներուն:

Ու այդ գիշեր սեւ սուգի քող մը իջած էր Սասնոյ բարձունքներուն եւ խորխորատներուն վրայ: Լեռները կը տնքային կարծես, ջրվէժները զինամարտի շեփորները կը հնչեցնէին, քարերը կարծես լեզու ելած էին ու գիշերը կը զառնար արհաւիրացի երկու բանակներուն համար: Մէկ կողմը, թուրքը անմարդկային բռնութեամբ բանակ մը բերած էր այս ձիւնապատ աշխարհին մէջ, ժողովուրդ մը բնաջնջու եւ արհնով ներկելու սպիտակափառ լեռները եւ ծաղկաւէտ մարգագետինները: Միւս կողմէ, հայոց արի զուակները, անձնուրացի փառապստիկով, իբրեւ արծիւ կը սաւառնէին յետ ու ձոր ու իբրեւ Սարբրու Ասլան հայրենիքի ազատութեան դրօշը բարձր կը բռնէին կեանքէն: Ու նաեւ քաջամարտիկ լեռնական ժողովուրդ մը, աղամարդ, կին, տղի կանգնած էր թշնամիին դէմ, իր ազատութեան տենչը պոռալու աշխարհքի երեսին: Ու ահա, այդ գիշեր, ծանր բախումէ մը ետք, ամէն մէկը կը քաշուէր իր գիրքին վրայ, վաղուան ճակատամարտը վերսկսելու վճռականութեամբ:

Գիշերուան թանձր խաւարը, իր մութ ծոցին մէջ, ամէն բան ծածկած էր, բայց լեռները կը խօսէին ու անդունդներէն մռնչիւն կը բարձրանար, որպէս ազդարարութիւն յաջորդ օրերու արիւնոտ դէպքերուն:

Անձնուրացներու բանակը հանգիստ կ'առնէր մէկ աչքը բաց, միւսը դոց: Ժողովուրդը, համախոնտած Եատախի եւ կէլիէկուզանի անտօիկ զիւղերուն մէջ, յուզումնահար գիշեր մը կ'անցնէր:

Բարձրաւանդակը վճռականօրէն նետուած էր զուպարին մէջ, ազատութիւն կամ մահ նշանաբանով:

և

Լոյսը բացուած էր Մովսսարի դագաթին: Անտօքի եւ Տալուարիկի լեռնազագաթներէն լոյսերը կը ճառագայթէին ձիւնէ սաղաւարտներէն ու խոր ձորերը կ'աղաատէին խորհրդաւոր մթաստուերներէն:

Այդ օրուան լոյսերը մեծ տաճարի մը ջահումի բնապատկերը կը ներկայացնէին ու բնութիւնը կարծես պատարագի կանգնած էր:

Ազատամարտի ելած Սասունցի կռուողները համախումբ, գլուխները կախ, Հրայրի անշունչ մարմինը կը շրջապատէին: Հոն էին ազատամարտի անձնուրացները, հերոսական փառապսակը իրենց ճակատներուն, խոնարհ ու ախուր, իրենց զէնքերը վառ կախուած էին, որպէս սուգի նշան:

Հրայրը թաղեցին Աղբիւր Սերոբի կողքին, Անտօքի ստորոտը, Անտօքը որպէս կոթող Տարօնի այս անձան զիւցազներուն շիրմին վրայ: Լեռները կարծես ծունկի եկած՝ իրենց դէտերով ու աղբերակներով կու լաւին Արմենակի կորուստը, ժողովուրդը կարծես իր սիրտը կը թաղէր անոր հետ, Բարձրաւանդակի յախտենական լեռներուն յանձնելով այն արի զոռակը, որ իր խօսքով հրահրեց Տարօնի ժողովուրդը, ու Հրայր դարձաւ: Ազատագրական դժնդակ ճամբուն վրայ պատժեց թշնամին ու Գժոխք անունը որդեգրեց, որպէս յեղափոխութեան նշանիս: Ու տունէ տուն, գիւղէ գիւղ, շրջանէ շրջան անցաւ, կաղմակերպեց ժողովուրդը, զինեց երկտասարդները, յոյս ներշնչեց յուսալքուածներուն ու եղաւ Տարօնի յեղափոխութեան Ուրուականը, որ այնպստ ճանապարհներով ամէն տեղ կը հասնէր, այս ժողովուրդէն երկաթէ մարդ պատրաստելու համար:

Հրայրի մարմինը կը թաղէին, բայց անոր հողին կը մնար բոլորին մէջ:

Վահան կարկամած՝ երկու խօսք ըրաւ անոր հողակոյտին վրայ.
- Մեր բաղուկները կտորած են, Հրայրը չկայ. անոր ողիով զինուեցէք, ընկերներ, մահ-պատերազմի այս օրհասին: Ու այն ատեն Հրայրը յարութիւն կ'առնէ իր զամբանէն:

Սարերու Ասլանը զերեզմանի փոսէն քիչ մը անդին, ժայռի մը կը թնամ՝ կը դիտէր արարողութիւնը ու կարծես թէ Անտօքը իր ուսերուն ծանրացած՝ զինք ծունկի կը բերէր այս հողակոյտին առջեւ:

Անդրանիկ, Մուրատ, Կորիւն, Սեպուհ, Քեռի եւ Մակար իրենց զէնքերը խոնարհեցին հողաթուժքին առջեւ, յանուն բոլոր Ֆետայիներուն: Ու երբ մեծայիններն ու ժողովուրդը գլխիկոր կը վերապահանային դէպի դիւր, կարծես թէ իրենց սիրտն ու հողին հոն, այդ հողակոյտին մէջ թաղածի կերպարանք ունէին:

Քեռի Մակար, Գալէն ու Յակէն արդէն Գէորգի քովն էին ու կը զգային, թէ որքան ծանր պահ մը կ'ուզէր Սարերու այս անվեհեր առիւծը, Հրայրի թաղման այս պահուն: Անոնց մօտեցան Անդրանիկն ու Մուրատ, Գէորգը իրենց հետ աննելու համար: Անոնք լուռ էին ու իրար կը հասկնային ամբողջովին: Գէորգի ոտքերը կարծես խրած էին հողին մէջ ու քայլ մը նետելու անկարող էր:

- Գէորգ, երթանք, բոլորին ճամբան այս է, - ըսաւ Անդրանիկ, անոր թեւէն քաշ տարով: - Ազատութեան համար ինկած հերոսները անմահութեան ճամբան բռնած են: Դիրքերը մեզի կը սպասեն, շուտով թշնամիի թնդանոթներուն ձայները պիտի լսենք:

- Հրայրի զերեզմանը միակն է, որմէ դիւրին չեմ կրնար բաժնուիլ: Տասնըչորս տարիներէ ի վեր այս լեռներն ու ձորերը միասին չափեցինք, Հրայրը եղաւ մեր բոլորին ղեկավար ու մեծ որտէ տէր մարդ, ու այսօր ահա զինք մինակ թողած՝ ստիպուած ենք երթալու արիւնստ կռուին:

Գէորգ կը խօսէր մրմունջով, կարծես ինքն իրեն հետ ու ծանրաքայլ, ընկերներու հետ կը վերադառնար կեդրոնը, ուր պիտի խորհէին դիմադրութեան մասին, որ անխուսափելի կերպով իրենց առջեւ պիտի ցցուէր:

Անձնուրացներու այս բանակը վարժուած էր արիւնստ մարտերու: Ու շատ անգամ իրենց կողքին ինկած հերոսը կը մնար անթաղ, ժայռի մը տակ: Կռուը ազատութեան կը շարունակուէր ու մահը, ազատութեան այս ճանապարհներուն վրայ՝ ճակատագրական բաժինը կը նկատուէր իրենց: Ըմբոստութեան դրօշը բարձրացնող մարտիկ ժողովուրդն արդէն վարժուած էր զոհեր տալու եւ զոհեր խլելու թշնամիէն:

Ազատութեան զաղափարով բռնկուն այս լեռնականները պատրաստութիւններ կը տեսնէին յաջորդ գրուարներու համար:

Ազատագրական կռուը բնական երեւոյթ մըն էր երկնակարկառ այս լեռնաշխարհին:

(Շար.)

Կ. Ս.



ԻՎԱԿԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

«ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆԸ»...

ԹՂԹԻ ՎՐԱՅ

(Հայաստանի Երասրակուրիցների տարի)

Յայտել է, թէ Խորհրդային Միության թիւնում ինչպիսի յամառ հետեւողականութեամբ է դործադրուած ազգաձուլման, փաստօրէն ուսացման քաղաքականութիւնը: Կարելի էր սպասել, որ հէնց իրենք՝ ուսւ մտաւորականները առաջին հերթին հանդէս դան այդ բարբարոսական նախաձեռնութեան դէմ: Բայց ոչ. բոլորն էլ սուս անտեղեակ ձեւանալով լուռ են եւ յաղթական հրճուանքով են դիտում, թէ ինչպէս են քաղաքակրթութեամբ փոքր ազգերը... Չկայ մէկը՝ որ համարձակօրէն հրապարակ դայ եւ ի լուր ամէնքի յայտարարի, թէ՛ «Հայրենակիցներ, այս ի՞նչ ենք անում... Մի՛ թէ աշխարհում այլեւս ուրիշ հոգսեր չկան, որ կենդանի ազգեր սպանելով ենք զրազւած»: Տարիներ առաջ միայն մի երիտասարդ եւ հայրենասէր ուսւ դրող՝ Վլադիմիր Սոլոուխինը, բացառաբար փորձեց մի առիթով պայտպանել ազգային լեզուով դրականութիւնների գոյութեան իրաւունքը: Բայց նրա խօսքերը համակրական արձագանդ չգտան ուսուական շրջաններում եւ Սոլոուխինը լռեց ու չհարուսակեց իր դրոյթի ծաւալում հետապնդելու գործը: Եւ դա շատ բնորոշ է,

թէ ինչպէս են հասկանում «ժողովուրդների բարեկամութիւնը» իրենք՝ ուսուները, ինչ թէ նոր, ուսեալ թէ ազէս: Յանուն հրաբեկամութեան՝ պատրաստ են սիրով կլանելու ամէն մի աղօղի, բայց ուղղակի չեն կարող հանդուրժել քաղաքականապէս ու հոգեպէս ազատ ժողովուրդների գոյութիւնը:

Խորհրդային Միութեան բնակչութեան կէսը ուսներէից է կազմուած եւ նրանք այդ հանգամանքից օգտուելով դրութեան տէրն են կարծում իրենց: Առանձին-առանձին վերցրած «փոքրամասնութիւն» կազմող ժողովուրդներին ուսները ուղղակի եւ անուղղակի միջոցներով այնպիսի վիճակի մէջ են դրնում, որ այդ ոչ-ուսւ ժողովուրդները հարկադրուած են անընդհատ մտածել հաւատարմութեան երդում տալու եւ իրենց պատմութիւնից իսկական կամ իսկականի սպաւորութիւն թողնող փաստեր հաւաքելու մասին, որոնք ապացուցելու լինեն ոչ միայն այսօրուայ, այլեւ առհասարակ ի սկզբանէ զարաւոր բարեկամութիւնը՝ ուսւ ժողովուրդի հետ,

փոյթ չէ, թէ հեռաւոր գարեբը զուգահեռաբար վկայակոչելը ինքնին հակասում է «Հոկտեմբերեան յեղափոխութեան միանշարժայն նոր դարագլուխ բացելու» տարածուած դրոյթին:

Բայց համաշխարհային պատմութեան մէջ նորութիւն չէ ուժեղի եւ թոյլի այդ կարգի փոխյարաբերութիւնը: Եւ եթէ Խորհրդային Միութեան մէջ սոցիալիզմի լինելը միայն, որ սչ-ուս ժողովուրդները ժամանակ առ ժամանակ նորոգէին իրենց հաստատութեան երգումը ուսական ճնշող զանաւանդի նրկատմամբ, այն ժամանակ կարելի էր Արեւելի քաղաքները, թէ աշխարհում ոչինչ չի փոխուել ու պատմութիւնը շարունակուում է, թէեւ այդ էլ լիովին ճիշդ չէ, քանի որ մեր աչքերի առջեւ շատ բան է փոխուել աշխարհում եւ մենք ապրում ենք 20-րդ դարի երկրորդ կէտին՝ համաշխարհային ապագադութեան ժամանակաշրջանում: Ուրեմն, ընկան է սպասել, որ Խորհրդային կայսրութիւնը նա հնազանդի ժամանակի երկաթեայ օրէնքներին: Սակայն մենք տուեալ գէղքում նկատի առնենք միայն իրերի մինչարժմեան վիճակը:

Խորհրդային Միութեան մէջ փաստական ուսացման արշաւը ըստ հնարաւորին ջոզարկելու նպատակով առաջ է քաշուում առհասարակ ԲՈՒՄՔ՝ «ժողովուրդների բարեկամութիւնը», քանի որ այդ ճանապարհով աւելի ապահով է կարծուում ընդհանուր ձուլումը, քարելունեան կենսա-հոգեմտաւոր խառնակութիւնը: Գործադրում է նախապէս «չըջանային ձուլման» քաղաքականութիւնը, այսինքն արհեստականօրէն քարեկամացումն են այս կամ այն աշխարհագրական շրջանի նախ համասեռ եւ ապա տարասեռ ժողովուրդները, զիմադրելու, բարոյալքում, որպէսզի յետոյ հասած տանձի պէս առուական որկորը մտնեն: Այդ աշխարհագրական շրջաններից է Անդրկովկասը: Մանաւանդ վերջին մի քանի տարիների ընթացքում շտեմուած չափերի հաստն

կենսորոնական-պետական միջոցառումները՝ Անդրկովկասի ամէն կարգի միաւորման ուղղութեամբ: Այդ միջոյցում էլ բազմազան «ժողովուրդների բարեկամութեան» նիւթի շուրջ հրատարակութիւնները, ենթարկուելով որոշակի վերին հրահանգների:

Սոսքը բուն անդրկովկասեան ժողովուրդների բարեկամութեան մասին չէ, այլ կուսակցա-պետական շահախնդիր միջոցառումների: Անդրկովկասեան ժողովուրդները բարեկամութեան կարիքը ունեցել են, ունեն եւ միշտ պիտի ունենան: Դրա համար եթէ նոյնիսկ ուրիշ պատճառ չլինի, հէնց միայն հարեւանութիւնն էլ բաւական է յիշելի չափով: Թէ ինչ ձեւով պիտի հասնեն այդ բարեկամութեան՝ դա տարբեր հարց է: Յամենայն դէպս, դա իրականութիւն կը դառնայ միայն հէնց այդ ժողովուրդների ինքնարեւոյն նախաձեռնութեամբ ու ջանքերով, այլ ոչ թէ որեւէ արտաքին ուժի՝ ազայսեկան թեւադրանքով: Այսօրուայ միաւորման արշաւի մէջ անդրկովկասեան ժողովուրդների շահերը, անտարակոյս, վերջին տեղն են բռնում: Հիմնականը առկայ համախորհրդային եւ ապա թէական համաշխարհային ազգաձուլման արագացումն է՝ տեսականօրէն, իսկ ուսականացման հիմքերն ամրացնելը՝ գործնականում եւ քաղաքականապէս:

1963 թուին Երեւանում լոյս տեսաւ Անդրանիկ Եսահեանի «Մեր ազգի անդրկովկասեան ժողովուրդների կուլտուրական համագործակցութեան պատմութեան» գիրքը: Գիրքը հետապնդում է վերոյիշեալ վերուստ հրահանգուած նպատակը, - ցոյց տալ անդրկովկասեան ժողովուրդների միակամութիւնն ու միասնութիւնը: Ճիշդ է, դա սահմանափակում է մշակութային ոլորտով: Չբնում հիմնականում արծարծում են գրականութեան, թատրոնի, կերպարուեստի, երաժշտութեան, շարժանկարի, պարերբական մամուլի, ուսումնական հաստատութիւնների վերաբերեալ նիւթեր: Բայց անպակաս են եւ զուտ քա-

դաքսական-քարոզչական նիւթերը: Արձանագրուած են անհաշիւ փաստական տուեալներ, բայց մեկնաբանուած ո՛չ թէ գիտական, այլ պետական-անպարտական տեսանկիւնից: Հեղինակը ըստ երևոյթի չաւատացած է, թէ տարասեռ ու տարարնոյթ փաստերը իրար խտնելով եւ մէջ ընդ մէջ շարելով՝ արդէն ինքնին ապահովուում է մշակութային համագործակցութիւնը եւ ապացուցում անդրկողմասեան ժողովուրդների բարեկամութիւնը: Անկախ այս անճարակ մեկերից, գիրքը հանդիսանում է որոշ մտայնութիւն արմատաւորելու առաջին փորձ, ունի որոշ դեր կատարելու յաւակութիւն: Վերջին տարիներս լոյս տեսան նաեւ այդ բնոյթի քաղաքական մի շարք այլ գրքոյկներ, որոնք ոչինչ չեն աւելացնում ամէնօրեայ լրագրական նշանախօսքերին՝ անդրկողմասեան բարեկամութեան ամրադնդման մասին: Եւ կարելի է վստահօրէն ասել, որ քանի դեռ անդրկողմասեան ժողովուրդների այսօրուայ փոխյարաբերութիւնները հիմնուած են հանրածանօթ կեղծիքի վրայ, չեն կրում ազատ նախաձեռնութեան եւ կամաւորութեան կնիք, - բարեկամութեան մասին ամէն մի հերթական կամ հերթից դուրս խօսակցութիւն պիտի ունենայ վերացական, հետեւապէս եւ անշահ բնոյթ, ու այդ հարցի մասին հրատարակութիւններն էլ կը լինեն գիտական, բայց երբեք լիովին գիտական, եթէ մի կողմ դնենք պատմական անցեալին վերաբերող մասնադիտական ուսումնասիրութիւնները, որոնք նոյնպէս կան եւ աստիճանաբար շատանում են:

«Համա-անդրկողմասեան» բնոյթի հրատարակութիւններից բացի, կան նաեւ զանազան հրատարակութիւններ հայ-ադրբեջանական եւ հայ-վրացական պատմական ու մշակութային յարաբերութիւնների շուրջ: Դրանք ներկայացնելը կարող է մօտաւոր պատկերացում տալ իրերի վիճակի մասին: Նախ խօսենք հայ-ադրբեջանական յարաբերու-

թիւնների առթիւ լոյս տեսած գրականութեան մասին: Այդ գրականութիւնը իր բնոյթով երկու տեսակի է: Կան գրքքեր, որտեղ բանագրօսիկ եղանակով եւ հիմքից զուրկ յայտարարութիւններով ջանք է թափուած ապացուցուած համարելու երկու հարեան ժողովուրդների «գարաւոր բարեկամութիւնը» եւ տուել եւս այդ բարեկամութեան այսօրուայ ամրապնդումը: Կան նաեւ այլ գրքքեր, որոնք վերաբերում են պատմամշակութային այս կամ այն առանձին խնդրի եւ աւելի կամ պակաս չափով գիտական ուսումնասիրութեան բնոյթ են կրում, մեծ մասամբ գրականադիտական: Նրանք էլ սկզբից մինչեւ վերջ գրաբեկամութիւն» են հոյովում, բայց պահում են չափի զգացումը եւ փաստերից շեղանալու շնորհիւ յաճախ օգտակար եզրակացութիւնների են յանգում: Արդեւ տեսակի գրքեր էլ լոյս են տեսնում եւ Հայաստանում եւ թէ Ադրբեջանում, բայց մանաւանդ Հայաստանում, որը շփոթեա ինչու միշտ էլ ամէնքից առնալ է վազում գրաբեկամութեան» հարցում...

Միւս պարագան, որ աչքի է ընկնում յիշեալ բնոյթի գրականութիւնը քննութեան առնելիս, այն է, որ «հայ-ադրբեջանական բարեկամութեան» նիւթի շուրջ գրում են հիմնականում Ադրբեջանում ապրող կամ աւանդապահ այնտեղ ծնուած հայերը եւ Հայաստանի ադրբեջանացիները: Դա նախ բացատրուած է, անշուշտ, երկու լեզուներին տիրապետելու իրողութեամբ, որը անհրաժեշտ պայման է այդ նիւթի շուրջ որեւէ փաստացի աշխատութիւն գրելու համար: Իսկ հիմնական պատճառը, թւում է, այն է, որ այդ կարգի անձինք ներքուստ աւելի շատ են պղում անընդհատ բարեկամութեան մասին խօսելու պահանջը: Դա կենսական է նրանց համար: Եւ հոգեբանական տեսակէտից ուշադրաւ է այդ երեւոյթը:

Ադրբեջանում երեւցող ուսումնասիրութիւնները հիմնականում վերաբերում են գրական առանձին հարցերի՝

բանահիւսուածքին, Սայաթ-Նոյա, Պաշտուր Արովեան եւ այլն: Հայաստանարեւելիկ հայագէտ աղբիւրներէն ուսումնասիրութիւնները եւս մեծ մասամբ պատկանում են գրական-մշակութային բնագաւառին: Այսպէս, թատերագէտ-շարժանկարագէտ Սարգիս Ռիզաեւը իր ընդհանուր կարգի լրջամիտ ուսումնասիրութիւններէ շարքում՝ պատեհ առիթով անդրազանգում է նաեւ հայագրութեան կանոն մշակութային կապերին: Լրագրող-գրականագէտ Աբգէր Երեւանցու աշխատութիւնները եւս («Հայ եւ աղբիւրական ժողովուրդներէ բարեկամութեան արտացոլումը գրականութեան մէջ», «Հայ-աղբիւրական ժողովրդական բանահիւսուածքի կապերը») նոյն բնոյթի են: 1958 թուին լոյս տեսաւ Հայաստանում Ծնունդ-Մեծացած, բայց այժմ Բաքում աշխատող գրականագիտուհի Ք. Թարվերդիեւայի «Արովեանը եւ Ախուրզովը» օգտակար գիրքը: Հեղինակը բարեխղճօրէն ներկայացնում է Պաշտուր Արովեանի եւ աղբիւրական դասական գրող՝ թատերագիր ու փիլիսոփայ Միրզա Յաթայի Ախուրզովի կեանքն ու գործունէութիւնը, համապատասխան զուգահեռներ անցկացնելով: Այդ գրքում եւս բարեկամութիւնը կարեւոր տեղ է զբաղեցնում, բայց չի հեռանում հնարաւոր իրականութիւնից: Արովեանը եւ նոյնքան լուսամիտ ու մարդասէր Ախուրզովը ներկայացնում են բնական եւ հաւաստի միասնորոտում: Դա ցոյց է տալիս, որ լուսումնասիրութիւն կը ստացուի միայն այն դէպքում, երբ հեղինակը չի կեղծում մարդկայնօրէն մատչելի իրականութիւնը եւ ոտնձգութիւններ չի տնում ճշմարտութեան հանդէպ: Այլուպէս, հասկացողներէ աչքում բարոյական ձախողումն ապահովուած է:

Գրականագիտական աշխատութիւնների շարքում իր տեսակի մէջ ուշագրաւ աշխատութիւն է Գուրգէն Անտոնեանի «Հայ-աղբիւրական բարեկամութիւնը գրականութեան մէջ» (1962 թ., Սրեւան) գիրքը: Անտոնեանը տպրում եւ

աշխատում է Բաքում: Գիրքը շարադրուած է խորհրդային նոյնաբնոյթ հրատարակութիւնների համար անսովոր բծախնդրութեամբ, ճշակով եւ խնամքով: Հեղինակը պարզ պատկերացնում է իր անեղբը եւ չի շեղում ճանապարհից: Նոյնիսկ որոշ անխուսափելի կըրկնութիւններէ մէջ պահուած է շփի ըզգացումը: Անշուշտ, նկատի առնելով գրքի խորհրդային հրատարակութիւն լինելը, ամէն քայլափոխի կարելի է այնտեղ գտնել վիճելի գրոյթներ: Բայց գրքի համար բնորոշ այդ չէ: Գիրքը ամէն բանից առաջ գիտական աշխատութիւն է, փաստերը ներկայացնելու իր մեթոտով եւ ինքնուրոյն գատնութիւններով: Գիտականը առհասարակ չի բացառում վիճելի, բայց միանգամայն անհամատեղելի է կանխակալ ու աչառու կեղծիքի հետ: Գուրգէն Անտոնեանի գրքում կան վիճելի շատ կէտեր, բայց կեղծարարութեան բացայայտ միտում չի նկատուած: Գիրքը ընդգրկում է պատմական երկար ժամանակաշրջան, բայց քննութեան նիւթ է դարձնում մի որոշակի բնագաւառ, թէ գրականութեան մէջ ինչպէս են արտայայտուել Հայ-աղբիւրական պատմական յարաբերութիւնները: Նոյնիսկ խորհրդային ժամանակաշրջանի վերաբերել մէջբերուած փաստական նիւթերը որոշ խորհրդածութիւնների են մղում: Այս մի քանի գիտողութիւնները, առանց ըստ էութեան կանգ առնելու Անտոնեանի աշխատութեան վրայ, քոնի որ դա դուրս է մեր նպատակից, - ցոյց են տալիս, որ խորհրդային պայմաններում էլ նոյնիսկ ժողովուրդների բարեկամութեան մասին կարելի է խօսել մի որեւէ յաջողուած գրքում, եթէ յարգուեն մտաւոր բարեխղճութեան որոշ հիմնական պայմաններ: Գրականութեան մէջ արտայայտուած է նաեւ բարեկամութեան ձգտումը, որը գիտականօրէն ներկայացնելն ու մեկնաբանելը անպարման օգտակար գործ է: Դա նախադրեալներ է պատրաստում եւ նշանաւոր ամբացնում իսկական բարեկամութեան

համեմուտ ճանապարհին: Երբ խօսքը վերաբերում է անցեալին, ապա կարելի է կեղծիքից մասամբ խուսափել, որովհետև ամէն ժամանակ եղել են ամէն տեսակ գրողներ եւ այժմ ոմանց անտեսելը չի նշանակում միևնորիին խեղաթիւրել: Աւելին. հնում ժողովուրդների բարեկամութեան մասին գրողները սովորաբար ունեւորել են իրենց խղճի ձայնին, առանց վերին պատուէրի: Եւ ուստի նրանց խօսքը հաշուի առնելը հիմք ունի: Իսկ խորհրդային ժամանակաշրջանում ամէն գրող ի պաշտօնէ պարտաւոր է միայն գովերգել «ժողովուրդների բարեկամութիւնը», անկախ նրանից, թէ ինչ է մտածում ինքը անձամբ եւ ինչպիսին է բուն իրականութիւնը իր շրջապատում: Ուրեմն, դրականազետութեան յանդուրձանն էլ սովորաբար պայմանաւորուած է լինում անցեալի ճշմարտութեամբ, իսկ անյանդուրձանը՝ ներկայումս պարտադրուող քաղաքական-դաշտափարսիսական նկատուածներով:

Եթէ հայագրբեջանական մշակութային յարաբերութիւններին վերաբերող աշխատութիւնները քիչ թէ շատ յանդուրձան յոյս կարող են ունենալ, քանի որ ի վիճակի են պարունակելու իրական եւ ուսանելի տարր, բոլորովին յուսահատական են ընդհանուր բնոյթի աշխատութիւնները, որոնց տիպական նմոյշն է Ծառուր Աղայեանի «Հայ եւ ադրբեջանական ժողովուրդների դարաւոր բարեկամութիւնը» (1961 թ., Երեւան) կաղապարուած վերնագրով գիրքը: Աղայեանը եւս ծնունդ ու երկտր ժամանակ ապրել է Ադրբեջանում: Բայց քանի որ այնտեղ փաստօրէն անելիք եւ հետադարձ շունչ իրենց իրենց հասարակադիտութեանը նուիրուած հայերը, ապա Աղայեանն էլ, շատ-շատերի նման, փոխադրուել է Հայաստան եւ բարձր պաշտօններ է վարում կուսակցա-դիտական հիմնարկներում: Վերոյիշեալ գիրքն էլ գրուած է նոյն ոճով ու ոգով, որով գրուած են առհասարակ բոլոր գրքերը կուսակցական պատմագէտների կողմից:

Անհամ եւ անհիւթ: Չոր ու տողակալի: Ճամարտակութիւններ միմեանց յետեւից, առանց սեփական դիմազօծի ու տարրական դատողութեան: Ծիշող եւ ճիշդ ստպիւնեան ժամանակներին՝ անհամ: Փորձառու ընթացողը կարող է Աղայեանի գրքում տասնեակ էջեր վարկենապէս աչքի անցկացնելով թերթատել եւ կարգացած համարել, քանի որ նախօրոք պարզ է, թէ ինչ է գրուած այնտեղ, նոյն կարգի այլեւայլ գրքերի օրինակով: Հեղինակը ստույգ է, թէ Պենկոյ աշխատութիւնը առաջին փորձն է ուրուագծելու հայ եւ ադրբեջանական ժողովուրդների բարեկամական կապերը անտեսական, հասարակական եւ կուլտուրական կեանքի բնագաւառում - հընարոյն շրջանից մինչեւ մեր օրերը»: Բայց եթէ յանդուրձան «փորձերն» էլ այդ ուղղութեամբ ընթանան, ապա ոչ մի ընթացող երբեք չի կարող նոյնիսկ մտաւոր պատկերացում կազմել հայագրբեջանական իրական յարաբերութիւնների մասին: Յայտնի է, որ աղբյուրեջանական ժողովուրդը համեմատաբար նոր երեւոյթ է, նոր կազմաւորում: Ծիշող է, Ադրբեջանի Հողում պատմական տարբեր ժամանակաշրջաններում ապրել են տարբեր ժողովուրդներ, որոնք եւ որոշ չափով կարող են համարուել այսօրուայ ժողովուրդի այս կամ այն ազգագրական տարրը: Այդ ժողովուրդները դարերի ընթացքում տարբեր դիրքերից են որոշել իրենց յարաբերութիւնները հայերի հետ: Եթէ պատմական ակնարկ է գրուում, ապա անպայման պէտք է արտացոլուի այդ ընթացքը, իրերի բնաշրջումը եւ այլն: Բայց Աղայեանի Հողը չէ, նա ուզում է հնձել, առանց ցանկելու: Ուզում է էփանդին միջոցներով բարեկամութիւն ապացուցել, բայց նեղողութիւն չի քաշում պատմութիւնն ուսումնասիրել եւ ըստ այնմ բացատրութիւններ տալ: Նա ոչ միայն բնագոյնիկ զուգահեռներ է անցկացնում, այլեւ կամայական «նոյնացումներ» է անում, այդ մեթոտը կիրառելով նոյնիսկ գրքում պետուած լուսանկարները դա-

աւարտան հարցում: Եթէ Աղայեանին հաւատալու լինենք, ապա Հայ-աղբեր- ջանական յարաբերութիւնները սկզբից մինչև հիմա խարտուած են եղել ան- խառն բարեկամութեան վրայ, հանդի- սացել են յաւերժական հովուերգու- թիւն... Հեղինակը ամենայն հեշտու- թեամբ սահում է բոլոր քիչ թէ շատ էական հարցերի վրայով:

Գրքի այդ ողբալի մակարդակը ա- ուղին հերթին պայմանաւորուած է նը- բանով, որ մեծ մասամբ վերաբերում է վերջին 50-ամեակի իրադարձութիւննե- րին, երբ կացութեան տէրը դարձան կո- մունիստական իշխանաւորները: Իսկ մեր ժամանակի մասին առհասարակ կարե- լի՞ է արդեօք որեւէ լուրջ աշխատութիւն գրել խորհրդային պայմաններում, այն էլ ազգային յարաբերութիւնների փա- փուկ հարցի առթիւ: Ամէն մարդ գիտի, որ ոչ: Եւ Աղայեանի հաստատի որ գիրքն էլ լցուած է ամէն ինչով, որպէսզի ոչինչ չստուի: Այսօրուայ բարեկամութեան օգուտն նրա բերած օրինակները այսպէս կոչուած սոցիալիստական մրցման, փո- խադարձ այցելութիւնների, համատեղ հաւաքոյթների եւ այլն բազմատեսակ խեղդատակութիւնների մասին՝ միայն ապացուցում են այդ բոլոր միջոցա- ուսմաների ծիծաղելիութիւնը, բայց ոչ աւելին: Գրական երկերից բերուած ու- ուցիկ կամ սենտիմենտալ քաղաածք- ները եւս ցանկացածի հակառակն են ա- պացուցում: Այդ բոլորն այդպէս են ըս- տացուում, որովհետեւ համատարած կեղ- ծիքով են շնչում: Հայ-աղբերջանական բարեկամութիւնը չէ որ հետաքրքրում է այդպիսի դրքեր գրելու պատուէր տը- ւողներին, այլ այդ բարեկամութիւնը իբր փաստ ներկայացնելը, ճապացուցե- լը», քանի որ վերջին հաշուով ամէն մի ճնուածում» վերադրուած է գեղեցիկա- տական պարտիայի իմաստուն քաղա- քականութեանը: Թղթի վրայ ամէն ինչ փայլուն է ներկայացուում:

(Հայաստանում տպուող գրքերի մէջ առաջ քաշուող պաշտօնական դը- բոյթներից անկախ, կասկած չկայ, որ

Հայ-աղբերջանական բարեկամութեանը նպաստող ամէն մի աշխատանք օգտա- կար կարող է լինել: Կարելի է վստահօ- ռէն պնդել, որ բարեկամութեան ձգտե- լու սաղմերը գոյութիւն ունեն երկու ժողովուրդների որոշ զանգուածների հոգեբանութեան մէջ: Դա անժխտելի փաստ է եւ այդ ուղղութեամբ կարելի է պատշաճ ուսումնասիրութիւններ կա- տարել, սակայն մնալով իրական տըւ- եալների վրայ եւ ոչ թէ անհիմն ու օ- դային ընդհանրացումներ անելով: Հայ- աղբերջանական բարեկամութիւնը իրա- կանութիւն կը դառնայ միայն այն ժա- մանակ, երբ Հայն ու աղբերջանցին ի վիճակի կը լինեն դէմ-դիմաց քննարկե- լու անխտիր ամէն մի վիճելի հարց, ա- ուանց հայեացքը շեղելու եւ նենգամիտ շրջանցումներ կատարելու: Բայց արանք մտահոգութիւններ են, որոնց քննու- թեան առնելու տեղը այս յօդուածը չէ):

Եթէ «ժողովուրդների բարեկամու- թեանը» նուիրուած պաշտօնական հրա- տարակութիւններում ամէն ինչ զորմա- նայիօրէն հարթ է ներկայացուում, միա- պաղաղ գովերգուում է այդ անտես ու անդոյ բարեկամութիւնը, հեղինակնե- րը պատկապա են ընկնում յօգուտ եղած կցկտուր փաստերը միմեանց հետ ճա- դացնելու» սպերախտ գործի, - բուն ի- րականութիւնը մեզ այլ բան է ասում: Բուն իրականութեան մասին տանապա- տիկ աւելին կարելի է գրել, հէնց թէ- կուզ խորհրդային մամուլի ու հրատա- րակութիւնների ընձեռնած փաստերի վրայ: Էլ չենք խօսում առօրեայ կեան- քի ընթացքում գրսեւորուող պիւրմիտս երեւոյթների մասին:

Օրինակի համար նշենք մի քանի Հանրայայտ փաստեր: Իր ժամանակ Սփիւռքի մամուլում հրատարակուեց Լեռնային Ղարաբաղի եւ չրվակայ Հայ- կական շրջանների 2500 բնակիչների՝ Խրուշչովին յղուած բողոքի գիծումը: Պաշտօնական պատշաճութիւնները նկա- տի առնելով՝ գիծումի հեղինակները, բնականաբար, շատ զուտապ են շարադրել իրենց ասելիքը: Բայց այդ վիճակում

անդամ արտասովոր ցնցիչ փաստաթուղթ է այդ նամակը: Եւ մի՞թէ բարեկամութեան օգտին է խօսում այդ փաստաթուղթը: Բացի այդ, եթէ աչքի անցուցնենք խորհրդային դանադան դասադրքեր, հանրադիրարաններ, ատլասներ, պատմական ուսումնասիրութիւններ եւ այլն, ապա կը տեսնենք, որ Արդրբեղանին վերաբերող նիւթերը դերազանցապէս կազմուած են ուղղակի ամհնայետաղիմական դիրքերից: Հայոց պատմութեան անվիճելի տուեալներն ու Հայերի նոյնքան անվիճելի դոյութիւնը ըստ ամենայնի անտեսելու միտումով: Իսկ այդ նիւթերը, որպէս կանոն, հաստատում են տուեալ երկրի կուսակցական վերին ղեկավարութեան կողմից եւ հետեւապէս արժանանում են նրա հուանութեանը: Հատորներ կարելի է կազմել մտմուլից ու դրքերից վերցուած փաստերով, որտեղ ամէն տեսակի խորամանկութիւններն են դիմում՝ հայութեան իրական տեղն ու դերը շարամտորէն նսեմացնելու ուղղութեամբ: Այստեղ զանց ենք առնում յիշատակել այդ կարգի ըմբոստացուցիչ փաստերը: Մի ժամանակ այդպիսի զբաղադրութիւնները» վերագրում էին Բաղիրովին եւ նրա աջակից վոճմակին: Բայց հարցը Բաղիրովի մէջ չէ, այլ ստեղծուած անբնական կացութեան: Ստեղծուած պայմաններում առատօրէն Բաղիրովներ են ծնւում միմեանց յետեւից: Քանի որ արդրբեղանական ժողովուրդն էլ իր հերթին անմիջական ուսացման վտանգին է ենթակայ, նրա ղեկավարները, մի տեսակ դրսն հակազդելու բնազդի ազդեցութեան տակ, դիմում են ամենահեշտ եւ ամենաանհետանկար ու անվայել միջոցին՝ ճնշում են իրերի բերմամբ ժամանակաւորապէս իրենց վարչական տնօրինութեան յանձնած բախտակից ժողովրդին: Օգտուում են պարզապէս իրենց կարծեցեալ «խրաւունքից», ըստ կոմունիստական ջունգլիների ինքնատեղծ օրէնքների: Այդ դէպքում ամէն ինչի մասին թող խօսուի, բայց ոչ բարեկամութեան: Հարցը պարզ է ինքնին, սնկախ փարիսեցիական հաւատարացումներից:

Լ. ՄԿՐՏՁԵԱՆ

(Վերջը յաջորդով)

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

(1945-1965)

Ե.

ԼԱՏԻՆ ԱՄԵՐԻԿԱ

Ա. ՄԵՔՍԻԿԱ

Մեքսիկական գրականությունը ծընունդ առած է 1910-1923 տարիներու յեղափոխական դեպքերէն: Այդ շրջանին, այս դժբախտ երկիրը ապրած է անապահովութեան եւ սարսափի օրեր: Ամէն կողմ կուի, ձիաւոր Հրոսակներու արշաւանք, կախաղաններ, բանտարկութիւն: Այս բոլորը տեղի կ'ունենային, որովհետեւ ժողովուրդը կ'ուզէր տապալել աւատապետական կարգերը, որովհետեւ կ'ուզէր ձերբազատուիլ անօթութեան ճիրաններէն եւ սովի մշտական ջէն:

Յրանսիօք Վիլյայի սպանութենէն եւ աւտապետական սխտեմը լուծարքի ենթարկուելէն ետք, երբ կարգն ու օրէնքը կրկին տիրեցին երկրին վրայ, ժողովուրդը սկսաւ վերաշինութեան գործը, փնտռեց նոր եւ ամուր հիմեր:

Իսկ անոնք որ ապրած էին յեղափոխութեան դիւցազնական եւ արիւնալի տարիները, անոնք որ մասնակցած էին, կամ պարզ ականատեսներ եղած էին յեղափոխութեան, ուզեցին վերապրիլ այդ օրերը, գրի առին իրենց տեսածները եւ ապրածները: Այս գրողներուն տրուեցաւ Յեղափոխութեան վիպասանները տիտղոսը:

Արդէն 1916-ին, Մարիանո Ազուլյա ճամբան բացած էր իր վարի թագեցիները վէպով: Յիշատակի արժանի են Մարքիս Լուիզ Կամէզ, իր Արծիւք եւ օձը վէպով եւ Ռաֆաէլ Ֆելիքի Մուկիսոզ,

իւր վայրագ ըմբոստը, Յաուսը՝ Փանցօ Վիլյայի հետ վէպերով:

Յեղափոխութիւնը երեւութապէս նոյն ազդեցութիւնը չունեցաւ բանաստեղծութեան վրայ, բայց ծնունդ տուաւ Սքրիտեմախտներու զայրացիմ: Մափիւն Արսէ երգեց յեղափոխութեան վայրագութիւնը, ծանրախոհ ու պատկերաւոր յեղուով մը: Մինչ Սալվադորէ Խալօ, Խայմ Թառէ Պատէք եւ Ալֆոնսօ Ռէյէս, որոնք մօտէն ծանօթ էին եւրոպական գրականութեան, ջանացին իրենց գործին տալ տիեզերական արժէք: Մերժելով ներկայ իրականութեան ներշնչումի ռիւէէ արժէք, անոնք սկսան զննել իրենց եսին ծալքերը: Եւ սակայն, օր մը, դէմ յանդիման գտնուեցան այդ իրականութեան հետ, չկրցան հաշտուիլ անոր հետ, կեանքը դառան անիմաստ, եղան յուսահար, եւ քաշուեցան իրենց փոքուկըրեայ աշտարակներուն մէջ եւ հոն ապրեցան առանց կիրքի եւ առանց յոյսի:

Խոզէ Կարոսքիզու իւր Ման առանց վայնանի բանաստեղծական հատորին մէջ, լաւագոյնս կը վերլուծէ իր սերունդին կծու եւ ողբերգական մտասեւեռումները: Այս երկար պոէման, որ խորհրդագրապաշտ բնոյթ ունի, կը հակադրէ ջուրը, որ կեանքն է, ամանին, որ ձեւն է: Հեղինակը իր մտպական արուեստով կ'ըօժ հետեւեալը — «Ոչ մէկ ատեն կեանքը պիտի մտնէ ձեւէն մերս. ոչ մէկ ատեն ջուրը պիտի առնէ ամանին կանաչութիւնը: Կեանքը կը ստի յարդէն

դէպի անասունը, անասունն դէպի բայ-
սը, բայսէն դէպի քարը եւ քարէն դէպի
նշնալսիւնը: Յստակատես մտքին իբր
բաժին կը մնայ միայն յուսահատութիւ-
նը:

**ՄԵՔՍԻՔԱԿԱՆ ԱՐՊԻ
ԲԱՆԱՍՏԵՂՄՈՒԹԻՒՆԸ**

Ներկայ սերունդը, որ կ'աշխատակ-
ցի մասնաւորապէս Թալէր եւ Նոր Եր-
կիր պարբերականներուն, չ'անտեսի իր
նախորդները: Անոնցմէ իբր ժառանգ
կ'ընդունի անոնց Հեանալի լեզուն եւ
բարձրորակ ճաշակը. բայց զանոնք կը
զատապարտէ իրենց մտաւորականու-
թեան եւ յուսալքութեան համար:

Օքթալիօ Փազ բանաստեղծութիւնը
կը նկատէ կեանքի արտայայտութիւն
մը, ապրելու ձեւ մը, միջոց մը՝ հաղոր-
դակցութեան մտնելու միւս մարդոց
հետ: «Բանաստեղծութիւնը, - կը գրէ
Փազ, - մեզ կը հետաքրքրէ իբր փար-
ձառութիւն մը, այսինքն բան մը, որ
պէտք է սպասուի: Մենք անոր մէջ կը
ստեղծենք հաղորդակցելու գերագոյն
միջոցը: Զարմանալի չէ որ սերը եւ բա-
նաստեղծութիւնը մեզի երեւցած ըլլան
նոյն իրականութեան իբր երկու երես-
նայր: Սերը, ինչպէս նաեւ բանաստեղ-
ծութիւնը, փարձ մըն էր վերագտնելու
համար մեր մէջ Աղամը, այսինքն մար-
դը իր խզումէն առաջ:

Ու կ'աւելցնէ՝ Մենք կը մկատենք
բանաստեղծութիւնը իբր ոստում մը դէ-
պի մահ, փարձ մը՝ ցնցելու մարդ էակին
հիմերը եւ գայն փոխադրելու դէպի միւս
աշխարհ, հոն՝ ուր կը հաշտուին հակառա-
կութիւնները: Այս զազափարներն են,
որ կեանք կու տան Օքթալիօ Փազի գոր-
ծերուն, որոնք կը կոչուին Մարդամ
արմատը, Քարին եւ ծաղիկին միջու,
Աշխարհին ծայրը, Առանց տարբի արե-
ւը եւ վայրագ եղանակը:

Փազ Առանձնութեան լարիւրիմթո-
ւը գործին մէջ տուած է նաեւ պատմա-
կան եւ ընկերաբանական ուսումնասի-

րութիւններ, ուր կը ջանայ թափանցել
Մեքսիքացի մարդուն զաղանկքին: Եւ
այն եզրակացութեան կու գայ, որ Մեք-
սիքացին տեղական եղած է իր ականա-
կան խորհրդներէն եւ ինքզինք միշտ
որբ կը զգայ: Առանց ուրանալու իր
պատմական տեղակալը, ան կ'ուզէ ըլլալ
ո՛չ կարմրամորթ, ո՛չ սպանացի, ո՛չ
խառնածին, այլ ինքզինք, Մեքսիքացի
մը: Իր ճակատագրին զաղանկքը հաւ-
կնալու համար կ'արգելափակուի միւս-
կութեան մէջ, եւ իր նախահոգիներուն՝
Աղթէքներուն պէս, կեանքը կը փնտռէ
ճահուան մէջ:

ՄԵՔՍԻՔԱՅԻ ՎԻՊԱՍՆՆԵՐԸ

Արգի սերունդը, բանաստեղծու-
թէն աւելի ինքզինքը տուած է վէպին:
Ակուսութիւն Եանիէզ, իր վազը՝ փա-
թարիկ գործով տուած է Մեքսիքայի
հոգեբանական առաջին վէպը: Փոքրիկ
քաղաքի մը լսյաբը եւ աղմուկները կը
լեցնեն գործը, առանց կարենալ թափան-
ցելու հերոսներուն տանջուող խիզճին,
որովհետեւ անոնք կալանաւորներն են
փրած ընկերութեան մը անտամանակ օ-
րէնքներուն:

Խուամ Ռոլֆօ տուած է պատմը-
ւածքներու հաւաքածոյ մը Հրդեհուած
Անդաստանը եւ Փանթաթիք վէպ մը՝
Փետրօ Փառամօ, որուն բոլոր գործող
անձերը մեռեալներ են:

Խոզէֆինա Վիսէնզ, մասնադիտու-
հին է մտերմական վէպերու:

Փարլոս Ֆուէնթօ, գրած է ընկե-
րարական վէպեր: Ամէնէն թափանցիկ
երկրամասը գործով կը նկարագրէ շնա-
կան անձնասիրութիւնը որոշ զասակար-
գի մը. եւ Մաքսար խիզմերու մէջ կը
յայտնաբերէ երիտասարդութեան յոգ-
սերը եւ անոր ջանքերը՝ կեանքի նոր
ձեւ մը գտնելու:

Տակաւին կանուխ է վերջնական վը-
ճիւ մը տալու համար այս երիտասարդ
զրականութեան մասին. բայց կայ բան
մը, որ ընդհանրական է այս բոլոր դը-

րողներուն, անոնք կը ջանան անկեղծ ըլլալ եւ ինքնուրոյն պատասխան մը տալ արդի ընկերութեան պահանջներուն: Գրական ստեղծագործութեան չընտրահա կ'աշխատին մարդը ժօտեցնել մարդուն:

ՀՆԻԿԱՍՏԱՆ ԵՒ ՓԱՔԻՍՏԱՆ

1947-ին Հնդկական ցամաքամասը, իր անկախութիւնը ստանալով, բաժնեւեկուեց երկու պետութիւններու՝ Հընդկաստան եւ Փաքիստան: Անմիջապէս այս երկու երկիրները ուղեցին ունենալ իրենց ազգային ու պաշտօնական լեզուն: Հիմա Հնդկական ցամաքամասը կը գործածէ տասնըչորս ազգային լեզու, որոնց երկուքը, Ուրաուճ եւ Պելլիպլիճ, կը գործածուին ե՛ւ Հնդկաստանի մէջ եւ Փաքիստանի մէջ: Բայց Հինտի լեզուն, շնորհիւ իր աշխարհագրական դիրքին, առաջին տեղը զբաւեցու վրայ է:

Հնդկական ցամաքամասի գրականութիւնը սկսաւ յառաջդիմել վերջին երեսուն տարիներուն ընթացքին, եւ գորողները բարձրեցին գրականութեան պաշտօնը եւ կարեւորութիւնը միլիոն փոփոխութեան մէջ գտնուող աշխարհի մը մէջ: Սակայն չմոռնանք շեշտելու, որ այս երկու երկիրները կը մնան բանաստեղծութեան եւ հոգեկանութեան երկիրները, եւ թէ հակառակ արձակին յառաջդիմութեան, միշտ բանաստեղծութիւնն է որ արժանի կը տեսնուի բնորոշելու մեծ եւ հանճարեղ գրողը, եւ միակ յիշատակելին, որովհետեւ ոտանաւորը աւելի դիրքին կը սորվին միլիոնաւոր անուս մարդիկ: Արձակը եթէ կարեւոր գործեր տուած է պատմուածքին մէջ, սակայն տակաւին ո՛չ մէկ յիշատակելի վէպ կրցած է ունենալ:

Քաղաքական զէպքերը, եւ անկախութեան համար մղուած պայքարը առիթ տուած են գրողներուն զբաղելու ընկերային եւ անտեսական խնդիրներով եւ իրենց գործերուն մէջ հասա-

լորդերուիլ իրապաշտ եւ հոգեբանական թեմաներով:

Անկախութեան համար մղուած պայքարը զարգացուցած է նաեւ յարաբերութիւնները մարդուն եւ աշխարհին միջեւ, եսին եւ պատմութեան միջեւ: Պատմութիւնը առասպելական արարքներուն վայրը չէ, այլ հաստատուն հող մը, ուր մարդը կը հանդիպի իր ճակատագրին:

Գրական առաջին շարժումը բնորոշուած է իր կծու ենթակայականութեամբ եւ բմբոստացումի բոլոր ձեւակերպութիւններով: Ասոնք ընդհանրապէս գեղասէրներ եւ վիպապաշտներ են, որոնք գործին մէջ կը փնտռեն նախ եւ առջ ոճին գեղեցկութիւնը: Այս դպրոցին ամէնէն նշանաւոր ներկայացուցիչը կը կոչուի Սուժիթրանանտան Փանթ, որ ունեցած է շատ հետաքրքրական յատկութիւն, նախ՝ առարկայապաշտ էր յետոյ յարեցաւ կանախականութեան, եւ վերջապէս ինքզինքը նըւիրեց գերբնական ճշմարտութիւններու որոնումին:

Այս ձեւապաշտութեան կը յաւորդէ ուրիշ շարժում մը, ուր կարլի է նկատել ազդեցութիւնը իրապաշտութեան եւ մարքեան ընկերվարութեան: Այս շարժումը երեսան հանել վերջ քաղցրէնի դասակարգին տգեղութիւնները, խարազանեց ոմանց անտարբերութիւնը եւ ուրիշներու ամօթալի եսապաշտութիւնը: Գրադէա Սաստաք Հասան Մալիքօ կը պատկանի այս հոսանքին: Ան կրած է ազդեցութիւնը ե՛ւ Մոփասանի եւ Զեյնոլի: Իր գործերուն մէջէն կը թայթեն բմբոստացումի ճիշեր եւ յոյսի երգեր: Նոյն շունչը կարելի է գտնել բանաստեղծ Նազրուլի իսլամի տողերուն մէջ: Այս գրողները կարծես կ'ուզեն Ռապինտարանաթ Թակորի խաղաղասիրական զաղափարներուն հակառակ դիրք բռնել:

1943-ին լոյս կը տեսնէր Անթուրկիա մը, ուր տեղ գտած էին հօթը երիտասարդ բանաստեղծներու գործերը, որոնք բռնած էին տեսակ մը գերբնական ուղի: Ասոնք կը հռչակէին գրողին կատարեալ աշատութիւնը, կարենալ չափելու

Համար մարդ էակին մեծութիւնը եւ այդ մեծութեան սահմանները, տկարութիւնները եւ անձկութիւնները: Մարդ էակը Հասարակ է, զմուճ եւ սահման անմասն՝ իր ուրախութիւններով, երազներով, վիշտերով: Ինչպէս կ'երեւի, այս խումբը կը կրէ ուղղակի ազդեցութիւնը զօրապաշտութեան: Այս ճամբուն վրայ, Երիտասարդ ու տինամիջ Հասան Աքարին, Հեղինակ նորապէս գրուած, զընհարատ եւ թարգմանիչ Ֆլորայի եւ Սթանտայի գործերուն, պարտականութիւն ստանձնած է մտաւորական ընտրեալ ու դասակարգին խիղճը արթնցնել, որպէս յիշատակային ճակատագրական հարցերով Հետաքրքրուի:

Սակայն այս հիմնական շէջը կրնար վերջնական մղում մը տալ այս հսկայ ցամաքամասի գրականութեան, որովհետեւ Հնդկաստանը եղած է միշտ Հսկայապատմութեան եւ միջին փնտառութեան հարկերը: Այստեղ պէտք է վերհասնել նոր սուրբի մը, Երբ Օրոպինտայի ազդեցութիւնը: Իր գործերը, որոնցմէ պէտք է յիշենք Լոյս Երկայի վրայ, Աստուածային կեանքը, Երկայինը եւ մարդկայինը, գրեւ իր դասին հընդիկ մտածողութեան պաշտօնակէտին: Անոր Հսկայը եւ ազդեցութիւնը ետ չի մնար թակարի եւ Կանտիի ազդեցութեանէն: Իր ծայրը կը ստանայ աւելի ուժ ու տարածք եւ կը լսուի աշխարհի շորս ծագերուն: Իր Սալիթրի պոէման կը նկատուի վերջին քսան տարիներու հընդիկ գրականութեան զլուխ-գործոցը: Իր շուրջը հաւաքուած են փաղանգ մը երիտասարդ մտածողներու, որոնք կը ջանան Համադրել մարդկային մտքին մեծագոյն նուաճումները, միջինից մը եւ բանականութիւնը, զեղապաշտութիւնը եւ ընկերվարութիւնը:

Այս խմբակցութիւններէն դուրս կան անկախները, որոնք չեն ուզեր մասնակցել որեւէ Հրամայականի: Ասոնց մէջ է, որ կը գտնուին մեծագոյն գրողները: Ինչպէս Ֆիրաք բանաստեղծը, որ կը ջանայ հաշտեցնել հնդիկ բանաստեղծու- (Շար.)

թեան եւ մշակոյթին հողին իրամական գրականութեանէն ժառանգուած մեղքուն, ինչպէս դադլը: Իրմէ յիշենք Գնահատակներ եւ Ուրտու սիրային բանաստեղծութիւնը:

Անկախներէն մէկն է Նահել Ֆաիզ Ախմէճ Ֆաիզ, որ երկար ատեն մաս կազմած է յառաջիմականներու խումբին, եւ երկար տարիներ մնացած է բանտ: Ներկայիս ամէնէն ժողովրդական հեղինակն է: Գրական մեծ գէպը մը Համարուեցաւ իր Սիւֆիմ ձեռքը անուն Հատորը, որուն մէջ ընթերցողը կը զանէր եւ աւանդական փրոպոսի մը եւ անտիպ ու ճշգրիտ պատկերներ: - Մարդկային ետը, - կ'ըսէ Ֆաիզ, - այնքան մասն է, որ շատ շուտ կը հասնիմք անոր յատակը: Պէտք է որ մարդը իր մէջ ընդունի մաս մը տիեզերքէն:

Վերջերս, Հնդկական կառավարութիւնը, կանխելու Համար լեզուներու պատճառաւ յառաջ եկած ջրուումը, հիմնեց Սահիթիա Աքադեմի, որ կը հրատարակէ գործեր ազգային տարրերու լեզուներով: Անգլերէն լեզուն կը գործածուի միայն կենսագրութիւններու եւ մտտեագրութիւններու Համար:

Փաթիստանի մէջ, Գրողներու Միութիւնը, (Հիմնուած 1959-ին) իբր նպատակ ունի պաշտպանութիւնը հեղինակներու եւ գրականութեան: Այս միութիւնը, ուր բոլոր Հոսանքներուն պատկանող գրողները տեղ ունին, Հիմնեց իր անձնական Հրատարակչական տունը, շընորհի կառավարութեան օժանդակութեան, ջնջելու Համար միջնորդները եւ մակարոյնները, որոնք գրականութիւնը վերածած էին առեւտրական Հաստատութեան մը:

Ինչպէս կարելի է նկատել, եւ փաստը շատ մը հեղինակներու ըմբոս կեցւածքն է, Հնդկաստանի եւ Փաթիստանի գրականութիւնը կենդանի է: Վերջին քսան տարիները եղան փնտառութեան եւ փորձի տարիներ, բայց նոր ուղիներ բացին ներկայ եւ ապագայ երիտասարդ գրողներուն առջև:

ՆՈՒՊՈՒ ՉԱՐՆՈՒՏԵԱՆ

ԵՐ. ՏԱՆԱՊԵՏԵԱՆ

**ՕՍՄԱՆՅԻԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆԱՀԱՆՁԸ
ԵՒ
ԹՈՒՐԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ (՝)**

Բ.

Օսմ. Թուրքիան թուրանական դաւանանքով շահագրգռելու եւ մանաւանդ իրեն վտտահելու համար թուրանական քողաքական շարժումին ղեկավարութիւնը՝ ամէնէն առաջ անհրաժեշտ էր օսմանցի թուրքին ազգային դիտակցութիւնը բիւրեղացնել՝ խղելով զայն համիւլամական եւ համօսմանցիական պատրանքներէն եւ կապելով ցեղային ծագման սկզբնական մեկնակէտին: Մինչդեռ 80-ական թուականներուն սկիզբները թուրք մտաւորական դասէն սահմանափակ շրջանակ մը միայն հարեւանցի ծանօթութիւններ մը ունէր իր ժողովուրդի թուրանական ծագման մասին: 80-ական թուականներու վախճանին է որ թուրանական բրորակտնաւը կը սկսի թափանցել Թուրքիա՝ զանազան պաշտօններու տակ ծպտուած քանի մը թաթար զործիչներու մուտքով: Ու թէեւ համիւլամական կեղծիքով քողարկուած այս բըրորականտը ապարդիւն պիտի լանցնէր բոլորովին, թէեւ անոր քանի մը ցանցաւոր արձագանգները նկատելի պիտի ըլլային այդ շրջանի թուրք բանաստեղծութեան մէջ, սակայն համիւլամական ընթացիկ ծանօթ պայմաններուն տակ այդ անոր գաղափարներուն համար յաջողութեան լայն դեռութիւն մը սահմանուած չէր կրնար ըլլալ հարկաւ: Իսկ մենք տեսնաք նաեւ որ թուրանական դաւանանքը արտասահման ապաստանած թուրք մտաւորականութեան կողմէ եւս համակրութեամբ չէր ողջունուած: Երիտասարդ թուրքերը երկար ատեն արհամարհական վերաբերում ունէին թուրանականութեան դէմ՝ յամառօրէն կապուած ըլլալով օսմանցիական առաջադրութիւններուն: Այնպէս որ օսմ. սահմանադրութեան վաղորդայնին՝ թուրք մը

տաւորականութիւնը, ընդհանուր առմամբ, եթէ անծանօթ չէր իր թուրանական ծագումին, խանդավառ չէր, սակայն, այդ ծագումով, եւ քաղաքական հրապարակին տիրող իթթիհատական ղեկավարութիւնն ալ շահագրգռ չէր թուրանական դաւանանքի քաղաքական առաջադրութիւններով:

Այսուհանդերձ, ինչպէս ըսած ենք, բանթուրանական դաւանանքի խոսքան պետիւր շուտով պիտի հերկուէր եւ արդասարուէր շնորհիւ թաթար հաստարակական զործիչներու եռանդուն եւ հետեւողական զործունէութեան: Այս վերջիններէր, իրենց զործունէութեան սկիզբնական շրջանին թուրք մտաւորականութեան կը մօտենային խոչնդողաւորութեամբ մը, առանց այլամերժ կրեւնալու գաղափարական տարակարծութիւններու հանդէպ: Անոնք իրենց քաղաքայիտական վարուելակերպով, շատ շանցած, իբրեւ հարազատներ պիտի ընդունուէին իթթիհատական շրջանակէն ներս՝ գրաւելու համար կուսակցական ղեկավարութեան բարձրագոյն դիրքերը, մինչեւ անգամ իրենց ամէնէն յայտնի դէմքերը տեղաւորելով Մէրքիզի Ումոււմիին (ընդհանուր կեդրոն) մէջ: Այսպէսով, կուսակցական մարմիններէն ներս թէ դուրս, թուրք մտաւորականութեան հետ իրենց առօրեայ շփումով, անոնք ղեկավար տարրին ազգային-քաղաքական մտածողութիւնը կը ճկէին զէպի թուրանականութիւն:

Սեյանիկի մէջ հրատարակուող «Գէնճ Գալմէլը» (Երիտասարդներ գրիչներ) թերթէն վերջ, որ Զըլա Կէօք Ալիի խմբազարական ղեկավարութեամբ դարձած էր Թուրքիայի սիստեմաթիք քարոզչութեան ծառայող օրկան մը, Եռուուֆ Աք-

շուրա, դեռ 1911-ին, ժամանակը հասած կը նկատէր հիմնելու իր բանթուրանական «Թիւրք Եւրոպոս» (Թուրքի տուն) պարբերաթիւրքը եւ համանուն ակումբը: Ասոնք բոլորը Թուրանականութեան գրաւոր թէ բանաւոր բորբականտին հետեւողականորէն ծառայող օրկաններ էին: Թիւրք Եւրոպոս-ի շուրջ խմբուեցան ոչ միայն ամէնէն յայտնի թաթար բանթուրանիստները, այլ նաեւ ոչ-բանթուրանիսա Թուրք գրողներ, որոնք, ինչպէս կ'երևի, առաջուան նման չէին խրոչեր նոր քարոզչներու դադափորներէն:

Օսմ. Թուրքին ազգային-քաղաքական ժողովուրդական նոր ծայր տուող այս թեքումը ամէն կերպով առաջ կը տարուէր Թիւրքիստաներուն կողմէ: Ասոնք նոր սերունդը կը խանդավառէին իր Թուրանցի նախահայրերուն ժեծադործութիւններով, անոր ազգային դիտակցութեան հպարտութիւն կը ներշնչէին ցեղին «հազարադիւտ առաջինութիւնները» պանծացնելով: Եւ ինչպէս իր բան չկայ արտադր: Կը կարծէ՞ք որ Թուրք ու թաթար ժողովուրդները կ'անդիտանային Թուրանական ցեղերուն պատմութիւնն ու նկարագիրը: Սակայն ազգային դիտակցութիւնը, կանգուն մընայու համար, պատմական եւ բարոյական սեփականութիւններու կը կարօտի: Իսկ եթէ Թուրք ցեղը գուրկ էր պահանջուած պայմաններէն, հարկ էր պատմութիւնը խարդախել, դէմքերն ու եղելութիւնները այլափոխել շինծու յինարան ստեղծելու համար անոր այդ զիտակցութեան: Ահա թէ ի'նչպէս, մէկ օրէն միւսը, պատմութեան մէջ իրենց եղեւնազործութիւններով հռչակուած Թուրանցի հրոսակապետները, Թիւրքիստաներու տեսութեամբ, դարձան Ալեքսանդրներու զասակից դադափարապաշտ զիւցաններ, քաղաքակրթական աշխարհակալութեան յառաջապահ առաջնաւորներ, որոնք մինչ այդ օտար պատմաբաններու զրպարտութեան ցոհերը եղած պիտի ըլլային հարկաւ: Պատմագիտական այս զեղծարարութիւնէն նմայլ մը

տուած ըլլալու համար յիշենք քանի մը տողեր Թիւրքիզմի եւ բանթուրքիզմի գլխաւոր տեսարան Ջըյա Կէօք Ալփի «Թուրան» զերթուածէն: Այս թրջացած զրտածինը իր զազնիւ եւ ընտրեալ ազգին (այսինքն՝ Թուրքին) շունեցած արծանաւորութիւնը բնականաբար դտած չըլլալով պատմութեան էջերուն մէջ՝ տներ, այդ զազնիւ եւ ընտրեալ ազգին, փառքը իր սրտի բարախման եւ երակի գարկերուն մէջ կը կարգայ եղեր:

«Ո՛չ գիրքերու էջերում մէջ
Ուր իմ ցեղս յագթութիւնով պսակոյ՝
Արքիւայի եւ ձեռգիրի դէմքերը
Կը յայտնուին վատ-համբաւուած ու
դրուած»

Նրջանակի մէջ փոշառ
Ջրպարտութեա՛ն,
Մթնոլորտի մը մէջ հիմ.
Մինչ անոնց փառքը
Կեսարիւն, Ալեքսանդրիմ է հանգոյն»:
Թրք.՝ Ջարեւանդ

Այսպէսով՝ զրպարտութեան փոշոտ շրջանակէն ոսկեղօծ զերթուածներու կամ պատմածքի ու վէպի մէջ կ'անցնէին եւ կամ շուրջը դասախօսութեան եւ ուսումնասիրական զբաղանդութեան նիւթ կը դառնային Թուրանցիներուն բոլոր «փառապանծ» նախահայրերը, այսինքն՝ պատմութեան միջազգային ատեանին անվերաջնկի վճիռովը զատուարտուած ցեղասպան եւ աշխարհակործան եղեւնազորներու ամբողջ վոհմակը: Արդիւս, Տուրքուլ, Ձինկիլ, Թիմուրիէնկ...: Անատուրի Թուրք պետութեան հիմնադիր Օսման եւս այս շքախումբին աշխարհակալական գործը վերսկսող Ալթայեան Թուրք մըն էր: Հետեւաբար անտեղի պիտի ըլլար Թուրք ժողովուրդն ու պետութիւնը իր անունով կոչել եւ Թուրքին պատմութիւնը խզել իր երէց նախահայրերուն «պատարեր» մեծագործութիւններէն: Այսպէսով՝ այս վերջիններուն ջով կ'անշքանային Օսման եւ իր գործը շարունակող աշխարհակալ սուլթանները, որոնք մինչ այդ փառաբանուած էին օսմանեան

պատմութեան մէջ. Պայազիտներն ու Ֆաթիհները, Եսփուզներն ու Գանունները :

Բայց զուեշար Հոս շէր սահմանափակուեր: Ըսինք արդէն որ պանծացումի աւարկայ էին նաեւ զաղիւ եւ ընտրեալք թուրք ազգին կամ բանաստեղծ Մէհմէտ Էմինի որակումով: Քրոնոր ազգերէն լաւագոյննքն ցեղային առանձնաշտովութիւնները, որոնք շրջուած երեսներով կը ներկայացուէին Հարկաւ: Ինչ որ ուրիշներու աչքով ժխտական զիծ է, նուաստացուցիչ ունակութիւն՝ թուրք նկարագրին վրայ, թիւրքիտաներուն համար ցեղային առանձնաշտուկ արժանիք է: Թուրքին տրամաբանելու տկարութիւնը ծանրախոհութիւն է (չէ՞ որ լուրջ ու խորունկ մտածումները հազմեպով չեն արտայայտուիր): Վայրագութիւնը՝ քաջութիւն: Նախնական ցեղերուն յատուկ հնազանդութիւնը՝ քաղաքացիական կարգապահութիւն. առեւտրական անընդունակութիւնը ուղղամտութեան արդիւնք է (որովհետեւ զուեւորը մարդը խարդախութեան կը մղէ): Իսկ արտադրական աշխատանքէ խուսափումը՝ նիւթական արժէքներու հանդէպ արհամարհանքի, զաղափարապաշտ խառնուածքի արտայայտութիւն: (Ձեն ըսեր, սակայն, թէ ուրիշին վաստակը յափշտակելը այս առաքինութիւններէն ո՛ր մէկուն կալուածին մէջ կ'իյնայ):

Ճիշդ է որ թուրք ցեղին արժանիքները հռչակող գովեստներուն անհակադէտ շտապութիւնը մասնաւորաբար յատուկ էր թիւրքիտաներուն, որոնք հետամուտ էին օսմանեան թրքութիւնը զաղափարական գեանի վրայ պատրաստելու թուրանական քաղաքական առաջադրութիւններուն հետապնդման: Բայց բանթուրանիստ Աղայէֆներէն աւելի լրջութիւն չունին համխալածական ձէլայ Նուրիները, երբ խօսքը օսմ. թուրքի մասին է: Ճէլայ Նուրի, օսմ. թրքութիւնը առանձնացնելով թուրանական ցեղերու ընտանիքին մէջ, իբրեւ իր առանձին պատմական հրովոյթը կազմաւորուած

ժողովուրդ, զայն կը նկատէ ընտրեալ ազգ մը (միլլէթի միւթթազէ), որ հպատակել չի գիտեր, որովհետեւ իր խառնուածքովն իսկ կոչուած է աշխարհապաշտ, տիրապետելու: «Այս պատճառով անիկա անփութութեամբ, նոյնիսկ արհամարհանքով կը նայի տնտեսական մարզին վրայ: Հոռոմայեցի պատրիկիանը ինչ որ է, թուրքը այն է: Թուրքը ազնուատուածի եւ ոսմիկի տարբերութիւնը չի ճանչնար, որովհետեւ ի բնէ ազնուական է» - Թարիխի Իսթիզալ, Ա. դուրս:

Այս նոյն գլուխին տակ, որ «Թուրքերը յետադէմ են» վերնադիրը ունի, հեղինակը Պալքանեան պատերազմին յաջորդող օրերու հոգեբանական կացութեան մէջ, կը փորձէ պատասխանել խորագրուած հարցումին՝ Թուրքիոյ ապագային առնչութեամբ: Ըստ իր սորված տեսութեան իրենց զարգացման կատարելութեան հասած ազգերն են, որ ֆիզիքական, իմացական եւ բարոյական ուժերու իրենց զբաժանումովը սպասած ըլլալով, կը սկսին ընկերելի, յետադիմել: Իսկ թուրքերը, իրենց իմացական եւ ընկերային կեանքի նտիտական աստիճանով, յետամնաց ժողովուրդ մըն են, որ յետադէմ եղած չեն կրնար ըլլալ, քանի որ նոր պիտի սկսի իրենց յառաջդիմութիւնը: «... Մեր իմացական զբաժանումովը չենք սպասած. տակաւին նախանիւթի մը վիճակը ունինք: ճարտար արուեստագործ մը այս նախանիւթին կրնայ իր ուզած ձեւը տալ: Ուղեղնիս պարսպ է (տիմաղըմըզ պօշ տըր, մենք այսպիսիներուն պօշպաֆա կամ պէյնիպօշ կ'ըսենք. - Ե. Տ.), հոն ամէն զաղափար կրնանք ներմուծել (եւ թուրք ժողովուրդը կոչուած երամակն ալ մեքենական ընկալութեամբ կ'ընդունի անշուշտ. - Ե. Տ.):

Ձենք շահագործեր ստիեստական սա բարբառանքներով մեզի տրուած գաւազտարանելու առիթը: Լրջութեամբ կը հարցնենք ձէլայ Նուրիներուն թէ՛ ի՞նչ տրամաբանութեամբ կամ ի՞նչ երաշխաւորութեամբ կ'ենթադրեն որ 615 տարի (նկատի ունենալով զրքին հրատարա-

կուսեան թուականը)։ Իբրև տիրող տարր, քաղաքակիրթ երկիրներու կողքին իր պետական կեանքովը ասպրած ժողովուրդի մը պարագայ մնացած գլուխը ՅՆՏ տարի ետք լեցուելու պիտի սկսի։

Մենք դիտմամբ խօսքը տուինք համալրման (յետոյ արդէն դաւանափոխ) ձէլալ Նուրիին, որ թուրք մտաւորականութեան ամէնէն աւելի մշակածնեքէն եւ լուրջերէն մէկը կը նկատուի եւ ընկերային երեւոյթներուն միշտ կը մտենայ զրքերէն զոչ սորվուած տեսութիւններով։ Անով ցոյց տալ ուղեցինք դադարական որեւէ հոսանքի պատկանող թուրք մտաւորականին զընահատութեան լրջութիւնը իր ցեղին արժանաւորութեան վերաբերմամբ (Թիւճճարզատէ Իպրահիմ Հիլմէնէրը Դիսյինէսեան լազտերով փնտռուելիք բացառութիւններ են)։

Բայց, պիտի ըսէք, չի՞ն ամչնար այս մարդիկը պատմութեան վաւերական ճշմարտութիւններն իսկ այլքան անպատկառութեամբ լիկելու։ Բարակը մի փնտռէք։ Ի՞նչ ընէին հապա հոր սերունդին ազգային ոգին մշակելու համար։ Ի՞նչ պիտի ընէին, մանաւանդ, թաւրտանիստ դեկավարները թուրքին միջնեկային գիտակցութիւնը զօրացնելու եւ թուրք ցեղերու ազգային-քաղաքական միութիւնը դարբնելու համար։ Թուրտանական արշաւանքի նամբներուն վրայ փռուած սպանդի եւ աւերի համայնապատկերը ցուցադրէին հարագտին ու օտարին աչքին, քաղաքակրթական վաստակներու մոխրացմամբ հոչակէին, մշակութային արժէքներու հրկիզմամբ պանծացնէին։ Անհրաժեշտ էր նենգել պատմութիւնը՝ եւ յենտրան յարդարել նոր թուրքին ազգային դիտակցութեանը։

Բայց ասոր համար լուր րոմանթիք ներշնչումները բաւական չէին Հարկաւ։ Օսմ. թուրքին ազգային-քաղաքական դաւանանքը համալրման եւ համօմանցիական դադարարներու ճնշումէն ազտագրելու եւ վերջնականապէս թուրտանական ենթահողին վրայ հաստատուելու համար անհրաժեշտ էր երկրի ներքին

զին կեանքին առարկայական պայմանները յեղաշրջել։ Եւ ամէնէն առաջ հարկ էր օսմանեան պետութեան ազգագրական դիմագիծը հարստօրոնք տնոր բնակչութիւնը վերածելով միտաւոր թրքութեան։ Ըստ թիւրքիտներուն՝ ներքին մտահոգութիւններէ զերծ, ինք իրմով կենսունակ թուրքիա մըն էր որ կրնար ապահով յենտրանը դառնալ բանթուրանիզմի քաղաքական իտէալին։ Հետեւաբար պէտք էր միանգամընդմիշտ հրատարիլ օսմանցիութիւն խաղալէ։ Եւ ինչի՞ կը ծառայէր իթիհատի այդ խաղարկութիւնը։ Երկրին ոչ-թուրք տարրերը, զրիստոնեայ թէ միւսլիմ, երբեք պիտի չյօժարէին թրքական կաղապարով կաղմուելիք օսմանցիական միութեան մէջ ձուլուելու։ Անոնք իրենց հասարակական կեանքը կը կաղմակերպէին իրենց ազգային ձգտումներուն համաձայն եւ անհաղորդ կը մնային համապետական առաջադրութիւններուն։ Աւելին, անոնք իրենց անջատական տրամագրութիւններով դէմ էին օսմ. պետութեան քաղաքական յաջողութիւններուն։ Պէտք էր, ուրեմն, այդ տարբերը բռնի ձուլուելին կամ... կորսուելին։

Ջրյա Կէօք Ալփի Հեղինակութեամբ 1923-ին հրատարակուած «Թիւրքեիլիւլէին հասարակը» գրքէն այս գործնական հարցին վերաբերող տեսակէտը պարզելով՝ Ջարեւանդ կու տայ հետեւեալ եզրակացութիւնը. «Կատարութիւնը պէտք է թրքացնէ երկիրը։ Ան պէտք է վճարապէս փոխէ իր քաղաքականութիւնը. հրատարի օսմանցիութիւն խաղալէ. դադարի չփոթելի իւրամը թուրքին հետ։ Ան պէտք է կռթնի բացտուպէս թուրք տարրին վրայ եւ բացառապէս ուժ տայ անոր։ Միւս տարբերը դոյուլիւն չունին իրրեւ ուրոյն ազգեր, անոնք իրաւունքներ չունին։ Պէտք է թրքանան կամ կորսուին։ Օսմանեան ազգը չկայ, մէկ ազգ կայ, մէկ ազգ պիտի ըլլայ ասկէ վերջ թուրքիայի մէջ եւ այն թուրքն է»։

Եւ անաւասիկ թիւրքեիլութեան անմիջական առաջադրութիւնը։

1923-ին համար այս տեսութիւնը

քիչ մը ժամանակվրէջ թուի թերեւ, քանի որ Թուրքիոյ բնակչութիւնը մեծ ժառանգ գտուած էր արդէն՝ արաբական շրջաններուն անջատումովը եւ թրքաւայ դանդուածին ամբողջական հաշուեյարդարովը (անկէ առին հաշուի առնուելիքը քրտական հարցը պիտի ըլլար միայն)։ Սակայն հարկ է նկատի ունենալ որ 1923-ին ցեղասպանութիւնը հրապարակային դաւանանքի վերածող Ջըյանեբու տեսակէտը, Թուրքիան թրքացնելու ուժային առաջադրութիւնը, նախապատերազմեան Թուրքիոյ ներքին քաղաքականութիւնը վարող զսպանող դարձած էր արդէն։ Բայց կայ աւելին։ Թիւրքիոյ տեսարանին առաջադրութիւնը նկատի չունէր միայն օրուան Թուրքիան, անկա հարկաւ ի պորտ պիտի ըլլար նաեւ վաղուան Օղուզիտանի տնտեսական թուրանիստի վերաբերմամբ, ուր իրբեւ խափանարար տարր հայ ժողովուրդը մտած պիտի ըլլար դարձեալ իր արեւելեան հատուածով։

Յամենայնդէպ, ստճմանադրութեան յաջորդող քանի մը տարիներէ ետք, Թուրքիան թրքացնելու հարցին վերաբերմամբ հիմնական տարակարծութիւն մը չէր մնացած թիւրքիտանբուն եւ իթթիհատականներուն միջեւ։ Այս վերջինները 1911-ի իրենց պերագոյն ժողովին մէկ դադանի սրոշումովը արգէն պաշտօնականացուցած էին ոչ-թուրք տարբեր ձուլելու սկզբունքը՝ «մերժելով այլացեղ ազգութիւններուն իրենք իրենց մէջ կազմակերպուելու իրուունքը»։ Բայց, պիտի հարցնէք, եթէ այդ ազգութիւններուն մէջ գտնուէին այնպիսիները, որոնք ընդդիմանային ձուլումի միջոցներուն։ - Այդպիսիները «պէտք է կորսուէին» ըստ թիւրքիզմի տեսարանին։ Իսկ եթէ իթթիհատի դեկավարները, իրբեւ պիտական պատասխանատու վարիչներ, քաղաքագիտական զգուշաւորութեամբ մը տակաւին լուռ կը մնային երկիրը օսմանգիացնելու կամ, ինչ որ նոյնն է, թրքացնելու եղանակներուն վերաբերմամբ, շատ չանցած պիտի ցայց տային, սակայն, որ այդպի-

սի «անուղղայ» ժողովուրդները կորուստի մատնելու ամէնէն կորուկ միջոցներուն առջեւ անհրկիլ չեն դիտեր։

Սակայն թիւրքիտա քարոզիչներու գաղափարական գործունէութիւնը հոս կանգ չէր առնէր։ Ինքիւր գլխուն մնացած թրքութիւն մը թուրանական դատին հասար շահուած ուժ մը չէր տակաւին։ Հարկ էր անոր ընկերային կեանքը առողջացնել՝ գտելով, մաքրագործելով դայն միւշ այդ կրած խորթ ազդեցութիւններէն։ Ճիշդ է որ օսմանեան թրքութիւնը իր նոր միջավայրին մէջ ընդհանրապէս տեղաբայ ըրած էր քաղաքակրթական պետի վրայ, բայց հարկաւ անոր տարբեր խաւերուն ընկերային կեանքի երեսները նոյնութեամբ չէին պահած իրենց սկզբնական նկարագիրը։ Նախ՝ իսլամական կրօնը իր ծաւալուն շրջմը զրած էր բովանդակ թուրք ժողովուրդի կեանքին վրայ։ Յետոյ՝ մասնաւորաբար դեկավար դատին եւ քաղաքացի զրոց-բրոց խաւին հասարակական կեանքի կալուածները շատ բան կորսնցուցած էին իրենց ցեղային հարազատութենէն, - Լեզուն կերպարանափոխ եղած էր, մշակոյթը (գրականութիւն, երգ) կապ չէր պահեր զանդուածի կեանքին հետ, բարքերն ու կենցաղը հեռացած էին սոսմիկ աւանդութիւններէն։ Արդ՝ թիւրքիտաները կ'ուղէին օսմ. թրքութեան ընկերային կեանքին վերադարձնել իր թուրանեան գիմազիմը։

Քի թուրքիւն կրօնը ստրկական փոխառութիւնն էր արաբական իսլամին, որ, ինչպէս ըսած ենք արդէն, իր համապարփակ աշխարհայեցողութեամբ ոչ միայն ժողովուրդին զուտ կրօնական ըմբռնումները կը թելադրէր, այլ միտնազամայն գաղափարական զսպանակն էր ընկերային կեանքի բոլոր արտայայտութիւններուն։ Այնպէս որ, պայքարի բոլոր պետիւններուն վրայ, թիւրքիտաները անխուսափելիօրէն պիտի բախէին իսլամական մտայնութեան հակազդեցութիւններուն՝ իրենց ոչ մ գտնելով տղէտ ու մուլեանդ սոֆթաներու կազմութիւնը, որ իր գոյութեան իրաւունքը ապա-

Հովելու համար իսկ կրօնական հաւատալիքներուն պաշտպանի դերը կ'ըստանանէր: Իսկ այդ դասակարգը իր ասանձին վարչական կազմակերպութեամբ, իր զանազան օրկաններով եւ մէտրէաներու ցանցով, ինչպէս նաեւ դարաւոր ականդութեան ուժով, դերաւ խորտակելի բանակ մը չէր: Թիւրքիստանը չէին կրնար մէկ անդամէն ջնջել արաբական իսլամին եւ անոր պաշտպան խալիֆաներուն դարերով հերկած ակօսները: Ահա թէ ինչու, իրենց առաջնորդութեան վրայ վճռական մնալով հանդերձ, պարտաւոր էին զգուշաւորութեամբ շարժել պաշտօրի այս պետին վրայ: Այս յանդուրդն նորեկները հակառակ չէին հարկաւ իսլամական կրօնին եւ մանաւանդ զոչ չէին իրք այդպիսին երեւել: Անոնք թրքական իսլամը բարեկարգելու պահանջէն միայն կը ճառէին: Արարն ու թուրքը կ'ընէին տարբեր միջավայրի եւ ցեղի ժողովուրդներ են, կարելի չէ արարին կրօնը նոյնութեամբ պարտադրել թուրքին մտայնութեանը եւ ընկերային կեանքին: Ասկէ մեկնելով՝ անոնք կը ձեռնարկէին Քուրանի թուրքերէն թարգմանութեան, կը պահանջէին խալիֆայի քարոզներն ու աղօթքները իստարել թուրքերէն լեզուով, չէնքերու ձեւակերպէն ու պատերէն վերցնել Քուրանէն քաղուած արարերէն ասոյթները եւն. եւն. եւ պէտք է ըսել որ իրենց ճարտար գործելակերպով թիւրքիստանը պիտի յաջողէին հետզհետէ ազատագրել թուրքին կրօնական կեանքը արաբական իսլամին տիրապետութենէն՝ մինչեւ անգամ իրենց դատին ծառայեցնելով - սիրաշահելով կամ կաշտեւելով - կրօնական հաստատութիւններէն եւ կրօնաւորներէն շատերը: Իսկ պարտաւոր կեդրոնական ճակատին վրայ շահուած այս յաջողութիւնը իր նպատակաւոր հետեւանքները պիտի ունենար նաեւ այլ մարդերու մէջ:

Տ. Օսմաներէն կոչուած գրական թուրքերէնը, որ միանգամայն կառավարական գործառնութիւններու պաշտօնական լեզուն էր եւ քաղաքացի գրոց-

բոց կ'ֆէնտիներուն խօսակցական լեզուն, արարերէն եւ պարսկերէն տարբերու եւ քերականական ձեւերու խճողումին տակ բռնապարտուած, արուեստակերպ լեզու մըն էր՝ գրեթէ անճանաչելի ըլլալու չափ հեռացած՝ իր թուրանական կերպարանքէն: Իր այս լեզուով՝ օսմանցի մտաւորականութիւնը, մանաւանդ գրող դասը հոգեպէս խղուած կը մնար ժողովրդական զանգուածէն, որ բոլորովին անգրագէտ էր ընդհանրապէս: Այս այլաբանութիւնը լեզուն զանազան, ժողովրդականացնելու առաջին փորձերը, որ տեղի ունեցան դ.և. նախորդ դարու 60-ական թուականներէն, նկատելի արդիւնքի մը չկրցան յանգիլ: Եթէ սահմանափակ թուով արարերէն ու պարսկերէն բառեր դուրս հանուեցան թուրքերէնէն, ասոնց փոխարէն աւելի լայն շարժում մուտք գտան Փրանսերէնէն առնուած եզրեր եւ նոյնիսկ ըսելու ձեւեր: 90-ական թուականներէն, թուրքին ցեղային պիտակցութեան զարթօնքին առաջին նշաններուն հետ, լեզուի վերանորոգման փորձերը նոր թափ ստացան: Այս շրջանի շարժումին ամէնէն աւելի ստատրոգ գէմքն է բանաստեղծ Մէհմէտ Էմին, որ իր քերթուածները կը գրէր շատ աւելի պարզ ու հասկնալի թուրքերէնով: Սակայն այս փորձերուն արդիւնքները եւս ընդհանրապէս կոչուած չէին մինչեւ համիտեան բէթիմին վախճանը եւ, հետեւաբար, օսմանադրութեան նախօրեակին օսմաներէնը թրքացած ըլլալէ հետո էր տակաւին:

Սահմանադրութենէն վերջ է որ թիւրքիստական շարժումով լեզուի վերանորոգման առաջադրութիւնը պիտի ընդհանրանար եւ օսմանեան թուրքերէնը հետզհետէ վերադառնար իր թուրանական պարզութեան: Թիւրքիստանը լոկ մշակութային նկատումներով չէ որ կը մօտենային լեզուի պարզացման հարցին: Անոնք շահալրդուած էին մանաւանդ այդ հարցին քաղաքական երեսուցի: Բանթուրանիստները Օսմ. Թուրքիոյ վստահելով իրենց յետագայ քաղաքական շարժումին ղեկավարութիւնը՝ կը

սպասելին հարկաւ որ անիկա ըլլար բոլոր թուրանական ժողովուրդները իր շուրջը համախմբող կեդրոնամիջ ուժը: Իսկ ասոր համար անհրաժեշտ բոլորականորին ամէնէն արդիւնաւոր միջոցը եւ յառաջիկային կազմուելիք թուրանական միութեան ամէնէն զորաւոր շաղախը կրնար ըլլալ բոլոր թուրանցիներուն հասկնալի թուրքերէն մը, համաթուրանական թուրքերէն մը, որով կարելի ըլլար զազափարական հազարակցութեան մէջ պահել զանոնք: Մինչդեռ օրուան օսմաներէնը անհասկնալի էր ոչ միայն խիվացիներն ու պոխարացիներն, այլ նոյնիսկ Անատոլոսի առմիկ թրքութեան, որ օսմանեան ժողովուրդին օտուարազոյն հատուածը կը կազմէր (*): Ահա թէ ինչո՞ւ թիւրքերեսները իրենց ելեցի-լիսա-

Յակամ շորժումով տենդադին գործունէութեան մը պիտի նուիրուէին օսմաներէնը իր թուրանական պարզութեան վերադարձնելու համար: Հետզհետէ անկէ կ'արտաքան արարերէն եւ պարսկերէն բառերը՝ զանոնք փոխարինելով Անատոլոսի թուրքերէնէն կամ թուրանական ս'բեւէ բարբառէ առնուած տարբերով: Նոյնպէս թրքականին կը վերածէին թրքականական ձևերը, շարահասական ու համաձայնական դրութիւնները, եւ այլն: Եւ եթէ կարելի չէր դարաւոր մտայնութեան եւ սովորութի մը կնիքը կրող լեզուի մը վրայ շուտով բացարձակ դրումի մը հասնիլ, բայց եւ այնպէս լեզուական բարենորոգութեան այս շարժումը շատ աւելի արդիւնքներ տալու կոչուած պիտի ըլլար քիչ մը աւելի ուշ, թեմալական իշխանութեան շրջանին, պետութեան կողմէ հետապնդուած միջոցներով: Յամենայնդէպս այսօրուան թուրքերէնը քողարկուած լեզու մը չէ այնչափ ցեղակից ժողովուրդներուն համար՝ շնորհիւ մասուանող, անոնց կրթական դրութեան մէջ բանթուրանիտ գործակալներու կողմէ կիրարկուած միջոցներուն:

Քի թուրք դրականութիւնը երկար ատեն տիրապետութեան տակ էր արարական իսլամին կրօնական ներշնչումներուն եւ ընկերային-բարոյական ըմբռնումներուն: Իսկ զնկապիտական տեսակէտով կը հպատակէր պարսիկ արւեստին: Թանգիմաթեան սերունդի գլխորդները, որ լեզուականին հետ նաեւ դրական բարենորոգման շարժումի մը ձեռնարկած էին, եթէ չէին կրցած այս կայրուածին վրայ հաւ վճարական արդիւնքներու հասնիլ, կրցած էին սակայն անոր տալ եւրոպական նաշակի մը շղատը խորքի թէ ձեւի տեսակէտով: Արդ՝ թիւրքերեսները բուռն պայքար կը մղէին այս բոլոր խորթ ազդեցութիւններուն դէմ: Անոնք իբրև առաջադրութիւն ունէին «զէպի ժողովուրդ» (խալզա տողրու) նշանարանը՝ մշակութային գետնի վրայ ընդհանրապէս, զբաղանդութեան մէջ մասնաւորապէս: Գրականութիւնը

* Գազափար մը տուած ըլլալու համար Թաթարստանումարական (900-ական թուականներու) օսմաներէնի մասին՝ կու տանք հետևած մը ժամանակին մեր գործածած «Միւսքիլիապարիլու-նէրիտ» դասագրքէն: Ամբողջ հատուածը պարզապէս անզնկատուութիւնն է Սուլթան Համիտի պալատէն մզկիթ եւ մզկիթէն պալատ եքսուդարմին Ուրբաթի ազօրէն ասիքով:

«Բեկմագեփգայի իմվածըլիի էմիրիլմիւս-միմին, գուրրէթիլու ալունը իպթիեանը ամսէի միւվանհիտին, վելիմիմէթի պիմիմէթիմիզ (միմչիւ հաս, քարքերէն ըլլալով, ստացական միզ կցարպը միայն կայ) փատիյանըմըլու սուլթան զազիի պիմիտամի՝ Ապտիլու Համիտ խանըսամի հազրէթիէթ տիւնթի կրև պէրսուէնիւվտըրը ըզզուիւլու օլուզլարը հայտէ միւտսէրաթը վելիմիլ մուհասսէնաթը քանտարիէրիւտէն զհամիտիտ» համիի նարսաքընու ազիմէթ էլէ ֆերիզա ի գուտիթթ րէտիֆէ ի տայաթը համայը էսու վէ պէ սուրթչէտէ իէթիտապը բիզաի ազսուի խիտա էլլէտիթաէն սօնթա ինէ կերտուսէի գիյնէթիմուսէի հիւմայուսէրիէն շէրիֆուլթ օլարաք սէրայը մուալլաի միւլիւսեմ-մէրէրիէն օալէնուսաթը շէվէթ ու իզգայ օլմըլարաթը»:

Հարկ կա՞յ հաստատելու: Բէ այս թուրքերէնը թուրանական ժողովուրդներուն հասարակաց լեզուն չէր կրթար ըլլալ:

իր նիւթը պիտի վերցնէր ժողովուրդի կեանքէն եւ զրական երկը ժողովուրդին պիտի մատուցուէր անոր հասկնալի լեզուով ու տարազով: Այդ ժողովուրդը Անատոլի եւ Թիւրքիստաններու թրքութիւնն էր: Պէտք էր անոր պատմական անցեալի յիշատակներէն ներշնչուիլ, անոր ընկերային կեանքի երեսներովը հետաքրքրուիլ: Այսինքն՝ թուրք զրականութիւնը թուրք ժողովուրդի հոգիին հարազատ արտայայտութիւնը ըլլար եւ ասով իսկ ըլլար նաեւ մատչելի՝ բոլոր ցեղակից ժողովուրդներուն:

Թիւրքիստանը պիտի չուզէին հարկաւ իրենց ժողովուրդը իր աղքատ մշակութիւնով խզուած պահել քաղաքակիրթ աշխարհէն: Աէին ուղեր անհազոր դժուար Արեւմուտքի յառաջդիմութիւններուն միայն թէ կատարուած մշակութային փոխառութիւնները չվտանգէին թուրքին ցեղային առանձնայատկութիւնները: Անոնք Եւրոպայի ընկերային դիտութիւններէն ընտրողարար կը քաղէին իրենց գաղափարներն ու ծանօթութիւնները՝ զանոնք պատշաճեցնելով իրենց ցեղապաշտական առաջադրութիւններուն: Իրենց ժողովուրդավարական գաղափարները կը սահմանափակուէին միայն թուրքին ընկերային կեանքին վրայ: Գաղաքացիներու եւ ազգերու իրաւահաստատութեան սկզբունքը տեղ չունէր իրենց մտայնութեան եւ հասարակական գործունէութեան մէջ: Եւրոպացի պատմաբաններէն իրենց համար վարկ ունէին միայն այն մէկ-երկու հեղինակները, որոնց վրիպած գատումները նպաստաւոր էին թուրքին, կամ որոնց երկերուն մէջ զրական հաստատումներ կը գտնէին մոնկոլ աշխարհակալներու եւ անոնց տիրապետութեան մասին: Բայց այս վերապահումներէն զուրս՝ թիւրքիստանները համակիր էին եւրոպական քաղաքակրթութեան եւ կ'ուզէին ամէն կերպով օգտուիլ անկէ: Անոնց քաղաքական օրինաբաւիւռը վճռականօրէն դէպի Արեւելք ուղղուած էր, իսկ քաղաքակրթականը դէպի Արեւմուտք: Վնաս

տողրու՝ նշանարանին քով անոնք ունէին նաեւ «զարպա տողրու» (զէպի Արեւմուտք) նշանարանը: Եւ իրենց այս առաջադրութիւններով՝ յիշեալ զոյգ նշանարանները կը հռչակէին միացեալ տարազով մը, Ավրոփա գափալը - քիւրք գալալը (Եւրոպական գլուխով - թուրք սիրտով):

Կասկած չունինք որ էին արդէն եւ միշտ ալ պիտի մնան քիւրք գալալը. բայց յետադային փոխ առնուած եւրոպական գլխարկին հետ նաեւ եւրոպական գլուխը իւրացուցած ըլլալու թրքական յատկութիւնը գոմիւտի մէջ միայն ընդունելի է:

Ճ թուրքիստանը հետամուտ էին նաեւ թրքական կենցաղին երեսները վերանորոգելու՝ հին բարքերու եւ աւանդութիւններու, ընդհանրապէս թրքական Ֆուլթրին վերահաստատումին ու ընդհանրացումովը: Կը գատապարտէին քաղքենի կֆէնտիներու ալյասերած կենցաղը եւ մասնաւոր վարկ կու տային տոճիկ երդին ու խաղին, հեքիմին ու զոռյցին, մինչեւ իսկ ուտելիք-իմեքիքի տեսակներուն: Թէեւ յառաջիկային քեմալական շրջանի իրազորմուններու ընթացքին, բաւական բան պիտի փոխուէր սկզբնական շրջանի ցեղապաշտական այս ծայրայեղութիւններէն, բայց ասով բան չէր փոխուէր թուրքական առաջադրութիւններու հուրանէն:

Ճ

Թիւրքիստանը սկզբնական շրջանի քարոզչական գործունէութեան ամփոփ մէկ պատկերն է որ տունք վերը՝ իր հիմնական դժեհով: Այդ գործունէութիւնը նոր թափով պիտի ընդհանրանայ Պալքանեան պատերազմով ստեղծուած կայսութեամբ, որ, ինչպէս պիտի տեսնենք, պատմական անկիւնադարձ մը կը շինէ թուրք զիկավարութեան ազգային-քաղաքական մտածողութեան հոլովոյթին վրայ:

Ե. Տ.

Բագինի Զրոյները

Ա.

ԻՆՁՈՒ ՄԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՁԻ ՀԱՄՆԻՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻՆ

Զրուցաբեր՝ Ջ. ՈՐԲՈՒՆԻ

«Բագին» 1906-07 տարեշրջանի զրոյներու շարքին առաջինը տեղի ունեցաւ Հոկտեմբեր 19-ին: Զրուցաբերն էր զրազէտ Զարեհ Որբունի, որ սրպէս Ն.Բ. ընտրած էր վերի խորագիրը:

«Բագին»-ի կողմէ ունկնդիրներուն ներկայացնելէ հաջ զրազէտ հիւրը, խօսքը արուեստաւանդը:—

— Կարելի չէ ժողովուրդ մը ըմբռնել, — սկսաւ Որբունի, — առանց անոր հոգեկան արտայայտութիւններուն: Հոգիի արտայայտութիւնը արուեստն է:

Մենք բացակայ ենք միջազգային գրականութիւնէն, հակառակ մեր ասանդուութեանց, հարուստ անցեալին, պատմութեան ընթացքին ցուցարարած մեր կարողութիւններուն: Պէտք է փնտռենք ասոր պատճառները:

Պատճառներին առաջինը ասին է, որ մենք չկազմակերպուած օրկանիզմ մըն ենք: Ժողովուրդ ենք, ազգ չն'ենք: Ու ժողովուրդ ըլլալը չի բուհեր կազմակերպուած ազգի մը յատուկ արտայայտութիւնը տալու համար: Ունինք հայրենիք մը, ուր պետութիւն մը կայ, սակայն ներկայ իրականութիւնը ասին է, որ այդ պետութիւնը ի վիճակի չէ իրբն ազգ մեզ ներկայացնելու:

Յետոյ՝

Գրականութիւն ըրած ժամանակ, մեր արտին խօսածը չէ, որ պէտք է նկատի ունենանք իրբն բացարձակ արժէք ու ներկայացնենք միջազգային հրապարակին: Պէտք է քայլ մը անդին անցնինք ու մշտնջէ մարդկայինին: Եւ ապա պէտք է նկատի առնել հրապարակի զգասանջը: Երբ զրահան երկ մը իր մեւը առած է ու հանրութեան կը մատուցուի, զայն այլեւս պէտք է նկատի առնել իրբն ծախու ապրանք: Այստեղ արդէն արտաքին մեւը եւ մատուցման եղանակը կը զսանան կարեւոր ազգակներ, օտար շուկաները նուաճելու համար: Մի գայթակղիք այս կարծիքներէն: Վաւերի կ'ընէր:— «Բանաստեղծութեան մէջ Բագին»-ը զեղեցկութիւնը գոյութիւն ունի իմ եւ բանաստեղծութեան մէջ, մտացեալը լուկայի սպրանք է, լուկայի միւս բոլոր ապրանքներուն պէս եւ հետեւարար պէտք է ներթարկուի միեւնոյն ինտմքին...»

Միջազգային գրականութիւնէն մեր բացակայութեան միւս պատճառը Թերեւս ասին իրողութիւնն է, որ մենք՝ Հայերս, հակառակ բացարձակ ժողովուրդ մը ըլլալու մեր արգար հանգամանքին, զաշուած ենք մեր պատեանին մէջ ու ապրած պատմութեան լուսանցքին վրայ: Ժամանակն է, որ հրապարակ գանք ու քայլ պահենք ուրիշ ժողովուրդներու հետ:

Ներկայ դարուն, գրական ժառանգության հիմնական արտայայտիչը վեպն է: Բանաստեղծությունը ներկայիս կորոնացած է մաս մը իր արժեքին: Իսկ մենք սակայն կը շարունակենք ասանաւոր դրել, որ բանաստեղծութիւնը չէ անշուշտ: Թերեւս պէտք է բանաստեղծութիւնը տալ արժանի, արժանի մէջ, ուն տանն վերաբերուի կարելի պիտի ըլլայ ներկայացնել մեր գրականութիւնը միջազգային հրատարակին:

Յակոբ Օշական կ'ըսէր, - ՎՄՅճ մեր իւրով ստեղծութիւնք: Իսկ ես կ'ըսեմ. պէտք է դադարել տապալակել մեր իւրին մէջ ու տապալակել բոլորին տապալակած իւրին մէջ, եւ երբ այրինք, մեր ճիշտ լսելի դատնայ մեր մօտ, մեզի հետ տապալակողն ալ:

Մենք տեսար կը փորձենք Հայուն սիրտը յուզել, բայց երբեք չենք փորձեր հասկնալ թէ ի՞նչ է այդ սիրտը, ի՞նչ է հայու հոգին:

Միւս կողմէ՛ անհրաժեշտ է հետեւել արեւտի ժամանակակից պահանջներուն ու շարժանքներուն, տեսնել թէ ի՞նչ է փնտրուածը, սպասուածը: Ներկայիս լաւ ու զեղեցիկ ըլլալու կարելիութիւնը բռնաւ եւ անսովոր հարցերուն մէջ կը պարփակուի: Բունն ու անսովոր եղող հարցերն ու երեւոյթներն են, որ կը շահագրգռեն գրականութիւնը, կը փնտրուին գրականութեան միջազգային հրատարակին վրայ:

Միայ չհասկնանք: Անսովոր արտաոյցը չէ: Անսովորը առօրեան է, ամենամոտեմը, որ սակայն կը դիտուի անսովոր անկիւնէ մը եւ կը ներկայացուի անսովոր կերպով:

Պիտի հարցուի, թէ այդ պայմանները լրացող եւ միջազգային հրատարակին ներկայացուելու արժանի՝ գրական նմոյշներ բնա՞ւ չունինք: Ունինք, ի հարկէ: Բայց հոս ալ բացասական դեր կը խաղայ ընտրելու մեր տկարութիւնը: Բացարձակապէս ճախարհ ենք, երբ կը փորձենք մեր գրականութիւնը Թարգմանաբար ներկայացնել ստորինում: Ընտրութեան ժամանակ միշտ նկատի կ'ունենանք մեզի հանդիս, մեզ հետադրորդը, բայց երբեք չենք հարցնիր, թէ ի՞նչը հանգի պիտի ըլլար, օրինակ, հարգանք ընթերցողին:

Հիմնաւորելու համար խօսքս յիշեմ պարզապէս մը: Էջօրօքն ձախակողմեան գրական ամսագիրը բացատրիկ թիւ մը նուիրեց հայ բանաստեղծութեան: Կտորներուն ընտրութիւնը կատարեցին Երեւանի մէջ եւ ներկայացուցին

այն նմոյշները, որ հանելի էր երեւանցիներուն եւ քիս չմտածեցին, թէ ի՞նչը կրնար հանելի ըլլալ Ֆրանսացիներուն: Արդիւնքին մասին տակուրդ է խօսիլ:

Ուրիշ օրինակ մը: Դերեկի Դեմիտրեանի Վարդանանքը Թարգմանուեցաւ Ֆրանսերէնէ: Վարդանանքը մեր ազգային հետադրորդութիւնը կրնայ գոհացնել, ասոր կ'ստանալ չունիմ, սակայն Վարդանանքը վեպ մը չէ: Մինչդեռ, կարելի էր նոյն Դեմիտրեանի պատմաւածածներուն մէջ գտնել ախպիսի յանդած կարներ, որոնք մեծապէս պիտի զնահատուէին եւրոպացիներուն կողմէ:

Մնաց որ, մեր պարզան տարբեր է թէ մը: Գրագէտ մը մեծարժէք գործեր տալու եւ տուեալ գրականութիւնը բացարձակ որակով մը օժտելու համար՝ անհրաժեշտ է, որ անիկ հասնի իր աւարտին: Մինչդեռ, մենք միշտ մընայինք անաւարտ, ճիշդ մեր պատմութեան պէս: Կը եշտակէ, թէ յանցաւորը բոլորովին մենք չենք, թէ մը մեր պատմութիւնն է, բայց կամքի ուժով կրնանք եւ պէ՛տք է յաղթենք պատմութեան:

Արուեստն է միայն, որ կրնայ ըմբարտութեան կնիքը բերել մեզի եւ հիմարութիւնը կու գայ հողիին խորունկ խաւերէն: Հողիին այդ խորունկ խաւերը պէտք է մաս առ մաս արուին իւրաքանչիւր գործի մէջ եւ աստիճանաբար արուի ամբողջական ծարուղ:

Հայ ըլլալ եւ չկարենալ ծարուղ ըլլալ: Անա մեր տոսմը...

Ի՞նչ կրնանք ընել այս պայմաններուն մէջ: Քաջութեամբ ու աւելի ճշգրտօրէն պէտք է մօտենանք գրականութեան միջազգային շարժանքներուն եւ ասոր համար, ամէնէն առաջ, պէտք է առաւել եւս մշակենք մենք զմեզ:

Ձ. Որբունիի գեկուցումէն ետք, գրոյցը շարունակուեցաւ հետեւեալ հարց-պատասխաններուն շուրջ.-

- Ինչու կ'ուզէ մեր գրականութիւնը հրատման աշխարհին: Ի՞նչ նպատակով:

Որպէսզի դարս վանք մեր մեկուսացումէն եւ մեծաւու մեր կարելիութիւնները տեղեկենք:

Միւս կողմէ, եթէ մեր գրապէսները միջազգային ճանաչում ձեռք բերեն, մեր ազգային նպատակները հետագնդելու ճամբան մեծապէս զիւրացած կ'ըլլայ:

- Ինչո՞ւ անպայման պիտի ձգտիմք իրոպոպական գրականութիւններում հասնիլ: Ինչո՞ւ պիտի փորձենք պիտակ դնել գրականութեանց: Մատուցուած գործին մէջ պետք է ճշդիմք գրականութիւն կա՞յ, թէ չկայ: Մնացեալը հետախնդրական չէ: Ինչո՞ւ ստանդարտի շուկայով:


Այնչափ հիմնականը գրականութեան ներկայութիւնն է, զրական արժէքին գոյութիւնը: Եւրոպական գրականութիւն ըսելով ստորակայութեան զգացում մը չէ որ կ'արտայայտենք, այլ կը փնտենք միջազգային ծանօթացման հասնելու ճամբաները: Իսկ երբ շուկայ կ'ըսենք, բառը բնաւ չենք արտասաներ նիւթական տառամով, այլ կանգ կ'առնենք անոր վրայ՝ գրականութիւնը արժէքաբերելու եւ ծանօթացնելու հա-

ժար: Երբ կ'ըսենք չուկայ շունիք, ըսել կ'ուզենք կազմակերպուած չենք: Մենք հասցէ չունինք: Մենք պահածը պետական գիմապիծն է: Ատոր պէտք է ձգտինք ամենէն առաջ, պէտք է կազմակերպուինք: Այն ատեն կը գիւրանայ դործը:

Ջրոջին աւարտէն առաջ, յայտնուեցաւ նաեւ հեռանկալ կարծիքը:

- Կայ հաւանաբար Ջ. Որրուսիի մտածուելած պատճառներէն տարբեր պատճառ մը, որ մեր գրականութիւնը հետու կը պահէ միջազգային մակարդակէն: Ու ատիկա խորացումի, անկեղծութեան եւ քաղութեան պահան է: Գրականութեան մէջ ըստուած խոսքերէն շատ աւելի արժէքաւոր են շրջուած խոսքերը, որոնք ընթացողին աչքերուն գիմաց կենսք կ'առնեն, երբ գրապէսը սազանդ ունի եւ պէտք եղած աշխատանքը տարած է իր գործին մէջ: Անհրաժեշտ է նաեւ քաղութիւնը, ըսելու եւ գրելու համար ներքին աշխարհին մէջ խլրտող բաներ, որոնք հեղինակի անմին համար նպատաւոր կրնան չըլլալ, սակայն գրականութեան բերելիք իր մէնէն հարազատ բաժինը կրնան ըլլալ:





ՀԱՅ ԼԵՋՈՒՆՆԻՆ՝ 38-ԲԴ...

Ֆրանսայի Գիտությունների Ակադեմիան ՅՈՒՆԵՍԿՕ-ին կազմակերպել է ցամաքային աշխարհի մեջ մերկանալիս խոսուող լեզուներում:

Այդ ցանկում կը պարզուի, որ ամբողջ մարտի 27-ինը այսօր կը խօսի 2796 զանազան լեզուներ, որոնց մեջ հայ լեզուն ունի իր պատկանելի տեղը:

Ֆրանսահայ Ակադեմիան այդ 2796 լեզուները դասակարգած է ժանանակների զինով և առաջին տեղը տուած լինարեհին, զոր կը խօսին աւելի մեծ քիւով մարդիկ: 38-րդ տեղը տուած է հայերեհին, զոր կը խօսին 4-էն 4-ուկէս միլիոն մարդիկ:

Գնահակամ գիծով՝ 2756 լեզուներ - ունան ցեղեր, ժողովուրդներ և ուրիշ - մեզմէ ետ կու գան:

Ակադեմիան եթէ իր դասակարգումը կատարէր ման առաջին գիծով՝ ապա՝ մեր Մեծամասնը, իր հարուստ բառարանով, ճիշտ բառակերպումով ու քերականակամ իր գրայինի և անքերի կառոյցով՝ հաւանաբար պիտի բռնէր շատ աւելի առաջնագում տեղ մը:

Խորհրդային Միութեան աւելի քան 190 ցեղերու, ժողովուրդներու և ազգերու մեծ ընտանիքի մէջ, հնագոյնները երկուսն են, - հայը և վրացին: Եւ անտարակոյս՝ մայի հայը և ապա՝ վրացին:

Մեր ճակատագրի մէջ, քերեւս դառնագոյնը այն չէ, որ հայածական ճիշտ, ազատ չնմէ, անփոփոխած չնմէ հայրենիքի մէջ: Գառնագոյնը այն է, որ հայուն ամենօր կը մնայ... հայը, որ հայը չի մանկար իմզինէ, անտեղեկ է իր պատմութեան, իր փառապատիւ տեղեւոյի, զոր կերտած և իր քառասունհինգ մեզի ճգած է մեր արի, հոգեով հոր և համարեղ ցեղը:

«ՄԵՍՐՈՊԵԱՆ» ՆԱԽԱԳԹԱՐԱՆԻ ՎԵՐԱԲՈՅՄԱՆ ՀԱՆԳԷՍ

Հաս Անճելուի Ս. Եւալ եկեղեցւոյ «Մեհարոպեան» Նախադրեարան և Երկրորդական վարժարանի վերաբացման առթիւ ունեցած հանդէսին ներկայ եղած են՝ կրթական, կուսակցական և բարեփոխական հասարակութիւններու, Հ. Յ. Դ. կոմիտէներու, Հ. Օ. Միութեան ներկայացուցիչները, երեսիկ ուղղայիններ և Երեսիկներ:

Սոսք տուած են՝ Գալիֆորնիոյ Առաջնորդական փոխանորդ Հոգի, Տ. Սմբատ Մ. վրդ. Լափանճեան և անորէն Պր. Քարգոս Փոստանճեան:

Ներկաները խոստացած են բարոյապէս և ներթափանցաբար կանգնել կրթական այս նորարարական յարկին:

ՌՈՅԻ ԱՐՄԷՆ

Ֆրանսահայ շնորհալի երգչուհի Ռոզի Արմէն (Յովհաննէսեան), վերջերս, Գոչարալիս շնորհալիքեան մօտ ճայնագրած է հայկական ժողովրդական երկու երգեր, զիկալարարեանը խմբավար Ֆրանսուա Ռուպրի: Ֆրանսագրած երգերէն առաջինը Արամ Խաչատուրեանի «Երեսն» երգն է, իսկ երկրորդը՝ Արա Պարթեւեանի «Պիւլիպիլ»:

Ֆրանսահայ երգչուհին Օգոստոս 23-ին երգած է Քեհրանի մէջ, 24-էն 28 Լեհաստանի Սորոտի ծրգի փառատօնին, որպէս Ֆրանսայի մերկայացուցչուհին:

Մեկտեմբեր 11-ին, Ռոզի Արմէն երգած է վեմտանի երկուրդին՝ ժիլպեր Պեհայի հետ:

Հոկտեմբեր 6-ին, երգած է Օլիմպիայի մէջ, ժող Պրէլի հետ:

Նոյեմբեր 1-էն 15 համերգային շրջագրուայ մը պիտի կատարէ Մարտի մէջ:

Յառաջիկայ փետրուարին իր մասնակցութեան պիտի բերէ ֆրանսական ֆիլմի ճը, խաղընկեր ունեւայով՝ ժամ Մորոն և Անաէր: Ֆիլմի բեմադրիչը պիտի ըլլայ՝ Ռէյ վանքուրա:

«ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ԿՈՄԻՏԷ»

Հայկական Մշակույթը Եւրոպայի Ծանօթացնելու Համար, Փարիզի մէջ մեծ աշխատանք կը տանի երկուստարգ մտաւորական Ժեռար Մթեֆանեակու, որ վերջերս յաջողած է, հայ մտաւորականներու մասնակցութեամբ կազմել «Պատկերասփիւղի եւ ձայնասփիւղի» Վերսալի Մեքսիկոյ Կոմիտէ» մը:

Կոմիտէն, որ դրուած է Մոնաքոյի հայասէր Եղիշեանի «Գերազանցաւ Ռեւիի» համալսարանի մասնաճիւղին տակ, առաջադրած է յայտագրելներու պատրաստութեամբ եւ այլ մեծ օժանդակութեամբ զայնչափ Քրեմսկոյ պատկերասփիւղի եւ ձայնասփիւղի հայկական հանրագումարները:

ԱՄՆ ԵՌՎԱՆՆԵՍԻ «ՊԻՍԱՏՈՍ» ՕՓԵՐԱՆ

Յունիս 26-ին, փոքրատյան Գոյէմիս մէջ տեղի ունեցած է ամերիկացի մասնակցակից հռչակագրու երաժշտ Ալամ Յուլիանի «Պիսատոս» օփերային ներկայացումը, զիկայարարութեամբ՝ Յոյնիսիս երաժշտիկ: Արդիակամ յօրինումով, խորհրդապաշտակամ ըմբռնումով գրուած այս օփերամ, աշխարհի մէջ առաջին անգամ ըլլալով ներկայացուած է:

ԲԵՄԱՂՐԻՉ - ԴԵՐԱՍԱՆ
ԳՐԻԳՈՐ ՄԵԼԻՔԵԱՆ

Բեմադրիչ - զերասան Գրիգոր Մելիքեան Գերիլիի զետական թատրոններու յայտնի զերասաններէն է եւ Շիլլերի անունը կրող թատրոնին ղեկավար զերակաւարներէն: Ունի թատերախումբ մը, որ արդիական ըմբռնումով ներկայացումներ կը սարքէ:

Այնչափ է յազմաթիւ երկերներ, իսպանիոյ, Ջոնիքերիոյ եւ Աւստրիոյ մէջ եւ թատրոնի կամ պատկերասփիւղի համար ներկայացումներ տուած է եւ արժանացած արուեստաւէր լաթի հասարակութեան զնահատանքին: Հակառակ օտար լըրանակի մէջ ապրած

ըլլալուն, զառ մնացած է իր մէջ հայու զգացումը եւ ժողովուրդի հետաքրքրուած է հայ կեանքով ու մշակույթով:

Վերջերս, հայերէնի մասնաւոր դասեր տուած է եւ սորված նաեւ զբնի ու կարգաշար:

Իր թատերական կեանքին մէջ եղած է լըրան մը, երբ զերման թատրոնի կարեւոր ղեկավար ուզած են կարճ եւ զերմանսցիներուն համար ղերիլն արտասանելի անուն մը գտնել իրեն:

Հայ արուեստագէտը ընտրած է Եան Մելիք անունը, որ խորապէս կը ցոլացնէ ճշմարիտ հայու իր հոգին:

Գրիգոր Մելիքեան վերջերս փայլուն խաղարկութիւն մը ունեցած է Մայակովսկիի «Մըլուկը» թատերախաղին մէջ:

Առաջին անգամ ըլլալով բեմադրած է նաեւ աստրիացի Պրից Հոլմիթըրի «Փոխապահանք» թատերախաղը, որ կը պատկերացնէ Բ. Ալիարճամարտին Գերմանիոյ մէջ տիրող հոգեբանական վիճակ մը: Գրիգոր Մելիքեան մեծապէս զնահատուած է նաեւ իրրեւ արուեստագէտ բեմադրիչ:

ՕՐԳԱՆԱՆ ԲԵՆԻԱՄԻՆ ՊՈՂԱՆԵԱՆ


Վերջերս, Մարտիիայ Արուստի Ալիպեմիայի երաժշտութեամ առաջին մրցանակը ստացած է երգահան Բեմիամին Պոլանեան:

Բ. Պոլանեան ծնած է 1934-ին: Չորս տարի ուսանելի է ետէ, 1962-ին ստացած է Մարտիիոյ երաժշտանցի առաջին մրցանակը Ոմրդաշնակութեան (աւմոնի):

1964-ից եւ 1965-ին, յաջորդաբար ստացած է առաջին մրցանակները քոմպոզիտորի եւ Ֆիլակի:

1965-ի վերջերս ընդունուած է Փարիզի Ազգային երաժշտանոցը, ուսումնասիրելու համար Քոմպոզիտորի եւ ճառագի ղիկալարութիւն:

Փայլուն ազգայ մը խոստացող հայ արուեստագէտին ցարդ յօրինած երկերն են՝ «Մողմուտ 28» եւ «Երբ Ծննդեան» երկերն ձայնարու համար, յարային նուագարաններու լեռանակ մը, այլիւ եղանակներ՝ ջութակի, դաշնակի եւ ճութիմէրի համար:



ՎԱԳԻՆԻ ՖՕՆՏԻՆ

Մեր ամսաքերթի բարեկամներին՝ Ղազար Իմինեան 50 տարեկան կը նուիրէ «Բագին»ի ֆունտին:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱԾ ԵՆՔ

«Ահա ես, ճանկերս լայն բացած», (խորհրդածութիւններ), Ե. Նարդուճի, Փարիզ, 1966

«Զրոյց» (Գ. Հասոր), Կ. Փոլստեան, Պէյրութ, 1966

«Պրիսմակ» (քերթուածներ), Ե. Պարտուեան, Պէյրութ, 1966

«Յովակիմի թռուները» (պատմութիւններ), Ա. Գաղանճեան, Պէյրութ, 1966

«Կեանքի համար» (պատմութիւններ), Ա. Գաղանճեան, Պէյրութ, 1966

«Յուշարձան» (խորհրդածութիւններ), թարգմ. Ար. Խաչատրեան, Թեհրան, 1966

«Ետերդաժութիւններ Հայաստանի գրողներու Ե. Համազումարի սեմին», Պեկո Սիմոնեան, Պէյրութ, 1966

«Նաւասարդ 66», (պարբերապիշք գրականութեան), խմբագիր՝ Գ. Շահինեան, Պէյրութ, 1966

«Բժշկապետը» (կատակերգութիւն երկու արար), Գ. Սազեան, Պէյրութ, 1966

«Ետեր Յիսմամեայի աւարտին», Գ. Անարոնեան, Պէյրութ, 1966

«Ճարան հալիլ Ճարան», Ս. Յ. Վարժապետեան, Պէյրութ, 1966

Տեղի անձնութեան պատճառով մեր յաջորդ թիւին վերապահեցիմք գիրքերու եւ նշաններու բաժինը:

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ԼԻԲԱՆԱՆ 20 Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԵՍԱՀՄԱՆ 7 ՏՈՂԱՐ
ՀԱՏԱՎԱՃԱՌ 2 Լ. ՈՍԿԻ



Վարչութեան հասցէ.—

G. SASSOUNI

Rue Sélim Boustani, Beyrouth-Liban